

Հայկական Սփիւռքի Հանրային Կարծիքը (1)

Հայկական Սփիւռքի Հարցախոյզ | 2019

Collage of portraits (2019) by the students of Colegio Armenio de Vicente Lopez (Argentina)



Հայկական Սփիւոքի Հանրային Կարծիքը (1)

Հայկական Սփիւոքի Հարցախոյզ | 2019

Հրաչ Զիլինկիրեան
Խմբագիր

Հայկական Հիմնարկ
Լոնտոն

Armenian Diaspora Survey
Armenian Institute
67-74 Saffron Hill
London EC1N 8QX
United Kingdom

Էլ-նամակ՝ info@armeniandiasporasurvey.com
Կայքէջ՝ www.armeniandiasporasurvey.com

Copyright © 2020 Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւն
և Հայ Հիմնարկ (Լոնտոն)

Logo և նկարներ՝ Հրաչ Չիլինկիրեան
Էջ 70-ի նկարը՝ Արմինէ Ոսկանեան

Կողքի նկարը՝ գործն է Colegio Armenio de Vicente Lopez
(Արժանթին) դպրոցի աշակերտներուն:

ISBN 978-1-9161334-5-7

Այս գրքոյկը կարելի ներբեռնել՝
www.armeniandiasporasurvey.com

Հայկական Սփիւռքի Հարցախոյզը

Հայկական Սփիւռքի Հարցախոյզը (ՀՄՀ) աշխարհի տարբեր երկիրներու հայկական համայնքներուն հանրային կարծիքը ուսումնասիրող գիտահետազոտական աշխատանք մըն է:

ՀՄՀ-ի նպատակն է ներկայացնել այն հարցերը, դիրքորոշումները եւ հակումները որոնք կը բնորոշեն 21րդ դարու հայկական աշխարհը: Հետազոտութեան ամբողջական արդիւնքները [հասանելի են](#) հանրութեան եւ գիտաշխատողներու, ինչպէս նաեւ համայնքային ղեկավարներու եւ հանրային քաղաքականութիւն ճշդողներու:

ՀՄՀ-ը կը գործէ Լոնտոնի Հայկական Հիմնարկի հովանաւորութեամբ եւ Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան նիւթական աջակցութեամբ:

Երախտագիտության խօսք

Այս քան 100 անձեր ՀՄՀ 2019-ի յաջողության նպաստեցին: Բոլորին երախտապարտ ենք այս ծրագրի կազմակերպության, հետազոտության եւ դաշտային ուսումնասիրության ի նպաստ իրենց բերած ներդրումին եւ աշխատանքին համար:

Ակադեմական Խորհրդատու Ցանձնախումբ | Հայկ Կիզաբեկյան, Արմինե Իշխանեան, Ռեպեկա Ճինքա, Սոսի Գասպարեան, Ճոն Նուխ, Ռազմիկ Փանոսեան, Սուսան Փաթի, Վահե Սահակեան, Հրաչ Չիլինկիրեան, Խաչիկ Թեօլէլեան: ՀՄՀ պաշտօնակիցներ՝ Գագիկ Ստեփան-Սարգիսեան, Արփինե Աղճոյեան, Անիքա Մայատեան, Փրքժիա Պապեան-Թէլլըր

Արժանքին | *տեղական աշխատակիցներ*՝ Ալեքսիս Փափագեան, Լուսիլա Թոսունեան: *Տեղական խորհրդատու յանձնախումբ*՝ Խաչիկ Տէր Ղուկասեան (ատենապետ), Նելիտա Պուլղոյրճեան (աւագ խորհրդատու), Խուան Փալլո Արդինեան, Ֆլորենս Տէմիրճեան, Ալեքս Հաճեան, Միկէլ Միքէլ Յարութիւնեան, Պրենտա Քէչեան, Լուսիլա Մինասեան, Մարթին Ապրազեան, Լէո Սոմճեան, Խուան Մանուէլ Փերալդա Սաֆարեան, Նիքոլաս Սապունճեան, Խուան Գարլոս Տախտակեան:

Լիբանան | *տեղական աշխատակիցներ*՝ Արեւ Փափագեան, Նանոր Գարակէօզեան: *Տեղական խորհրդատու յանձնախումբ*՝ Փոլ Հայտոսդեան (ատենապետ), Անդրանիկ Տաթևեան, Մալքի Ճունտուրեան, Շադիկ Հուտավերտեան, Յակոբ Գոյումճեան, Գայանէ Մաճունեան, Մերոբ Օհանեան, Եղիա Թաճեան, Լուսի Դաւիթեան, Արմէն Իրնէշլեան: *Կամաւորներ*՝ Մարիա Գլարա Ահմարանի, Մինաս Ադամեան, Մանէ Պասամճեան, Արագ Պուչագճեան, Ռազմիկ Տէրունեան, Արի Կարպուշեան, Դալար Հայտոսդեան, Գէլ Հարմանտեան, Ալիսիա Իշխանեան, Արագ Գալայճեան, Արաքս Խոշեան, Ռիթա Գրիգորեան Կարապետեան, Մարին Ներսէս, Լիանա Փափագեան, Քրիս Բրուտեան, Յովիկ Թիթիւնճեան:

Մոնթրէալ | *տեղական աշխատակիցներ*՝ Ռաֆֆի Երեցեան, Լալէ Մանճիկեան: *Տեղական խորհրդատու յանձնախումբ*՝ Նայիրի Թալեան (ատենապետ), Միմա Աբրահամեան, Վիգէն Ադոբեան, Այտա Պուճիքանեան, Դալիա Էչիթեան, Վահագն Քարազաշեան, Ռոզի Քիւֆթեճեան, Նարոտ Օտապաշեան: *Կամաւորներ*՝ Մոնիա Պրատուման, Նորա Զուլճեան, Կարօ Տէր Եղիայեան, Նիքոլա Տեժարտէն, Թալիա Էչիթեան, Անտրոյ Կարապետ, Յակոբ Գարշանեան, Վանա Քերիմեան, Թալար Քուշակճեան, Թամար Մաթիկ, Նայիրի Մուրատեան, Լիզ Շահինեան, Արամ Շուճուրեան, Անն Շուճուրեան

Ռումանիա | *տեղական աշխատակիցներ*՝ Արսէն Արզումանեան, Արմինե Ոսկանեան: *Տեղական խորհրդատուներ*՝ Գերշ. Տ. Տաթև Եպս. Յակոբեան (Թեմակալ Առաջնորդ), Վարուժան Ոսկանեան (Նախագահ, Ռումանահայ Միութեան), Վարուժան Բամպուքճեան (Երեսփոխան), Վահէ Յովակիմեան, Հրանդ Ճաղինեան, Պելլա Մուրատեան, Սիրուն Թէրզեան:

Հարցարանի թարգմանութիւն | *Արաբերէն*՝ Նուրա Ամիքա, Նուրա Անուար Մուպրա: *Արեւելահայերէն*՝ Լեւոն Աբրահամեան, Եուլիա Անթոնեան: *Ֆրանսերէն*՝ Նայիրի Խանճեան, Էլիան Ճենտրոն: *Ռումաներէն*՝ Ալինա Տրոն, Էվա Ստանէսքու: *Սլոներէն*՝ Մարիանա Ասմիլեան, Կրիթա Գալայճեան: *Արեւմտահայերէն*՝ Վարդան Մաթեոսեան, Վարուժան Թէմպէլեան:

Բովանդակություն

Հայկական Մփիւոքի Հարցախոյզը	1
Երախտագիտութեան խօսք	2
Նախարան Ռազմիկ Փանոսեան	5
Ներածական Հրաչ Չիլինկիրեան	7
1. Ինքնութիւն Վահէ Սահակեան	13
2. Կրօն, Եկեղեցի, Հոգեւորութիւն Հրաչ Չիլինկիրեան	21
3. Լեզու եւ մշակոյթ Վահէ Սահակեան	29
4. Համայնք եւ քաղաքական կեանք Սօսի Գասպարեան	35
5. Հայրենի երկիր Մփիւոք, Հայաստան Հայրենիք Հրաչ Չիլինկիրեան	45
6. Բացակայող հարցումը 2018-ի ուսումնասիրութեան մէջ Սիւզան Փաթի	53
7. Ուսումնասիրութեան Մեթոտաբանութիւնը Հայկ Կիւզալեան	57
8. Հարցախոյզի արդիւնքները	67
Յանելուած: Հարցարանը	143

Նախաբան

2018-ին յաջող փորձառական փուլին ետք, Գալուստ Կիլպենկեան Հիմնարկությունը որոշեց լրացուցիչ երեք տարի եւս սատարել հայկական սփյուռքի հետազոտութեան ծրագրին՝ որպէս էական նախագիծ մը: Լոնտոնի Հայ Հիմնարկի տնօրինութեամբ եւ դոկտոր Հրաչ Չիլինկիրեանի ղեկավարութեամբ կատարուող «Հայկական Սփիւռքի Հարցախոյզ»ը (ՀՄՀ) շատ շօշափելի եւ գործնական կարեւորութիւն ունի ծրագրային քաղաքականութիւն մշակելու համար: Ուսումնասիրութիւնը մեզի պատկերացում մը կու տայ հայկական սփիւռքի մասին, անոր որոշ առանձնայատկութիւնները կը յայտնաբերէ և որոշ հարցերու շուրջ սփիւռքի մտածողութիւնը կը քարտէզէ:

Սփիւռքներ ուսումնասիրելը բաւական դժուար գործ է: Սփիւռք մը, ըստ սահմանումի, կապուած չէ տարածքի մը. անոր կազմը բաւական հեղուկ է, եւ «ներկայացուցչական» նմուշ մը գոյացնելը բաւական լուրջ մարտահրաւեր է: Ուրախ ենք, որ մասնագէտներու փոքր խումբի մը ջանքերով և տեղական համայնքներու նշանակալի մասնակցութեամբ, 2019-ին հետազոտութիւն կատարուեցաւ չորս երկիրներու մէջ՝ Արժանթին, Գանատա, Լիբանան և Ռումանիա եւ շուրջ 50 հարցերու պատասխանները վերլուծութեան ենթարկուցան: Արդիւնքը այս գիրքն է և անոր առընթեր կայքէջը:

Մեզի յաճախ կը հարցնեն. «Ինչո՞ւ Կիլպենկեան Հիմնարկութիւնը այս նախագիծը կը ֆինանսատրէ»: Պատասխանը պարզ է. որպէսզի մենք բոլորս աւելի լաւ հասկնանք հայկական սփիւռքը: Աւելին, ՀՄՀ-ն բաւական ընդարձակ գիտելիքներ կը տրամադրէ սփիւռքի հիմնական խնդիրներով հետաքրքրուող հետազոտողներուն: Նոյնքան կարևոր, այս ուսումնասիրութիւնը ապացոյցներու վրայ հիմնուած տեղեկութիւններ կը տրամադրէ Սփիւռքի, ինչպէս նաեւ Հայաստանի ղեկավարներու եւ որոշումներ կայացնող անձանց:

Առիթէն օգտուելով՝ անգամ մը եւս շնորհակալութիւն կը յայտնում այս ծրագրի ղեկավարներուն, արդիւնքները վերլուծողներուն, գիտական խորհրդատուական յանձնախումբին, եւ մանաւանդ տեղական բոլոր հետազոտողներուն եւ խորհրդատուական խումբերուն, որոնք կարելի դարձուցին 2019 թուականի հայկական սփիւռքի հետազոտութիւնը:

Ռազմիկ Փանոսեան
Տնօրէն, Հայկական Համայնքներու Բաժանմունք
Գալուստ Կիլպենկեան Հիմնարկութիւն, Լիզպոն



MUZEUL ZAMBACCIAN
4,5 Km

ARMENOPOLIS (GHERLA)
490 Km

ORASUL ANI
2159 Km

BOY
442 Km

MUNTELE ARARAT
2300 Km

MANASTIREA HAGIGADAN
429 Km

HANUL LUI MANUC
500 m

BISERICA APOSTOL
SF. TADEU
2317 Km

SITUL ARHEOLOGIC
QARAHUNJ
2529 Km

MUZEUL GENOCIDULUI
"TSITSERNAGABERT"
2253 Km

INSTITUTUL DE MANUSCRISE
"MADENATARAN"
2256 Km

TEMPLUL GARNI
2505 Km

CUMPAR RABILE
FARA ITP
GABRIELIAN RADICEP

OPEN 11:00-18:00

Ներածական

«Ինձի համար հայ ըլլալը package է: ... Ես կը կարծեմ որ որոշումի հետ կապ ունի: Երբ որ որոշած ես որ դուն հայ պիտի ըլլաս, վերջացաւ, հայ ես»:

Հրաչ Չիլինկիրեան

Ինչ կը նշանակէ 21-րդ դարուն Սփիւռքի մէջ ապրիլ եւ հայ ըլլալ: Ինչպէ՞ս կ'ընկալուի եւ կը սահմանուի հայ ինքնութիւնը: Ինչո՞ւ կարեւոր է սերունդներ շարունակ պահպանել լեզուն և մշակոյթը: Եւ ինչպէս Լիբանան ապրող երիտասարդ մը (16-30 տարիքային խումբէն) կը նշէ վերը մեջբերուած տողերուն մէջ՝ հայ ըլլալը «փաթեթ» է, որ կ'ընդգրկէ տարբեր բաներ տարբեր սփիւռքահայերու համար: Հայկական Սփիւռքի Հարցախոյզը (ՀՄՀ) փորձ մըն է ուսումնասիրելու աշխարհի տարբեր քաղաքներու մէջ ապրող հայերու կարծիքները եւ նպատակ ունի սերտելու 21-րդ դարուն հայ ըլլալու «բաղկացուցիչ մասերը»:

Հայկական Սփիւռքի Հարցախոյզը (ՀՄՀ) սկսաւ փորձառական նախաձեռնութեամբ մը՝ 2018 Մայիս եւ Յունիս ամիսներուն, չորս համայնքներու մէջ՝ Պոսթըն, Գահիրէ, Մարսէյ եւ Փասատենա:(1) Փորձառական յաջող հանգրուանէն ետք, որուն ընթացքին կարելի եղաւ շատ բան տորվիլ եւ ներառնել հարցախոյզին ընթացիկ մեթոտաբանութիւններուն մէջ, 2019-ի հարցախոյզը՝ առաջինը եռամեայ ուսումնասիրական ծրագիրի մը, սկիզբ առաւ չորս այլ համայնքներու մէջ՝ Արժանթին, Լիբանան, Մոնթրէալ (Գանատա) եւ Ռումանիա: Դաշտային ուսումնասիրութիւնները տեղի ունեցան 2019-ի Սեպտեմբերէն Դեկտեմբերի միջեւ, այդ ընթացքին 3000 հայեր իրենց մասնակցութիւնը բերին հարցախոյզին:

Հարցախոյզը հիմնականօրէն բաղկացած էր քանակական եւ լրացուցիչ որակական հետազոտութիւններէ: 2019-ի հարցախոյզին համար նախատեսուած հարցարանը ունէր 50 հարցում, առաւել՝ մինչեւ 5 յաւելեալ հարցումներ, որոնք կը վերաբերէին՝ տուեալ երկրի մը որոշակի մէկ համայնքին: Հարցարանին անգլերէն բնօրինակը՝ հետազոտութեան հիմնական գործիքը, թարգմանուեցաւ 6 լեզուներու (արեւմտահայերէն եւ արեւելահայերէն, սպաներէն, ռումաներէն, ֆրանսերէն եւ արաբերէն)՝ դաշտային ուսումնասիրութեան ընթացքին լեզուական կարիքները բաւարարելու նպատակով: Հարցարանին կողքին, տեղական հետազոտողներ կատարեցին 116 որակական հարցազրոյցներ:

Բարձր որակի եւ գիտական չափանիշներու ապահովման համար մշակուեցաւ եւ կիրարկուեցաւ հետազոտութեան կոտ մեթոտաբանութիւն մը (տե՛ս Գլուխ 7): Պատրաստուեցաւ եւ գործադրուեցաւ դաշտային ուսումնասիրութեան աշխատանքները կազմակերպող եւ գործողութեանց ընթացքը դասաւորող համապարփակ ուղեցոյց մը՝ նկատի ունենալով սփիւռքի ուսումնասիրութեան առնչուող խնդիրները:



Դաշտային աշխատանքներու կազմակերպում եւ իրականացում

Հետազոտութեան յաջողութիւնը հիմնականօրէն կապուած է համայնքներու անդամներուն եւ, յատկապէս, համայնքի ղեկավարութեան «ծրագիրը իրենցը նկատելու» կեցուածքին հետ: Այս մէկը կ'իրականանար ՀՄՀ-ի տնօրէնին իրաքանչիւր համայնք կատարած այցելութեան եւ իրաքանչիւր երկրի մէջ ծաւալուն հանդիպումներու եւ ուսումնասիրութեան գործնական դաշտային աշխատանքներու:

նախապատրաստության միջոցով: Գործնական աշխատանքները կազմակերպելու համար կ'օգտագործուեր եռեակ ռազմավարություն մը. 1) Յառաջացնել ՀՄՀ-ի հետ աշխատող եւ գիտաշխատողներէ ու մասնագէտներէ բաղկացած տեղական խորհրդատու մարմին մը. 2) Հանդիպում համայնքային բոլոր կազմակերպութիւններուն եւ հաստատութիւններուն հետ. ա) ծրագիրը ներկայացնելու անոնց. բ) ապահովելու անոնց աջակցութիւնն ու համագործակցութիւնը՝ օգնելու ՀՄՀ-ին տարածելու լուրը՝ խրախուսելով բոլոր հայերուն մասնակցութիւնը. գ) հանդիպումներ հաւանական կամաւորներու (երիտասարդ մասնագէտներ, համալսարանականներ, լրատուամիջոցներ եւ այլն), որոնք կ'օժանդակեն հետազօտութեան ընթացքին: Զգալի ժամանակ եւ ճիգ թափուեցաւ համայնքային հաստատութիւններու գրեթէ ամբողջական համագործակցութիւնը ապահովելու համար: Փաստօրէն տուեալ երկրի մը համայնքային բոլոր կազմակերպութիւնները, ներառեալ եկեղեցիներու եւ սփիւոքի երեք քաղաքական կուսակցութիւններու ներկայացուցիչները, ամբողջութեամբ զօրավիզ կանգնեցան հետազօտական ծրագրին եւ նպաստեցին իրենց համայնքներուն մէջ հարցախոյզին յաջողութեան. 3) Իրաքանչիւր երկրի մէջ յառաջացած հետազօտական տեղական անձնակազմը աշխատանքները տարաւ ՀՄՀ-ի կեդրոնական մարմնի հսկողութեան ներքեւ եւ Ակադեմիական Խորհրդատու Յանձնախումբին աջակցութեամբ: Տեղական հետազօտողները բաղկացած էին հարցախոյզի ղեկավարէ մը եւ որակական հետազօտողէ մը:

Այս հրատարակութեան մէջ ներկայացուած ուսումնասիրութեան արդիւնքները շահեկան պատկերացումներ կու տան սփիւոքեան հանրային կարծիքին մասին: Հարցախոյզը նաեւ լուսարձակի տակ կ'առնէ շարք մը հարցերու մասին սփիւոքի համայնքներուն մէջ առկայ կեցուածքները: Անիկա կը հրամցնէ փաստերու վրայ հիմնուած գիտելիքներ ընդհանուր առմամբ հանրութեան եւ շահեկան տուեալներ մասնատրաբար համայնքի ղեկավարներուն, գործիչներուն եւ հանրային քաղաքականութիւն մշակող անձերուն՝ աւելի լաւ ըմբռնելու եւ վերլուծելու իրենց համայնքները, ինչպէս նաեւ՝ բարգաւաճման ծրագիրներու եւ նախագիծերու մշակման համար:

Հիմնական յայտնաբերումներու ամփոփումը

- Ինքնութիւնը մեծապէս կը սահմանուի գուգորդուած (hyphenated) հայկականութեան միջոցով (լիբանանա-հայ, արժանթինա-հայ, Գանատա-հայ, ռումանա-հայ), ուր ընտանիքը, լեզուն եւ մշակոյթը հայ ինքնութեան որոշիչ բաղկացուցիչներն են:
- Քրիստոնէութիւնը եւ Հայ եկեղեցին հայկականութեան կարեւոր երեսները կը հանդիսանան, բայց կրօնի առնչութեամբ կան այլազան ընկալումներ եւ աւելի նրբանկատ տեսակէտներ հոգեւորութեան վերաբերեալ:
- Հայ լեզուն եւ մշակոյթը հայ ըլլալու եւ համայնքային կեանքի էատարրերը կը ներկայացնեն, եւ բարձրորակ հայկական կրթութեան պահանջը մեծ է:
- Տեսլապաշտ ղեկավարութեան եւ մշակութային ու կրթական գործունէութեան աւելի մեծ պահանջ կը զգացուի համայնքային կեանքին մէջ:

- Հայաստանը, իբրև անկախ պետություն եւ երկիր, ինքնութեան կարելոր աղբիւր է սփիւոքին համար:
- Հարցախոյզին մասնակցողներուն աւելի քան 55% -ը (52% երբ նկատի առնենք իւրաքանչիւր համայնքի թուային տարբերութիւնը) ունին բարձրագոյն կրթութիւն, չորս երկիրներուն պարագային՝ հետեւողականօրէն աւելի բարձր, քան իւրաքանչիւր երկրի միջին բնակչութիւնը:
- Հարցախոյզին մասնակցողներուն աւելի քան քառորդը (28% երբ չորս երկիրները առնենք իբրև համահասար մասնակից, 25% երբ նկատի առնենք իւրաքանչիւր համայնքի թուային տարբերութիւնը) գործատեր կամ իրենց հաշույն աշխատողներ են, 53%-ը ամսականով կամ շաբթականով աշխատողներ (նոյնը՝ երբ նկատի առնենք իւրաքանչիւր համայնքի թուային տարբերութիւնը), 5%-ը տան ծառայող ծնողներ կամ խնամատարներ եւ 13%-ը՝ լիաժամ զբաղած են ուսումով (16% երբ նկատի առնենք իւրաքանչիւր համայնքի թուային տարբերութիւնը):

Երախտագիտութեան խօսք

Օգտուելով այս առիթէն, կ'ուզեմ իմ խորին երախտագիտութիւնս յայտնել բոլոր անոնց, որոնք իրենց ներդրումը ունեցան այս ծրագրին յաջողութեան մէջ: Աւելի քան 100 հոգի իրենց մասնակցութիւնը բերին այս ծրագրին իրականացման աշխատանքներուն սկսեալ Ակադեմական Խորհրդատու Մարմնի անդամներէն, մինչեւ խորհրդատու տեղական մարմինները, տեղական հետազօտողները, կամաւորները եւ թարգմանիչները: Բոլորին անունները նշուած են «Երախտագիտութիւններու» ցանկին մէջ:

Շնորհակալութեան յատուկ խօսք՝ հետախուզութեան տեղական վարիչներուն եւ որակական հարցազրոյցներ կատարողներուն, որոնք ամբողջ սրտով ստանձնեցին հետախուզական այս ծրագիրը եւ նշանակալից ներդրումներ ունեցան անոր իրականացման մէջ՝ Արսէն Արզումանեանին, Նանոր Գարակէօզեանին, Լալէ Մանճիկեանին, Ալէքսիս Փափագեանին, Արեւ Փափագեանին, Լիւսիլա Թոսունեանին, Արմինէ Ոսկանեանին եւ Բաֆֆի Երեցեանին: Շնորհակալութեան յատուկ խօսք նաեւ՝ տեղական խորհրդատու մարմիններուն եւ անոնց ատենապետներուն՝ իրենց ղեկավարութեան եւ արժէքաւոր առաջնորդութեան համար՝ Խաչիկ Տէր Ղուկասեանին, Վերապատուելի Փօլ Հայտոսթեանին, Նայիրի Թալեանին: Մեծ շնորհակալութիւն Տաթև Էպսկ. Յակոբեանին՝ իր ամողջական աջակցութեան եւ տրամադրած դիրութիւններուն համար, Վարուժան Ոսկանեանին եւ Վարուժան Փամբուկչեանին՝ Ռումանիոյ մէջ իրենց ցուցաբերած աջակցութեան եւ համագործակցութեան համար: Կարգ մը անձեր կարելոր դեր ունեցան այս ծրագրին մէջ, յատկապէս Հայկական Սփիւոքի Հարցախոյզի (ՀՄՀ) կեդրոնական ղեկավարութիւնը, ինչպէս՝ մեր հետազօտական մեթոդներու խորհրդատուն՝ Հայկ Կիւզալեանը, վիճակագրական թուային տուեալներու գիտնական Արփինէ Աղոյեանը եւ թուային աղիւսակներ պատրաստող Անիքա Սայատեանը, Ռազմիկ Փանոսեանը, Սիւզան Փաթին եւ Գագիկ Ստեփան-Սարգիսեանը իրենց հիմնական խորհուրդներով մաս կազմեցին կեդրոնական ղեկավարութեան: Յատուկ շնորհակալութիւն Վարուժան Թէմպէլեանին, որ բժախնդրօրէն ՀՄՀ-ի հարցարանը եւ այս տեղեկագրութեան առաջին բաժինը

արեւմտահայերէնի վերածեց, ինչպէս նաեւ Մաթիաս Ռոմերոյին, որ հարցախոյզի արդիւնքներու աղիւսակներուն արեւմտահայերէն տարբերակը պատրաստեց:

Խորապէս շնորհակալ եմ այս իսկապէս խմբային աշխատանքին ի նպաստ կատարուած բոլոր ներդրումներուն համար:

Հրաչ Չիլինկիրեան
Հայկական Մփիւռքի Հարցախոյզի (ՀՄՀ) Տնօրէն

¹ Տե՛ս 2018-ի փորձառական հարցախոյզին տեղեկագիրը՝ <https://www.armeniandiasporasurvey.com/2018>:



1 | Ինքնություն

Ընտանիքը, լեզուն եւ մշակույթը՝ էատարրերը երկպատկան հայկականության

Վահե Սահակեան

Սփիւռքեան ինքնութիւնները սովորաբար կը ներկայացուին իբրեւ անկայուն, փոփոխական, պարագայական, միշտ կայանալու ընթացքի մէջ գտնուող, անընդհատ սակարկուող, եւ մնայուն կառուցման ու վերակառուցման գործընթաց ապրող վիճակներով: Այս բոլորը կը բացայայտուին 2019-ին Արժանիքի, Գանատայի, Լիբանանի եւ Ռումանիոյ մէջ կատարուած հարցախոյզին արդիւնքներուն հիմամբ: Թէեւ սեռը եւ տարիքը միայն թեթեւ կերպով կ'ազդէին տարբեր կարելիութեանց ընտրութեան վրայ, սակայն տուեալ երկիրը ժամանելու թուականը եւ սերունդներու ներկայութիւնը, ամբողջովին նախատեսելի, կարելոր գործօններ էին ինքնորոշումներուն մէջ:

Սփիւռքեան ինքնորոշումներ

Պատասխանողներուն մօտ մէկ երրորդը ինքզինք կը համարէ բացառապէս «հայ» (29%): Ինչպէս որ նախատեսելի էր, համեմատութիւնը աւելի բարձր էր գաղթական (առաջին) սերունդին մէջ (անոնք, որոնք հեռացած էին երկրէ մը եւ բնակութիւն հաստատած այժմու երկրին մէջ), ուր կէսէն աւելին (54%) ինքզինք կը ներկայացնէ իբրեւ «հայ»: Ի հակադրութիւն, երրորդ սերունդին (գաղթական սերունդին թոռները) միայն 17%-ը ինքզինք կը ներկայացնէ իբրեւ «հայ»:


Ընդհանուր առմամբ, հարցումներուն պատասխանողներէն մեծ թիւ մը՝ 6-էն 10-ը (61%), իրենք զիրենք կ'ընդունին իբրեւ երկպատկան հայեր:

- 24% -ը շեշտը կը դնէ իր հայկական ծագումին վրայ (օրինակ՝ հայ-արժանիքիցի), քիչ մը աւելի համեմատութեամբ 55+ տարիքային խումբի պարագային (27%):
- 23% -ը կ'ընդունի իր հայկական արմատները (օրինակ՝ հայկական ծագումով Գանատացի); քիչ մը աւելի համեմատութեամբ 25-34 տարեկան երիտասարդներու պարագային (29%):
- 14% -ը շեշտը կը դնէ իր ծննդավայր երկրին վրայ (օրինակ՝ լիբանանահայ, ռումանահայ):

Միայն 3% -ը իր ինքնությունը բացառապես կը նույնացնէ իր ծննդեան/բնակութեան երկրին հետ (օրինակ արժանթինցի կամ լիբանանցի), քիչ մը աւելի համեմատութեամբ երիտասարդ սերունդին պարագային (5%): Քանի մը պատասխանող ինքզինք կ'անուանէ «Կէս Հայ» (2%), «Ընտրութեամբ Հայ» (2% -էն պակաս) եւ "Այլ" (3%):

Բաղդատած 2018-ի փորձառական հարցախոյզին հետ, որ տեղի ունեցաւ Պոսթընի, Գահիրէի, Փասատենայի եւ Մարսէլի մէջ, այս արդիւնքները բաւական կը պահեն իրենց հետեւողականութիւնը. 2018-ի հարցախոյզին մէջ նաեւ, տարբեր սերունդներու առկայութիւնը գլխաւոր գործօնն էր երբ հարցը կը վերաբերէր պատասխանողներու ինքնութեան ճշդումին: Եթէ գաղթական սերունդին 77% -ը ինքզինք կը ներկայացնէր իբրեւ «Հայ» եւ 15% -ը իբրեւ երկպատկան հայ (օր.՝ «ամերիկա-հայ» կամ «եգիպտա/ֆրանսա-հայ»), երրորդ սերունդին պարագային միայն 19% -ը կը ներկայանար իբրեւ «Հայ», մինչդէռ 39% -ը ինքզինք կ'որակէր իբրեւ «Հայ-Ամերիկացի» (կամ Հայ-Ֆրանսացի/Եգիպտացի), իսկ 35% -ը իբրեւ «Հայկական ծագումով Ամերիկացի (Եգիպտացի/Ֆրանսացի)»:

ՉԱՐՑՈՒՄ 1. Զետեւեալներէն ո՞ր մէկը լաւագոյնս կը նկարագրէ ինչպէս կը բնութագրէք դուք ձեզ: Զաճեցէք միայն մէկ պատասխան ընտրել:



Ամբողջովին նախատեսելի, այս հակումը կը հաստատէ սփիւոքահայ ինքնութեան խառնասերումը (hybridization) տասնամեակներու եւ երկար ժամանակի ընթացքին: Սփիւոքի մէջ ծնած սերունդները իրենց բազմադիմի պատկանելիութիւնները շարունակաբար կը բանակցին իրենց բնակած երկիրներուն, իրենց ժառանգած մշակոյթին, ինչպէս նաեւ՝ համասփիւոքեան տարածքին եւ տարբեր այլ վայրերուն: Ինքնութիւնները չեն սահմանափակուիր միայն ժառանգուած մշակոյթին եւ բնակութեան երկրի մշակոյթին միջեւ ստեղծուած երկուութեամբ: Այս կապակցութեամբ, կարելոր է արձանագրել, որ հայկական ճանապարհորդութիւնները կ'ընդգրկեն ոչ միայն նախա եւ յետեղասպանութեան հայկական հայրենիքներէն գաղթի պատմական ալիքները, այլեւ՝ Միջին Արեւելքի երկրներէն դէպի Եւրոպա, Ամերիկաներ եւ Աւստրալիա հոսքերը: Մինչ 2018-ի եւ 2019-ի հարցախոյզերը կու տան խառն պատկեր մը ինքնութիւններու վերաբերեալ, յառաջիկայ ուսումնասիրութիւնները կրնան յաւելեալ լոյս սփռել, թէ արդէ՞ ք հայ գաղթականներու եւ Միջին Արեւելքէն անոնց շառաւիղներու ինքնութիւնը նոյնպէս ձեւաւորուած է այն երկիրներու

մշակոյթներով, (Լիբանան, Պաղեստին, Սուրիա, Թուրքիա կամ այլ), գորս ձգեցին, նախքան նոր բնակութիւն հաստատելը Եւրոպայի, Ամերիկաներուն կամ Աւստրալիոյ մէջ:

Երկրի մը պայմանները, ըստ երեւոյթին, իրենց ազդեցութիւնը ունին պատասխանողներու կողմէ բազմադիմի պատկանելիութիւններու առաջնահերթ-ութեանց շարքը ճշդելու հարցին մէջ: Լիբանանի մէջ, հարցապնդումներուն մեծ մասը ինքզինք կը ներկայացնէ իբրեւ «հայ-լիբանանցի», այսինքն՝ առաջ «հայ», յետոյ՝ «լիբանանցի» (40%), 22%-ը ինքզինք կը նկատէ «լիբանանա-հայ», այսինքն՝ առաջ «լիբանանցի», ապա «հայ»: Միայն 18%-ը ինքզինք կը բնութագրէ իբրեւ բացառապէս «հայ», իսկ այլ 13%-ը՝ «հայկական ծագումով լիբանանցի»:

Մոնրէալի մէջ, մեծամասնութիւնը ինքզինք կը ներկայացնէ իբրեւ «հայ» (45%) (հաւանաբար մեծամասնութեամբ նոր գաղթածներ են), 28%-ը ինքզինք կը նկատէ «հայ-գանատացի», 12%-ը՝ «հայկական ծագումով գանատացի» եւ 9%-ը՝ «գանատահայ»: Արժանթինի մէջ, պատասխանողներուն մեծ մասը ինքզինք կը ներկայացնէ իբրեւ «հայկական ծագումով արժանթինցի» (45%) եւ գրեթէ հաւասար չափով «հայ» (15%), «արժանթինահայ» (13%) եւ «հայ-արժանթինցի» (12%): Շուրջ 7%-ը ինքզինք կը նկատէ պարզապէս «արժանթինցի»: Ռումանիոյ մէջ, հարցախոյզին մասնակցողներուն մեծ մասը ինքզինք կ'անուանէ «հայ» (32%), 20%-ը՝ «ռումանահայ», 16%-ը՝ «հայկական ծագումով ռումանացի», 13%-ը՝ «հայ-ռումանացի» եւ 4%-ը՝ «ռումանացի»:


Որակական հարցազրոյցները յաւելեալ խորք կու տան քանակական տուեալներուն, եւ աւելի եւս կը վկայեն սփիւռքեան ինքնութիւններու բարդութիւններուն մասին: Յատկանշական է, որ այս չորս երկիրներուն մէջ հարցազրոյցները կատարուած են հինգ լեզուներով՝ հայերէն (արեւմտահայերէն եւ արեւելահայերէն), անգլերէն, ֆրանսերէն, ռումաներէն եւ սպաներէն: Բազմաթիւ պարագաներու, զրուցատունները յաճախ կ'օգտագործեն խառն լեզուներ: Այս իմաստով, շատ տեղին է մէջբերում մը Լիբանանի մէջ հայու մը հետ կատարուած հարցազրոյցին: Այս պարագային, պատասխանողը լեզուն կը փոխէ արեւմտահայերէնի եւ անգլերէնի միջեւ, երբ կը խօսի իր ինքնութիւններուն մասին իբրեւ հայ եւ իբրեւ լիբանանցի: Մէջբերումին անգլերէն մասերուն հայերէն թարգմանութիւնները շեղագրուած են:

«Ես կը զգամ լիբանանցի, այո, *պարզապէս* որովհետեւ հոս մեծցեր եմ, շրջանակս հոս է: Այդ հայերէն չեմ որ լիբանանցի չեմ: ...Բայց միշտ ամէնուն որ ինքզինքս կը ներկայացնեմ, *ես լիբանանա-հայ եմ*՝ կ'ըսեմ: *Բայց հայ ըլլալը իմ ազգային ծագումս է... Լիբանանը յստակորէն իմ տունս է: Բնծի համար միշտ տուն է»...*

Այս փորձին զուգահեռ, կան նաեւ Լիբանան ծնած հայերու այլ փորձառութիւններ, ուր անոնք չեն ներկայանար իբրեւ լիբանանցիներ: Կայ պարագայ մը, ուր Լիբանան ծնած հայ մը, որ ի վերջոյ բնակութիւն հաստատած է Գանատայի մէջ, անգլերէնով կ'ըսէ. «Ես հիմնականօրէն գանատացի եմ, որովհետեւ կը գնահատեմ մեզի տրուած բոլոր պատեհութիւնները՝ հասնելու մեր երազներուն:... Ես լիբանանացի չեմ, ես թե՛ գանատացի եմ, թե՛ հայ»:

Այս մեջբերումները հազիւ կը ներկայացնեն որակական հարցազրոյցներու ճամբով հաւաքուած հարուստ տուեալները: Բայց անոնք ցոյց կու տան քանի մը օրինակ հայկական սփիւռքեան ինքնութիւններու իսկական բարդութիւններէն:

ՀԱՐՑՈՒՄ 2. Ի՞նչ միջոցներով կը սահմանէք ձեր հայկական ինքնութիւնը: Հաճեցէք ընտրել առաւելագոյնը երեք միջոց՝ կարելորագոյնները ըստ ձեզի:





Հայ ինքնութեան տարրերու սահմանում

Հարցախոյզին մէջ քանի մը հարցումներ կը վերաբերէին հայկական ինքնութեան սահմանումի ձեւերուն: Լաւագոյն երեք ընտրութիւններն էին ընտանիքը, լեզուն եւ մշակոյթը: Բոլոր պատասխաններուն 68%-ը իր հայկական ինքնութիւնը կը սահմանէ ընտանիքի միջոցով, ամենէն բարձր համեմատութիւնները Լիբանանի (77%) եւ Ռումանիոյ (74%) մէջ, 59%-ը՝ հայ լեզուով, առաւելաբար Մոնրէալի մէջ (80%), եւ 46%-ը հայ մշակոյթի միջոցով (ճաշ, պար, երաժշտութիւն եւ այլն): Այս տուեալները գրեթէ հաւասարապէս կարելոր են բոլոր երկիրներուն մէջ: Այլ կարելոր չափանիշներ, որոնց միջոցով հարցապնդուողները կը սահմանէին իրենց հայկական ինքնութիւնը, կ'ընդգրկեն. «ըլլալ գործունէայ հայ համայնքին մէջ» (27%), «ցեղասպանութիւնը» (25%), աւելի նուազ Ռումանիոյ մէջ (ընդամենը 10%); «Տի.էն.էյ/արիւն /ծիւղային յատկութիւններ» (24%), քիչ մը աւելի՝ Արժանքինի (36%) եւ Ռումանիոյ մէջ (29%), «քրիստոնէական ժառանգութիւն եւ համոզումներ» (23%), եւ «հայոց պատմութեամբ հպարտանալ» (23%):

Կարգ մը հարցումներ կ'առնչուէին նոյն քաղաքէն եկած հայերու նկատմամբ կապուածութեան զգացողութեան: Թէ՛ 2018-ի եւ թէ՛ 2019-ի հարցախոյզերուն մէջ, պատասխանողներուն մեծամասնութիւնը ունի հայ ընկերներ, որոնք յաճախ եկած էին նոյն շրջանէն ինչպէս պատասխանողները: 2019-ի հարցախոյզին մասնակիցներուն գրեթէ կէսը (44%) եւ 2018-ի հարցախոյզին մէջ՝ 42%-ը կը նշեն, որ իրենց ընկերներուն մեծ մասը հայ է: 2019-ի հարցախոյզին մէջ, մասնակցողներուն 20%-ը կը նշէ, որ իր ընկերներուն միայն կէսը հայ է, իսկ 6%-ը շատ հայ ընկեր չունի: Հարցապնդուածներուն փոքր մասը միայն բացառապէս հայ ընկերներ ունի. 2019-ի հարցախոյզին՝ 8%-ը եւ 2018-ի հարցախոյզին՝ 10%-ը: Կանխատեսելիօրէն այս թիւերը կը տարուբերին երկրէ երկիր: Մոնրէալի եւ Լիբանանի մէջ, յաջորդաբար պատասխանողներուն 55% եւ 62%-ը

կը նշեն, որ իրենց ընկերներուն մեծ մասը հայ է: Արժանթինի եւ Ռումանիոյ մէջ, նոյն պատասխանը կու տան մասնակցողներուն միայն 29%-ը եւ 15%-ը: Փոխարէնը, 15%-ը Արժանթինի եւ 4%-ը Ռումանիոյ մէջ կ'ըսեն, որ իրենք շատ հայ ընկերներ չունին: Այսուհանդերձ, կանխատեսելիօրէն, սերունդներու ներկայութիւնը կարեւոր ազդակ է: Մինչ գաղթական սերունդէն պատասխանողներուն 47%-ը կը նշէ, որ իրենց ընկերներուն մեծ մասը իրենց պէս եկած է նոյն շրջանէն ինչպէս իրենք, գաղթական սերունդի զաւակներուն միայն 31% -ը եւ թոռներու սերունդին միայն 26%-ը նոյն պատասխանը կու տան: Փոխարէնը, հարցապնդուածներուն 4%, 10% եւ 18% -ը, որոնք, յաջորդաբար կը ներկայացնեն առաջին (գաղթական), երկրորդ եւ երրորդ սերունդները, կ'ըսեն, որ իրենց ընկերներէն «ոչ մէկը» իրենց պէս նոյն արմատները ունի:



ՀԱՐՑՈՒՄ 3. Ձեր ընկերներուն մօտաւորապէս ո՞ր համեմատութիւնը հայ է:



Հայ ընկերներ ունեցողներուն մէջ, 32%-ը կը նշէ, որ անոնց մեծ մասը կու գայ իրենց նման նոյն շրջանէն, քիչ մը աւելի համեմատութեամբ Լիբանանի (42%) եւ Մոնրէալի մէջ (40%): Ընդհանուր առմամբ, քառորդը կ'ըսէ, որ իրենք շատ հայ ընկերներ չունին, քիչ մը աւելի Արժանթինի (29%) եւ Ռումանիոյ մէջ (33%), 14% -ը կ'ըսէ «շուրջ կէսը» եւ 14% «ոչ մէկ», քիչ մը աւելի Արժանթինի մէջ (25%): Հետաքրքրականօրէն, բոլոր հարցապնդուածներուն 8%-ը կ'ըսէ, որ իրենց ընկերներուն «բոլորը» հայ են: Սեռը եւ տարիքը կարծեք որեւէ հիմնական ազդեցութիւն չունին հայ եւ ոչ-հայ ընկերներ ունենալու հարցին վրայ:

Տարբեր սերունդներու մօտ նմանօրինակ միտում կը նկատուի նաեւ սիրային կապերու ընտրութեան մէջ: Այն հարցումին թէ «ձեր սիրային կապերը մօտաւորապէս ի՞նչ համեմատութեամբ եղած է եւ է հայերու հետ», պատասխանողներուն 25%-ը կ'ըսէ «բոլորը», շատ անելի գաղթական սերունդի պարագային (43%), 25%-ը կ'ըսէ «ոչ մէկը», քիչ մը անելի՝ երրորդ սերունդէն պատասխանողներուն պարագային (34%), 15% «ոչ շատ», ուրիշ 15% մը՝ «գրեթէ բոլորը» եւ 10% «շուրջ կէտը»: Մնացեալ 5%-ը կը նախընտրէ չպատասխանել այս հարցումին: Երրորդ սերունդէն պատասխանողներու պարագային՝ գաղթական առաջին սերունդին թոռները, միայն 19%-ը կը նշէ, որ իր սիրային կապերը եղած են կամ տակաւին հայերու հետ են, իսկ 34%-ը կ'ըսէ «ոչ մէկը»: Մեռը, կարծէք, քիչ ազդեցութիւն ունի ոչ հայու հետ սիրային կապեր ունենալու ընտրութեան վրայ: Հարցախոյզը ցոյց կու տայ, որ տղամարդիկ եւ կանայք հաւասարապէս միտում ունին սիրային կապեր ունենալու ոչ հայերու հետ. պատասխանող տղամարդոց 25%-ը եւ նոյնքանով կիներու 25%-ը կը մատնանշեն, որ իրենք սիրային կապեր չունին հայերու հետ:

ՉԱԲՑՈՒՄ 4. Գալով ձեր հայ ընկերներուն, անոնց ո՞ր համեմատութիւնը արմատներով ձեր շրջանէն է:



Ամփոփելու համար, բաւական կանխատեսելիօրէն, երկպատկան ինքնութիւնները մեծապէս տիրական են հարցախոյզին համար ընտրուած այս համայնքներուն մէջ: Այս բարդ ինքնութիւններուն մէջ, հայկական երեսը սովորաբար կը սահմանուի ընտանիք, լեզու եւ մշակոյթ եռեակով: Հայկականութիւնը ազդեցութիւն ունի նաեւ ընկերներու եւ սիրային կապերու ընտրութեան վրայ: Ժամանակի թաւալումը գաղթական սերունդի

Ժամանումեն ետք, կարելու ազդակ մը կը հանդիսանայ հայկական երկպատկան ինքնութիւններու զարգացման մէջ, որ իր կարգին կարծէք կ'ազդէ հայ ընկերներու եւ սիրային կապերու ընտրութեան վրայ:

Ինչպէս որ կ'երեւի հարցախոյզին մէջ, սփիւռքի հայերը իրենց ինքնութիւնները կը պատշաճեցնեն իրենց ապրած փորձառութեանց հետ: Կան բազմաթիւ ձեւեր ըլլալու, զգալու, մտածելու եւ գործելու հայկական միջավայրի եւ անկէ դուրս, տարբեր մշակոյթներու շրջագիծին մէջ եւ անոնցմէ անդին: Ինքնութիւնները եւ պատկանելիութիւնները կը զարգանան ժամանակի ընթացքին եւ փորձառութիւններու ճամբով, որոնք յաճախ կը գերազանցեն ցեղային, կրօնական, ազգային կամ այլ աշխարհագրական, հաստատութեանական, համայնքային կամ ընկերամշակութային ինքնութիւնութեան սահմանները:

Դոկտ. Վահէ Սահակեան Միջիկըն-Տիրպորն համալսարանի Հայագիտական Ուսումնասիրութեան Կեդրոնի գիտաշխատող է եւ Հայկական Սփիւռքի Հարցախոյզի Խորհրդատու Մարմնի անդամ:

LGBTQ+ | Հրաչ Զիլինկիրեան

2019-ի հարցախոյզին մէջ նոր հարցում մը աւելցած էր միասեռականութեան վերաբերեալ՝ այս կարելու թեմային շուրջ տեսակէտներ լսելու նպատակով: Հարցումին (տե՛ս Հարցում 36), թէ ո՞ր տեսակէտը աւելի մօտ է իրենց ըմբռումներուն, չորս համայնքներուն մէջ հարցապնդուածներուն գրեթէ կէսը (48%) կ'ըսէ՝ «հայ ինքնութիւնը կրնայ ընդգրկել նաեւ միասեռական ինքնութիւններ»: այս տեսակէտին կողմնակիցներու համեմատութիւնը աւելի բարձր է 16-24 տարիքային հատուածին մօտ, ինչպէս նաեւ՝ Արժանքինի մէջ (62%), բայց աւելի ցած՝ 55+ տարիքային հատուածին (36%) եւ Ռումանիոյ մէջ (22%): Միայն 17%-ը կ'ըսէ, որ «միասեռական ինքնութիւնը ներդաշնակ չէ հայ ինքնութեան հետ»: Ուրիշ 17% մը կ'ըսէ, որ «հաստատումներէն ոչ մէկը կ'արտայայտէ» իր տեսակէտները, իսկ մնացեալ 18%-ը «չի գիտեր» կամ «կարծիք չունի»:



2 | Կրօն, Եկեղեցի, Հոգեւորութիւն

Ընկալումներու այլազանութիւնը առիթ կու տայ աւելի նրբանկատ տեսակէտներու դրսեւորման հայկական քրիստոնէութեան եւ եկեղեցիին վերաբերեալ

Հրաչ Չիլինկիրեան

Դարերու ընթացքին քրիստոնէութիւնը հայ ինքնութեան մէկ կարեւոր արտայայտութիւնը եղած է եւ կը շարունակէ մնալ մինչեւ այսօր, ինչպէս կը հաստատեն Արժանթինի, Մոնրէալի, Լիբանանի եւ Ռումանիոյ մէջ կատարուած 2019-ի հարցախոյզին արդիւնքները: Կրօնի եւ ինքնութեան միջեւ առկայ օրկանական կապը հիմնականօրէն ձեւաւորուած է Հայ առաքելական եկեղեցոյ կողմէ, որուն պատմութիւնը կ'ընթանայ գուցահեռ հայոց պատմութեան հետ, ինչպէս արժանթինի մէջ արհեստավարժ կին մը (50+ տարիքային խումբէն), պիտի ըսէր իր հետ կատարուած որակական մէկ հարցազրոյցին ընթացքին՝ «եկեղեցին հայ ինքնութեան մէկ մասն է, անիկա ազգային եկեղեցին է»:

Հարցախոյզին մասնակցողներուն մեծամասնութիւնը կը պատկանի առաքելական եկեղեցիին, առնուազն անուանապէս: Աւելի փոքր տոկոսը կը պատկանի Հայ Կաթողիկէ եւ Հայ Աւետարանական եկեղեցիներուն: Այսուհանդերձ, յատկանշական է, որ մասնակցողներուն 13%-ը կը պնդէ, որ անաստուած կամ թերահաւտ է, իսկ 3%-ը կ'ըսէ, որ կրօնը կարեւոր չէ իրեն համար:

Ընդհանրապէս, բայց մանաւանդ քաղաքական եւ ընկերային վերիվայրումներու ժամանակ, Հայ Եկեղեցին գտնուած է ազգային կեանքի առաջին գիծին վրայ եւ ճակատագրական դեր խաղցած է իբրեւ պահապանը հայ կրօնական-մշակութային ժառանգութեան: Եկեղեցոյ դերակատարութեան այս տարբեր երեսներուն մասին կարծիքները տեղ գտած են մասնակիցներու պատասխաններուն մէջ: Այսուհանդերձ, մէկ կողմէ Հայաստանի անկախութիւնը, եւ միւս կողմէ միջազգային մակարդակի վրայ կրօնի դերին նահանջը, կարծէք սկսած են ընդհանրապէս կրօնի եւ մասնաւորաբար հայ եկեղեցոյ նկատմամբ ընկալումները փոխել:

Քրիստոնէութիւնը եւ եկեղեցին կ'ընկալուին աւելի իբրեւ ինքնութեան «մշակութային» երեսները, քան իբրեւ կրօնական յանձնառութիւն, ինչպէս Լիբանանի մէջ երիտասարդ արու (16-30 տարեկան) հարցազրուցատու մը կ'ակնարկէ՝ ըսելով, որ քրիստոնէութիւնը հայկական ինքնութեան կարեւոր մասն է, բայց պայման չէ որ հաւատքը ինքնութեան հետ կապուած ըլլայ. «այս օրերուն ընտրութեան հարց է»: Նոյն համայնքին մէջ այլ

տղամարդ (50+) կը նշէ, որ հայերը քրիստոնէայ կը նկատուին, «նոյնիսկ եթէ անոնք մկրտուած չեն»: Նմանապէս, Արժանքինի մէջ, միջին տարիքի կին (31-50 տարեկան) հարցազրուցատու մը կ'ըսէ, որ քրիստոնէայ ըլլալէն աւելի, իրեն համար Հայ առաքելական եկեղեցին կարելոր է մշակութային առումով՝ եկեղեցական ծեսերուն միջոցով, ինչպէս՝ մկրտութիւնը եւ պսակադրութիւնը: Այս տեսակետը արձագանգ կը գտնէ Մոնրէալէն կնոջ մը (31-50) պատասխանին մէջ: Հարցազրոյցին մէջ, ան իր քրիստոնէութիւնը կը սահմանէ իր ազգային պատկանելիութեան ճամբով. անիկա աւելի կապ ունի իր ազգային ինքնութեան, քան իր հաւատալիքներուն հետ: Խորքային հարցազրոյցները դիտել կու տան, որ մասնակիցներուն մեծ մասը եկեղեցի կը յաճախէ միայն տօնական օրերուն (օր.՝ Սուրբ Ծնունդ, Չատիկ), յատուկ առիթներով (մկրտութիւն, հարսանիք) եւ ոմանք ալ ընդհանրապէ չեն յաճախեր:

Հարցարանին մէկ այլ մասով երբ հարց կը տրուէր, թէ ի՞նչ տեսակի ձեռնարկներու կարիքը կը զգացուի իրենց համայնքին մէջ, միայն 14%-ին կարծիքով աւելի «եկեղեցական կամ կրօնական գործունէութեան» անհրաժեշտութիւնը կը զգացուի՝ տասներորդ դիրքը ամենէն աւելի պահանջուած կարիքներու ցանկին վրայ: Ցանկին առաջին դիրքը կը գրաւէ գրեթէ 42%-ով՝ «յաւելեալ դասախօսութիւններ պատմութեան եւ մշակոյթի մասին»:


Լիբանան կատարուած հարցազրոյցներէն մէկուն մէջ, զրուցատու կին մը (31-50) կը խօսի «հայկականութեան եւ քրիստոնէութեան» կապին մասին, եւ թէ ինչպէս ինք կը գնահատէ իր «հայկական քրիստոնէական սովորութիւնները»: Սակայն, ըստ իրեն լիբանանի միւս քրիստոնէաները (օրինակ՝ մարոնիները), ընդհանուր առմամբ, աւելի հաւատացեալ են, քան Լիբանանի հայերը: Ան այս մէկը կը վերագրէ հայկական դպրոցներուն մէջ կրօնական կրթութեան (եւ կիրառութեան) բացակայութեան: Ան կ'ըսէ, որ իր պատանի որդին, որ ոչ հայկական դպրոց կը յաճախէ, շատ աւելի հաւատացեալ է, եւ աւելի կը կիրարկէ քրիստոնէութիւնը, քան ինքը:

Քրիստոնէութիւն

Հարցումին, թէ «այսօր որքան կարելոր է քրիստոնէութիւնը հայ ինքնութեան համար», չորս համայնքներուն մէջ հարցապնդուածներուն շուրջ 80%-ը կ'ըսէ, որ անիկա «շատ/բաւական կարելոր է», քիչ մը աւելի Ռումանիոյ (95%) մէջ, քիչ մը աւելի՝ 55 եւ վեր տարեկաններուն մօտ (88%), բայց գրեթէ հաւասար տղամարդոց եւ կանանց պարագային (յաջորդաբար 79% եւ 80%): Միայն 10%-ը կ'ըսէ, որ «այդ մէկը շատ կարելոր չէ»: Մինչ ոմանք կը կարծեն, որ անձ մը կրնայ միաժամանակ հայ եւ անաստուած ըլլալ (29%) կամ հետելիլ այլ կրօններու, ինչպէս պուստիզմին (19%), իսլամութեան (17%) եւ մովսիսականութեան (15%), 33%-ը կ'ըսէ, որ «հայը կրնայ միայն քրիստոնէայ ըլլալ»: Այս էր պարագան նաեւ պատասխանողներու գրեթէ կէսին (47%) Լիբանանի մէջ, ուր երկրին քաղաքական կառոյցը հիմնուած է համայնքայնութեան վրայ: Այս հարցին շուրջ, տարիքի զարգացման հետ, կարծիքը կը դառնայ աւելի արմատական. 16-24 տարիքային խումբին պարագային «հայը կրնայ միայն քրիստոնէայ ըլլալ»ուն համեմատութիւնը 13% է, 25-34 խումբինը՝ 28%, 35-54 խումբինը՝ 35% եւ 55+ խումբին պարագային՝ 42%:

Պոսթընի, Գահիրեի, Փասատենայի եւ Մարսէյի մէջ կատարուած 2018-ի փորձառական հարցախոյզին ժամանակ, երբ առանձնաբար հարց տրուած էր, որ անձ մը կրնայ միաժամանակ իսլամ եւ հայ ըլլալ, 30%-ը ըսած էր «այո», 55%-ը՝ «ոչ», իսկ 16%-ը՝ կարծիք չունէր: Բայց պատասխանները կը սկսին տարբերիլ, երբ խօսքը կը վերաբերի «իսլամացուած հայերուն»: 2019-ի հետազօտութեան ընթացքին Մոնրէալի մէջ, այր (31-50) հարցազրուցատու մը կ'ըսէ, որ անձ մը կրնայ «բացարձակապէս» հայ եւ ոչ քրիստոնէայ ըլլալ: Ան կը նշէ, որ իր տեսակէտները ժամանակի ընթացքին զարգացած են: Այնթապի եւ Ուրֆայի մէջ իսլամացած հայերու հանդիպելէ ետք, ան «կը հասկնայ, որ կարելի է» միաժամանակ հայ եւ իսլամ ըլլալ: Լիբանանի մէկ այլ արու (16-30) հարցազրուցատու մը, մինչ նշելով, որ «քրիստոնէութիւնը եւ եկեղեցին կարելոր դեր խաղցած են ամբողջ հայոց պատմութեան ընթացքին», կը կարծէ, որ «այժմ [կրօնը] այնքան կարելոր գործօն չէ, որքան ինքնութեան այլ տարրերը, ինչպէս՝ լեզուն», եւ կու տայ համշէնահայերուն օրինակը, «որոնք կը ճանչցուին իբրեւ հայ եւ միաժամանակ իբրեւ իսլամ»:

ՀԱՐՑՈՒՄ 22. Ձեր կարծիքով, մէկը կրնա՞յ հայ ըլլալ եւ քրիստոնէութենէ զատ այլ հաւատքի հետեւորդ: Եթէ այո, ապա հաճեցէք ընտրել այն բոլորը, որ ձեր կարծիքով հայ մը կրնայ ըլլալ:



Հարցապնդուածները կարծէք աւելի նրբանկատ են քրիստոնէութեան եւ հայ ինքնութեան միջեւ առկայ կապին: Կան մեծ տարբերութեամբ ընկալումներ ու տեսակէտներ կրօնի վերաբերեալ: Մոնրէալի մէջ, հարցազրուցատու կին (31-50) մը կը կարծէ, որ «դժուար է» միաժամանակ հայ ըլլալ եւ ոչ քրիստոնէայ, «որովհետեւ կրօնը այդքան մեծ դեր կը խաղայ մեր մշակոյթին մէջ», այսուհանդերձ, ան կ'արտայայտէ այլ պատասխանողներու կողմէ դրսեւորուած այն հասարակաց տեսակէտը թէ՛ «անհիկա մեր մշակոյթը տեսնելու հնաձեւ ոճն է, որովհետեւ եթէ մենք մեր մշակոյթը կապենք կրօնին հետ, ապա անհիկա երբեք պիտի չի զարգանայ ամբողջականօրէն, փաստօրէն եկեղեցին չէ զարգացած»: Անոնք, որոնք աւելի ազատ եւ յառաջադէմ տեսակէտներ ունին, կը հաւատան, որ կարելի է հայ ըլլալ եւ պատկանիլ իրենց նախընտրած կրօնին:

Հոգեւոր կեանք


Վերջին տասնամեակներուն, եկեղեցիներու եւ կրօնական հաստատութիւններու պաշտօնական պատկանելիութիւնը նահանջ կ'արձանագրէ համաշխարհային մակարդակի վրայ, սակայն անհիկա չի դիտուիր իբրեւ անհրաժեշտօրէն «հոգեւորութեան»

եան» կամ «հոգեւոր կողմի» անկում անձի մը կեանքին մէջ: Մինչ մարդ կրնայ եկեղեցւոյ կամ կրօնի մը անդամ չըլլալ, սակայն ան տակաւին կրնայ հոգեւորութիւնը կամ «հաւատքը» կարելոր նկատել իր կեանքին մէջ:

Հարցախոյզը կ'ընդգրկէր հարցումներ, որոնք կը միտէին ուսումնասիրելու սփիւռքահայութեան հոգեւոր կեանքին անհատական հարթութիւնը: Հարցապնդուած անձերուն աւելի քան երկու երրորդը (69%) «այո» կը պատասխանէ, երբ հարց կը տրուի թէ «կը հաւատա՞ս Աստուծոյ»: Հաւատացեալներու տոկոսը շատ աւելի բարձր էր Ռումանիոյ մէջ (79%) եւ աւելի ցած՝ Արժանթինի մէջ (44%): Պատասխանողներէն այլ 15% մը չորս համայնքներուն մէջ կ'ըսէ. «ես կը հաւատամ հոգեւոր ուժի մը գոյութեան»: Սպասելիորէն, 7% -ը կ'ըսէ, որ «անաստուած» է, քիչ մը աւելի Արժանթինի մէջ (11%) եւ նուազագոյնը նախկին համայնավար Ռումանիոյ մէջ (2%), եւ 6% «թերահաւատ», քիչ մը աւելի Արժանթինի (8%) եւ Մոնրէալի մէջ (8%), բայց ոչ մէկը՝ Ռումանիոյ մէջ: Հետաքրքրական է, որ 3% -ը «ոչ մէկ կ'արծիք» ունի «Աստուծոյ հաւատալու» հարցին գծով:

Հարցումին, թէ իրենց համար «կրօնական կամ հոգեւոր կեանքը» որքանով կարելոր է, 35%-ը կ'ըսէ, որ «գործօն հոգեւոր կեանք ունի», կէսը Ռումանիոյ (50%) եւ նուազագոյնը Արժանթինի մէջ (23%): Բարձր տոկոս մը հարցախոյզի մասնակիցներէն (46%) կ'ըսէ, որ «գաղափարը կը սիրէ, բայց շատ գործունեայ չէ»: Իսկ 19%-ը կըսէ, թէ «ինձի համար կարելոր չէ»՝ մեծաւ մասամբ Արժանթինի (28%) եւ նուազագոյնը միւս երեք համայնքներուն մէջ (Մոնրէալ 17%, Լիբանան 14%, Ռումանիա 5%):

ՀԱՐՑՈՒՄ 20. Կրօնը կամ հոգեւոր կեանքը կարելո՞ր է ձեզի համար:




Դիտարկում մը որ կարելի է ընել այն է, թէ Արժանթինի հայերը նուազ կրօնասէր են, մինչդէռ Ռումանիոյ հայերը, կարծէք, աւելի մօտ են եկեղեցւոյ, ամնուազն իբրեւ ազգային կարելոր հաստատութիւն: Խորքային հարցազրոյցներու ընթացքին, Ռումանիոյ մէջ բազմաթիւ զրուցատուներ կ'արտայայտեն իրենց «հպարտութեան զգացումը»՝ պատկանելով «առաջին քրիստոնեայ ժողովուրդին», որ զիրենք կը կապէ իրենց ազգային ինքնութեան հետ: Սակայն, Արժանթինի մէջ զրուցուող կիին (16-30) մը, նշելով հանդերձ որ առաջին քրիստոնեայ ժողովուրդ ըլլալը հպարտութեան աղբիւր է, կ'ըսէ, որ ինք «քրիստոնեայ չէ ամէնօրեայ կեանքին մէջ»: Այս տրամադրութիւնը կը կիսեն նաեւ ուրիշներ որակական հարցազրոյցներուն մէջ: Լիբանանի մէջ կիին մը (50+)

կ'ըսէ. «հայ ըլլալու զգացումը աւելի զօրաւոր է, քան քրիստոնէական հաւատքը»: Մոնրէալի մէկ այլ զրուցատու կ'ին մը (31-50) կ'ըսէ. «ես կրօնասէր չեմ», բայց Հայաստան այցելութենէ մը վերադառնալէ ետք, ան կ'ունենայ «մարդաբանական եւ մշակութային կապուածութիւն մը եկեղեցիներուն, ճարտարապետութեան, երաժշտութեան, արմատներուն հետ, զորս հողը տուաւ մեզի»:

Եկեղեցի

Հայերու մէջ եկեղեցւոյ պատկանելիութիւնը աւելի յստակ տեսնելու համար կ'արժէ արձանագրել, որ 2011-ին կատարուած մարդահամարի պաշտօնական թիւերուն համաձայն, Հայաստանի Հանրապետութեան գրեթէ երեք միլիոն բնակչութեան ճնշող մեծամասնութիւնը, գէթ անուանապէս, կը յարի Հայ Առաքելական (93%), Հայ Կաթողիկէ (0,5%) եւ Հայ Աւետարանական (1%) եկեղեցիներուն.*

ՉԱՐՑՈՒՄ 18. Գետնէտալներէն որեւէ մէկուն կը պատկանի՞ք: Ընտրեցէք բոլոր յարմար պատասխանները



Չորս համայնքներուն մէջ պատասխանողներուն մեծամասնութիւնը, ինչպէս որ կը սպասուէր, կը նշէ, որ ինք կը պատկանի Հայ առաքելական եկեղեցւոյ (58%), որուն կը յաջորդէ Հայ կաթողիկէ եկեղեցին՝ 11%: Քիչ մը աւելի թիւով կաթողիկէ հայեր կան Լիբանանի (18%) եւ Գանատայի (13%) մէջ եւ աւելի նուազ՝ Արժանթինի (6%) եւ Ռումանիոյ մէջ (8%): Հայ աւետարանական եկեղեցիներ կը գրաւէ երրորդ դիրքը՝ ընդհանուր 7% անդամակցութեամբ: Լիբանանի մէջ այդ համեմատութիւնը կը հասնի 12%-ի, որովհետեւ աւետարանականները աւելի երկար պատմութիւն եւ աւելի խոր արմատներ ունին այդ երկրին մէջ, բայց Ռումանիոյ մէջ գրեթէ աւետարանական չկայ (0.2%):

Որակական հարցազրոյցները դիտել կու տան, որ առաքելական եկեղեցւոյ «անդամակցութիւնը» ընդհանրապէս անուանական բնոյթ ունի՝ աւելի իբրեւ «հայ ըլլալու» մէկ մասը, քան թէ եկեղեցական կեանքին մէջ գործօն մասնակցութիւն ունենալու արտայայտութիւն մը: «Ես առաքելական եմ թուողի վրայ», - կ'ըսէ Լիբանանի մէջ տղամարդ (16-30) հարցազրուցատու մը, նշելով՝ որ քրիստոնէութեան հանդէպ աւետարանական եւ առաքելական «մօտեցումները» իրարմէ տարբեր են: Մինչ «հայերուն 90-95 տոկոսը առաքելական է», - կը բացատրէ ան, «անոնք ոչ եկեղեցին

գիտեն, ոչ ալ քրիստոնեությունը, անոնք Աստուածաշունչ չեն կարդար. իսկ որոշ տեղեր, անոնք ծիծաղի առարկայ կը դարձնեն այս նիւթը... մեծ բաց մը կայ եկեղեցիին եւ ժողովուրդին միջեւ»: Ան կը նշէ, որ «աւետարանականները կը հասնին մարդոց» եւ ուշադրություն կը դարձնեն մարդոց կարիքներուն: «Այս է պահանջուածը այսօր»: Լիբանանի մէջ այլ կին (50+) հարցազրուցատու մը, որ աշխուժ գործունեություն ունի Առաքելական եկեղեցւոյ մէջ, կ'ըսէ, որ ««հոգեւոր կապ» կը զգայ աւետարանական եկեղեցւոյ հետ եւ «հայկական կապ»՝ առաքելական եկեղեցւոյ հետ»:

Ընդհանուր տեսակէտ է նաեւ այն, որ «հայկականությունը» եւ եկեղեցին ագուցուած են իրարու: Լիբանանի մէջ զրուցատու կին մը (50+) կ'ըսէ, «քրիստոնեությունը եւ հայ ըլլալը զիրար կ'ամբողջացնեն. Ինձի համար անոնք զիրար կը լրացնեն»: Հարցազրույցներուն մէջ շատեր կը խօսին, թէ ինչպէս իրենք առաքելական եկեղեցւոյ ծէսերը, շարականները եւ պատարագը կը գտնեն «սփոփիչ» եւ թէ ինչպէս անոնք «ազգային եկեղեցին» կը տարբերեն քրիստոնէական միւս եկեղեցիներէն: «Ես կ'երթամ նաեւ այլ եկեղեցիներ», - կ'ըսէ հարցազրուցատու կին մը Լիբանանի մէջ, «բայց ես չեմ տեսներ [հայկական եկեղեցւոյ] այդ խորհրդապաշտությունը անոնց խորաններուն, պատարագին կամ շարականներուն մէջ»: Առաքելական եկեղեցին ընդհանրապէս կը դիտուի իբրեւ պահողը հայկական «աւանդություններուն», ինչպէս է պարագան դասական լեզուին (գրաբար), Սուրբ Ծննդեան, Զատիկին եւ այլ տօներու կապուած ծէսերուն: Մոնրէալի մէջ այր (31-50) հարցազրուցատու մը լաւ օրինակ է. «ես շատ տեղեկություն չունիմ հայ եկեղեցւոյ մասին, բայց հպարտ եմ, որ Հայ Առաքելական եկեղեցւոյ անդամ եմ», կ'ըսէ ան՝ աւելցնելով, որ «ինքնութեան մաս կը կազմէ մկրտուիլ հայկական եկեղեցւոյ մէջ, ամուսնանալ հայկական եկեղեցւոյ մէջ, անիկա հայ ըլլալուն մաս կը կազմէ»:

Հայ եկեղեցին կարելոր դեր խաղցած է Ռումանիոյ մէջ, ի մասնաւորի հայապահպանման գործընթացին մէջ, մանաւանդ այն պատճառաւ, որ համայնավարական շրջանին գաղութը զրկուած եղած է համայնքային այլ հաստատություններէ: «Առանց եկեղեցիի, մենք այսօր հայկական համայնք չէինք ունենար», - կ'ըսէ այր (31-50) հարցազրուցատու մը: Համայնքէն այլ կին (50+) մը կը հաստատէ, որ «անկարելի էր երեւակայել ապրող հայ համայնք մը առանց եկեղեցիին»: Հայ եկեղեցին կը շարունակէ մնալ ինքնութիւն սահմանող կարելոր հաստատություն մը. «եթէ կորսնցնես եկեղեցին, դուն կը կորսնցնես ամէն ինչ», - կ'ըսէ այր (50+) զրուցատու մը Ռումանիոյ մէջ:

Հետաքրքրական է, որ համատեղ չորս երկիրներուն մէջ, 15%-ը կը նշէ, որ ինք որեւէ եկեղեցւոյ չի պատկանիր, քիչ մը աւելի Արժանթինի մէջ 26% եւ քիչ մը նուազ Գանատայի (11%), Լիբանանի (8%) եւ Ռումանիոյ մէջ (4%):



Լիբանանի մէջ զրուցատու կին մը (31-50 տարիքային խումբէն) կը նշէ, որ առաջին քրիստոնէայ ազգը ըլլալը ամէնէն կարելորը չէ հայ ըլլալու եւ իբրեւ հայ ապրելու համար: Պատճառներէն մէկը այն է, կ'ըսէ ան, որ ոչ երեխաները, ոչ ալ չափահասները կը հասկնան եկեղեցւոյ լեզուն՝ դասական հայերէնը: Եկեղեցւոյ հաստատութեանկան դերին վերաբերեալ ընկալումները կարծէք սկսած են փոխուիլ: Մոնրէալի մէջ, այր զրուցատու մը (16-30) այս տեսակէտը կ'արտայայտէ: Մինչ անցեալին եկեղեցին կ'ըլլար առաջին հաստատությունը, զոր հայերը պէտք էր կառուցէին իրենց համայնքին մէջ, ան կը կարծէ, որ այսօր անոնք հաւանաբար նախ համայնքային կնդրոն մը պիտի կառուցեն

և ոչ թե եկեղեցի: Մոնրեալի մեջ այլ կին մը (50+) կ'ըսէ. «Ինձի համար եկեղեցին աւելի հոգեւորութեան վայր է, քան կրօնի»:

Կիները եկեղեցւոյ մէջ

Վերջին տասնամեակներուն Հայ Եկեղեցւոյ մէջ կիներու դերակատարութեան հարցին շուրջ բանավեճը աշխուժացած է: Կղերական դասին մէջ կիներ ձեռնադրելու հարցը այժմեկան է, բայց եւ այնպէս հայկական իրականութեան մէջ բանավեճերու տեղիք տուած նիւթ մը, մասնաւորաբար կիներու սարկաւազութեան կարգ շնորհելու աւանդութեան վերականգնումի հարցը: Պատմականօրէն, Հայ Եկեղեցին ունեցած է ձեռնադրուած կին սարկաւազներ, հիմնականօրէն վանական կիներու շրջանակին մէջ: Այսուհանդերձ, այս ընկալեալ սովորութիւնը դադարած է 20-րդ դարու սկիզբէն սկսեալ, բացառաբար Պոլիսէն, եւ կը շարունակէ մնալ եկեղեցւոյ մէջ իբրեւ խիստ վիճելի հարց: Բանավեճը վերստին ծագեցաւ 2017-ին, երբ Թեհրանի հայոց առաջնորդը աշխարհական կին մը սարկաւազ ձեռնադրեց իր թեմէն ներս ծառայելու համար:

ՀԱՐՑՈՒՄ 21. Կիներուն առիթ պե՞տքէ տրուի հայ եկեղեցիներու մէջ ձեռնադրուելու:



Չորս երկիրներուն մէջ, հարցախոյզին մասնակցողներուն հարց տրուած էր, թե՛ արդէօք հայկական եկեղեցիներուն մէջ պե՞տք է կիներուն ձեռնադրուելու առիթ տրուի: Պատասխանողներուն գրեթէ կէսը (44%) կարծիք չունէր այս հարցին մասին, իսկ Ռումանիոյ մէջ 60%-ը: Պատասխանողներուն գրեթէ քառորդը (23%)՝ տղամարդ էւ կին,

գրեթե հաւասար (յաջորդաբար 23% եւ 24%), կ'ըսէ, որ պէտք է սարկաւագ ձեռնադրուելու առիթ տրուի կիներուն: Այս առումով Ռումանիան անգամ մը եւս կը տարբերի, ուր պատասխանողներուն միայն 7%-ը կը կարծէ, որ կիները պէտք է սարկաւագ ձեռնադրուին, մինչ 26% -ը կ'ըսէ, որ անոնք ընդհանրապէս պէտք չէ ձեռնադրուին: Ընդհանուր առմամբ, բոլոր չորս երկիրներուն մէջ, նուազ կողմնակիցներ կային կիներու քահանայ ձեռնադրութեան (13%), թէեւ 16-34 տարեկանները քիչ մը ակտիւ թեր (23%) էին, մինչդէռ 35-55+ տարեկանները (18%) ակտիւ ոգեւորուած էին կիներու սարկաւագութեամբ, բայց ոչ քահանայութեամբ:

Եկեղեցին, իբրեւ հաստատութիւն, պէտք է ինքզինք «թարմացնէ», կ'ըսէ Արժանթինէն այր հարցազրուցատու մը (50+), որ կը փորձէ իր կեանքը ապրիլ քրիստոնէական բարոյական արժէքներով: Օրինակ, կ'ըսէ ան, պէտք է, որ հոգեւորականները ակտիւ ուսեալ ըլլան եւ ակտիւ լաւ տիրապետեն սպաներէնին, իրենց ծխականներուն հետ կապի մէջ մնալու համար: Լիբանանի մէջ, երիտասարդ այր (16-30) զրուցատու մը ակտիւ կոպիտ կ'ըսէ. «մեծ բաց կայ եկեղեցւոյ եւ ժողովուրդին միջեւ»:

Դոկտ. Հրաչ Չիլինկիրեան Օքսֆորտ համալսարանի արեւելագիտութեան ամպիոնի դասախօս է եւ Հայկական Սփիւռքի Հարցախոյզին տնօրէնը:

¹ Հայաստանի Հանրապետութեան 2011-ի Մարդահամար, Բաժին 5.2. (https://www.armstat.am/file/article/sv_03_13a_520)

3 | Լեզու եւ մշակոյթ

Հայերուն մեծամասնութիւնը կենսունակ կը պահէ լեզուն եւ մշակոյթը, պահանջ կայ որակաւոր հայկական դպրոցներու

Վահէ Սահակեան


Անցեալ տարիներուն մեծ մտահոգութիւն յառաջացած էր հայախօսներու թիւի անկման եւ Սփիւռքի մէջ հայկական դպրոցներու փակման մասին: Հայկական Սփիւռքի Հարցախոյզին արդիւնքները, այսուհանդերձ, դրական պատկեր մը կու տան հայ լեզուին եւ մասնաւորաբար արեւմտահայերէնի օգտագործման վերաբերեալ: Հարցախոյզին տուեալները կ'առաջադրեն նաեւ շարք մը առաջնահերթութիւններ, որոնք կրնան նպաստել տարբեր երկիրներու մէջ հայկական դպրոցները աւելի ներդաշնակ եւ մրցունակ դարձնելու գործընթացին:

Հարցախոյզը կը բովանդակէր բազմաթիւ հարցումներ, որոնք կը սերտէին լեզուներու օգտագործումը տարբեր պայմաններու մէջ: Հարցումներ տրուած էին մասնակցողներուն իրենց հայերէնի իմացութեան, ինչպէս նաեւ՝ ամուսիններու/կողակիցներու, ծնողներու, մեծմօր եւ մեծհօր, երեխաներու հետ խօսակցութեան լեզուին կամ լեզուներուն մասին: Չորս համայնքներուն՝ Արժանթինի, Մոնրէալի, Լիբանանի եւ Ռումանիոյ մէջ բոլոր պատասխանողներուն 53%-ը կը նշէ, որ ինք «սահուն» հայերէն կը խօսի, մինչ 15% -ը կը կարծէ, որ իր հայերէնը «միջակ» մակարդակի է: Մնացեալ մէկ երրորդը քիչ թէ շատ հաւասարապէս բաժնուած էր «հիմնական» գիտելիքներ ունեցողներու, «որոշ բառեր» գիտցողներու եւ ընդհանրապէս հայերէն «չխօսողներու» միջեւ: Այս պատասխանները միայն քիչ մը կը տարբերէին սեռային եւ տարիքային խմբաւորումներուն միջեւ:

Այսուհանդերձ, բաւական նշանակալից տարբերութիւններ կային՝ ըստ երկրին պայմաններուն եւ սերունդներու ներկայութեան: Պատասխանողներուն մէջ, հայերէնին տիրապետող անձերուն համեմատութիւնը շատ աւելի բարձր էր Մոնրէալի (78%) եւ Լիբանանի մէջ (77%), բաղդատած Արժանթինի (21%) եւ Ռումանիոյ (18%) մասնակիցներուն հետ: Համեմատութիւններու մեծ բացը, շատ հաւանաբար պայմանաւորուած է այն իրողութեամբ, որ Լիբանանի համայնքը եւ Մոնրէալի գաղութը, որ հիմնականօրէն բաղկացած են Միջին Արեւելքէն եւ Հայաստանէն համեմատաբար վերջերս գաղթած հայերով, աւելի երկար եւ խոր փորձառութիւն ունեցած են խօսելու լեզուն իրենց համապատասխան համայնքներէն ներս: Չուգահեռաբար, հայերէն չխօսողներու համեմատութիւնը շատ աւելի բարձր էր Արժանայթինի (17%) եւ Ռումանիոյ մէջ (31%):

Այս տարբերությունները յառաջացնող գործոններուն քննարկումը աւելի խոր վերլուծում կը պահանջէ, սակայն հարցախոյզին տուեալները ցոյց կու տան, որ Արժանքինի եւ Ռումանիոյ հետ բաղդատած, Մոնրէալի մէջ բազմաթիւ մասնակցողներ կամ վերջերս գաղթած են կամ զաւակներն են վերջերս Հայաստանէն կամ Միջին Արեւելքէն գաղթած հայերու: Մոնրէալի մէջ, հարցախոյզի մասնակիցներուն 40% -ը կը նշէ, որ իրենց ընտանիքներուն առաջին անդամները Գանատա հասած են 1970-ականներուն եւ 1990-ականներուն, 29% -ը կը նշէ «1991-էն յետոյ», եւ միայն շուրջ մէկ երրորդը (31%) կ'ըսէ 1931-1970 թուականներուն: Պատասխանողներու ընդհանուր տոկոսը, որոնց ընտանիքները ժամանած են 1931-էն առաջ, 1%-էն պակաս է: Կարելոր է նշել, որ այս թիւերը անպայմանօրէն չեն ներկայացներ դէպի Գանատա հայկական գաղթի ալիքներուն պատկերը: Գանատայի հետ բաղդատած, դէպի Արժանքին, Լիբանան եւ Ռումանիա հայկական գաղթի հոսանքները կը ներկայացնեն հակառակ ուղղութիւնը [միտումը?]. այս երեք երկրներուն մէջ, պատասխանող անձերու մեծամասնութեան ընտանիքներուն առաջին անդամները ժամանած են 1930-էն առաջ: Լիբանանի մէջ մեծ համեմատութեամբ հայախօսներու առկայութիւնը կը բացատրուի այդ երկրի յատուկ պայմաններով, որոնք տասնամեակներ շարունակ բաւական չափով նպաստած են արեւմտահայերէնի եւ հայ մշակոյթի զարգացմանն ու տարածմանը:

ՅԱՐՑՈՒՄ 8. Ինչպէ՞ս կը գնահատէք հայերէն խօսելու ձերկարողութիւնը.



Որակական հարցազրոյցները նաեւ կը հաստատեն կապը երկրի մը յատուկ պայմաններուն եւ հայերէնին միջեւ: Լիբանանի մէջ, գրեթէ բոլոր մասնակցողները մեծամասնութեամբ հայախօսներ, կը շեշտէին հայուն համար հայերէն գիտնալու կարեւորութիւնը: Լիբանանի մէջ հայերէն խօսիլ չգիտնալը յաճախ կը նշանակէ աւելի մեծ համայնքէն լքուած զգալ: Լիբանանի մէջ մասնակիցի մը անգլերէնով տուած հարցազրոյցէն հետեւեալ մէջբերումը ուշագրաւ է՝

«Մենք շատ սերտ համայնք ենք, բայց եթէ չես խօսիր լեզուն, անոնք քեզ անդամ չեն նկատեր: Այնպէս որ, ես դուրս մնացած զգացի... Ուրեմն, ես զայն ետես ձգեցի, որպէսզի դուրս մնացած չզգամ: Իմ ընտրութիւնս է անկէ հեռու ապրիլ: Բայց խորը ներսդիս, անիկա ձեռով մը տհաճ բան մըն է: Ուրեմն, զգացի որ ետ երթալ կը փնտռեմ: Մենք գիտենք միայն մեր մականունը: Մենք չենք գիտեր, թէ ուրկէ եկած է մեր մեծ հայրը:... Լեզուն միակ բանը չէ, բայց անիկա կը միացնէ... Դուն քեզի ապահով կը զգաս լեզուով: Ուրեմն, երբ կը հաղորդակցիս անոր ճամբով, կապ մը կը ստեղծուի, նոյնիսկ

եթե ձեր անհատականությունները բոլորովին տարբեր են, անմիջական կապ մը կը ստեղծուի»:

Ի տարբերություն Լիբանանի եւ Մոնրեալի, Արժանթինի կամ Ռումանիոյ մէջ, շատ քիչ պատասխանողներ կը կարծեն որ հայերէնի իմացութիւնը էական է հայկական ինքնութեան համար: Ռումանիոյ մէջ, մասնակցող մը դիտել կու տայ. «լաւ պիտի ըլլայ, որ սփիւռքի մէջ ապրող հայերը հայերէն գիտնան, բայց այդ մէկը էական չէ: Մեզի համար հանգամանքները լաւ չեն, որովհետեւ խօսելու համար շատ քիչ մարդ կայ»:

Կանխատեսելօրէն, հայերէնի իմացութեան կարելորդութեան հասկացութիւնները կը տարբերին նոյնիսկ նոյն համայնքին մէջ: Մինչ Մոնրեալի մէջ, հարցախոյզին մասնակցողներուն մեծամասնութիւնը կ'ըսէ, որ սահուն կը խօսի հայերէն եւ հայերէնի իմացութիւնը կը նկատէ կարելորդ, որոշ պատասխանողներ խստապահանջ չեն այնքան: Մոնրեալի մէջ կատարուած հարցազրոյցէ մը քաղուած հետազայ մէջբերումը խօսուն է այդ իմաստով. «լեզուն մշակոյթին մէկ կարելորդ մասը կը հանդիսանայ, բայց ես չեմ կարծեր, որ ես նուազ հայ եմ, որովհետեւ իմ հայերէնս լաւ չէ»:

Սերունդներու ներկայութիւնը, ինչպէս ցոյց կու տան հարցախոյզին տուեալները, մեծ ազդուցութիւն ունի հայերէնի իմացութեան վրայ: Գաղթական առաջին սերունդի՝ հարցապնդուածներուն 85% -ը կը տիրապետէ խօսակցական հայերէնին, 9% -ը՝ խօսակցական միջակ կարողութիւն ունի, 3% -ը՝ հիմնական որոշ հմտութիւններ, 1% -ը որոշ բառեր գիտէ, իսկ միայն 2% -ը հայերէն չի գիտեր: Ի տարբերություն, առաջին գաղթականներու թոռները՝ 10-էն միայն 4-ը կը նշէ խօսակցական հայերէնի սահուն իմացութիւնը (39%), 15% -ը միջակ կարողութիւն ունի, 12% -ը՝ հիմնական գիտելիք, 21% -ը գիտէ ընդամենը քանի մը բառ եւ արտայայտութիւն, իսկ 13% -ը ընդհանրապէս հայերէն չի գիտեր:



Բոլոր համայնքներուն մէջ, 10 պատասխանող անձերուն 8-ը հասակ առած է սորվելով կամ հայերէն սորվիլ փորձելով (78%): Սորվելու այլ մարզեր կ'ընդգրկեն «հայկական ճաշ պատրաստել» (64%), «հայկական պար» (54%) եւ «հայկական երաժշտութիւն» (61%): Նուազ թիւով արական սեռի պատասխանողներ (55%) հասակ առած են հայկական ճաշ եփել սորվելով կամ սորվիլ փորձելով քան իգական սեռը (73%): Աւելի մեծ համեմատութեամբ կիներ հետեւած են հայկական երաժշտութեան եւ պարին (62%՝ կիներ եւ 46%՝ տղամարդիկ):

Բոլոր մասնակցողներուն մէջ, 58% -ը 6 տարի կամ աւելի հայկական դպրոց յաճախած է, իսկ 29% -ը երբեք հայկական դպրոց չէ յաճախած, ոչ ալ հետեւած է որեւէ յետդպրոցական կամ շաբաթավերջի դասընթացներու: Նկատի առնելով այն իրողութիւնը, որ վերջին տարիներուն սփիւռքի մէջ փակուած են շարք մը հայկական դպրոցներ, հարցախոյզին արդիւնքները կը թելադրեն զօրաւոր կարիքը հայկական դպրոցներու, որոնք կը սորվեցնեն հայ լեզուն եւ մշակոյթը, բայց միաժամանակ կ'ապահովեն բարձրորակ ընդհանուր կրթութիւն:

Հարցախոյզի մասնակցողներուն համեմատութիւնները, որոնք 6 տարի կամ աւելի յաճախած են հայկական ամէնօրեայ վարժարան կամ հետեւած յետդպրոցական դասընթացներու, աւելի բարձր են Գանատայի (72%), Լիբանանի (65%), Արժանթինի մէջ

(49%) եւ ցած Ռուսաստանի մէջ (15%): Համապատասխանօրէն, Ռուսաստանի մէջ (69%) աւելի շատ բարձր է այն պատասխանողներուն թիւը, որոնք չունին հայկական դպրոց յաճախելու փորձառութիւն, քան Արժանիի (39%), հետաքրքրականօրէն՝ Լիբանանի (25%), եւ ապա Մոնրէալի մէջ (14%): Ի տես այն տուեալին, որ պատասխանողներուն քառորդը հայկական վարժարան չի յաճախել Լիբանանի մէջ, հակառակ դպրոցական այն համակարգին, զոր Լիբանանի հայերը յաջողած էին զարգացնել աշխարհագրական սեղմ տարածութեան մը մէջ, ցուցանիշ է այն փոփոխութիւններուն, որոնք սկսած են զարգանալ համայնքէն ներս:

ՉՎՐՑՈՒՄ 15. Ձեր մանկութեան, հայկական ամենօրեայ վարժարան կամ յետ դպրոցական/ շաբաթավերջի դասերու յաճախման էք: Եթէ այո, որքա՞ն ժամանակ:



Տարիքային չորս խումբերու պարագային, թե՛ 16-24 տարեկաններուն, թե՛ 25-34 տարեկաններուն 57% -ը կ'ըսէ որ ունեցած է 6 տարի եւ աւելի հայկական դպրոց յաճախելու փորձառութիւն, մինչ 32% -ը՝ ոչ մէկ: 35-54 տարիքային խումբին 66%-ը ունեցած է հայկական ամենօրեայ դպրոց յաճախելու փորձառութիւն, իսկ 26% -ը՝ ոչ: Վերջապէս, 55+ տարիքի պարագային, 50%-ը ունեցած է 6 տարուան եւ աւելի հայկական ամենօրեայ դպրոց յաճախելու փորձառութիւն, իսկ 30% -ը՝ ոչ մէկ: Չարմանալի չէ, որ պատասխանողներուն մեծամասնութիւնը (59%) իրենց զաւակները ուղարկած են կամ պատրաստ են ուղարկելու հայկական ամենօրեայ վարժարան, կամ յետդպրոցական/ շաբաթավերջի դասընթացքներու կամ ծրագիրներու: Մասնակցողներուն միայն մէկ փոքր մասն է (3%), որ չէ ուղարկած կամ տրամադիր չէ իր զաւակները ուղարկելու:

հայկական ամենօրեայ վարժարան կամ յետդպրոցական/ շաբաթավերջի դասընթացքներու կամ ծրագիրներու:

Մասնակիցներէն պահանջուած էր նշել իրենց երեք գլխաւոր նախընտրութիւնները առաջնահերթութիւններու ցանկէ մը, թէ ի՞նչ կ'ակնկալեն որ հայկական դպրոցները պէտք է տան իրենց զաւակներուն: Ընդհանուր առմամբ, պատասխանողներուն գրեթէ երեք քառորդը (71%) կը նշէ՝ «հայերէն սորվիլ» իբրեւ գլխաւոր ակնկալիք: Այս հարցին շուրջ Պոսթընի, Գահիրէի, Մարսէի եւ Փասատենայի մէջ կատարուած 2018-ի փորձառական հարցախոյզին արդիւնքները մօտ են 2019-ի արդիւնքներուն: Հայկական դպրոցներէն այլ հիմնական ակնկալութիւններ կ'ընդգրկեն. «Բարձրորակ ընդհանուր կրթութիւն» (59%), «հայ ինքնութեան հանդէպ յանձնառութեան խրախուսանք» (47%), եւ «ստեղծում ջերմ մթնոլորտի մը, որ հաճելի կը դարձնէ երեխաներուն հայ ըլլալը» (42%): Հետաքրքրական է, որ ընդգրկուած համայնքներուն մէջ Լիբանանը միակ երկիրն էր, ուր ամէնէն աւելի «բարձրորակ ընդհանուր կրթութեան» (67%) ակնկալութիւնը նշուած էր իբրեւ հայկական դպրոցներէ առաջնակարգ պահանջ, քան «հայերէն սորվիլը» (61%): Բարձրորակ ընդհանուր կրթութեան հանդէպ առկայ մտահոգութիւնը հաւանաբար այլ գործօն մը կը հանդիսանայ, թէ ինչն է Լիբանանի մէջ հարցախոյզի բոլոր մասնակցողներուն քառորդը (25%) չունի հայկական դպրոց յաճախելու փորձառութիւն:

Հայ լեզուի եւ մշակոյթի դասաւանդութիւնը մնայուն մարտահրաւեր կը ներկայացնէ սփիւռքին համար: Իւրաքանչիւր համայնքի իւրայատուկ պայմանները, մասնաւորաբար արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի տարբերակներու օգտագործումը տարբեր վայրերու մէջ, եւ այլ գործօններ, ինչպէս՝ յառաջադէմ դասաւանդութեան եւ արդի արհեստագիտութեան վրայ հիմնուած միջոցներու սահմանափակումները եւ որակեալ ուսուցիչներու սակաւութիւնը, աւելի կը բարդացնեն հարցը: Այսուհանդերձ, աւելի տիրական է բարձրորակ ընդհանուր կրթութեան ակնկալութիւնը: Այս առումով, տարբեր երկիրներու մէջ հայկական դպրոցներ որոշ յատկութիւններով կը մրցին տեղական ոչ-հայկական դպրոցներու հետ, յատկութիւններ՝ որոնք զգալիօրէն կը տարբերին երկրէ երկիր, նոյնիսկ նահանգէ նահանգ ընդարձակ երկիրներու մէջ, ինչպէս է պարագան Գանատայի եւ Միացեալ Նահանգներու: Չնայած այս հարցախոյզը լուծումներ չ'առաջադրեր հայ լեզուն եւ մշակոյթը արդիւնաւետ կերպով դասաւանդելու, կամ առաջարկներ չի կատարեր հայկական դպրոցները արդիւնաւետ կերպով վարելու միջոցներուն մասին, սակայն ինչպէս որակական, այնպէս ալ քանակական տուեալներու խորքային ուսումնասիրութիւնը կրնայ օգնել հետազօտողներուն, հանրային քաղաքականութիւն մշակողներուն եւ համայնքային հաստատութիւններուն՝ ըլլալու աւելի քաջատեղեակ տարբեր համայնքներու իսկական կարիքներուն եւ ակնկալութիւններուն մասին, եւ ըստ այնմ մշակելու աւելի վերահասու ռազմավարութիւններ:

Դոկտ. Վահէ Սահակեան Միջիկըն-Տիրպորն համալսարանի Հայագիտական Ուսումնասիրութեան Կեդրոնի գիտաշխատող է եւ Հայկական Սփիւռքի Հարցախոյզի Խորհրդատու Մարմնի անդամ:



4 | Համայնք եւ քաղաքական կեանք

Մեծ պահանջ կայ տեսիլք ունեցող ղեկավարութեան եւ մշակութային ու կրթական յաւելեալ գործունէութեան

Սօսի Գասպարեան

Սփիւռքի մէջ հայերը սովորաբար կը կազմակերպուին ստեղծելով տեղական համայնքներ, որոնք կը բաժնեն հիմնական նոյն համակարգն ու ենթակառոյցները. եկեղեցիները, դպրոցները, աւանդական քաղաքական կուսակցութիւնները եւ անոնց յարակից կազմակերպութիւնները, մշակութային եւ ընկերային կառոյցները՝ որոշ տարբերակներով: Սփիւռքեան համայնքները կրնան տարբերիլ բազմաթիւ բնագաւառներու մէջ, օրինակ, իրենց ծննդավայրով եւ իրենց գաղթած երկրներու քաղաքական միջավայրով, բայց միաժամանակ անոնք ունին հասարակաց բազմաթիւ կէտեր: Հայերը կրնան գործունէայ անդամ ըլլալ իրենց համայնքին մէջ կամ ոչ, բայց անոնք գրեթէ միշտ կ'ըլլան քաղաքացիները զիրենք հիւրընկալող կամ ծննդավայր երկիրներուն, ուր անոնք կը բնակին, թերեւս սերունդներէ ի վեր: 2019-ի հարցախոյզին մէջ, համայնքի եւ քաղաքական կեանքի առնչուող հարցումները նպատակ ունէին ուսումնասիրելու տեղական (համայնքային) քաղաքական կեանքին վերաբերեալ հարցախոյզին մասնակցողներու գործունէութիւնն ու մտահոգութիւնները՝ բաղդատած համապատասխան ազգային շրջագիծին հետ:

2019-ին Արժանթինի, Մոնրեալի, Լիբանանի եւ Ռումանիոյ մէջ կատարուած հարցախոյզին արդիւնքները արժեքաւոր տեղեկութիւններ կը փոխանցեն, եւ յաւելեալ լոյս կը սփռեն հայկական այդ համայնքներուն մէջ տիրող տեսակէտներուն վրայ: Հետախուզութեան նկատառումով, «համայնքը» սահմանուած է իբրեւ «տեղական շրջան մը, որուն նկատմամբ հայեր պատկանելիութիւն կը զգան, ուր կան նաեւ այլ հայեր, որոնց հետ կրնան շփուիլ, եւ ուր յաճախ կան որոշ հաստատութիւններ, ինչպէս՝ եկեղեցիներ, դպրոցներ եւ ակումբներ, որոնց կրնան մաս կազմել եթէ ուզեն»:

Համայնքային կեանքի մարտահրաւերներ


Երբ խնդրեցինք ընտրել կէտեր իրենց համայնքին զօրութեան ուղղուած մարտահրաւերներու ցանկէ մը, չորս երկիրներուն մէջ, հարցախոյզին մասնակցողները մասնաւորաբար կեդրոնացան երեք կէտերու վրայ: Հիմնական մտահոգութիւնը համայնքէն ներս տեսիլք ունեցող ղեկավարութեան մը բացակայութիւնն է (36%), որուն

կը յաջորդէ երիտասարդները հետաքրքրող իրադարձութիւններու բացակայութիւնը (34%), եւ վերջապէս՝ խառն ամուսնութիւնները (29%):

• **Ղեկավարութիւն**

Այս օրերուն ղեկավարութեան մեծ տագնապ կայ ամբողջ աշխարհի տարածքին՝ թե՛ տեղական եւ թե՛ միջազգային մակարդակներու վրայ: Մասնակցողներուն աւելի քան մէկ երրորդը (36%) կ'ըսէ, որ «հայ համայնքէն ներս զօրաւոր, տեսիլք ունեցող ղեկավարութեան բացակայութիւնը» «մեծագոյն մարտահրաւերն է ուղղուած համայնքի հզօրութեան»: Այս համեմատութիւնը բարձրագոյնն էր Լիբանանի մէջ 48% -ով, ոչ միայն որովհետեւ այս համայնքը ենթադրաբար ունի սփիւռքի ամենէն զարգացած եւ գործօն հայկական քաղաքական կառոյցներէն մէկը, այլեւ այն պատճառով, որ 2019-ի Հոկտեմբերի կէսերուն երկիրը ականատես դարձաւ քաղաքացիական զանգուածային բողոքներու, որոնք շարքաթեր տեւեցին: Այս դէպքերը պատահեցան երբ այս հարցախոյզին ուսումնասիրութեան դաշտի վրայ աշխատանքները ընթացքի մէջ էին: Դժգոհութեան ընդհանուր մակարդակը անսպասելի չէր: «Արաբական Չերմաչափ»-ին (*Arab Barometer*) կատարած նման հարցախոյզեր ցոյց կու տան, որ ոչ միայն հայ համայնքին մէջ, այլեւ լայն հասարակութեան մօտ գոյութիւն ունի Լիբանանի ղեկավարութեան նկատմամբ գոհունակութեան բաւական ցած մակարդակ մը, եւ համատարած փտածութիւնը գերակշռող հարց է:

ՅԱՐՑՈՒՄ 10. Որո՞նք են ձեր համայնքի դիմագրաւած ամենամեծ մարտահրաւերները: Զանցեք ընտրել առաւելագոյնը երեք մարտահրաւեր՝ կարեւորագոյնները ըստ ձեզի:



Համայնքի ղեկավարութեան եւ անդամներուն միջեւ առկայ անջրպետը յստակ կ'երեւի այս հարցախոյզի շրջագիծին մէջ կատարուած որակական հարցազրոյցներէն շատերուն մէջ: Մոնրէալի մէջ, Հալէպ ծնած արու հարցազրուցատու մը կ'ըսէ.

«Չեմ կարծեր, որ մենք նոյն հարթութեան վրայ կը գտնուինք: Մարդիկ, որոնք իշխանութեան վրայ են, տարբեր միջավայրէ կու գան եւ տարբեր կրթութիւն ունին, մենք նոր սերունդը ներկայացնող ղեկավարներ չունինք իշխանութեան վրայ: Անոնց մեծ մասը նոյնիսկ հոս հասակ առած չէ: Նոր սերունդը եւս համայնքին մէկ մասը չէ»:

Միւս կողմէ, Ռուսմանիոյ հայերուն միայն 19% -ը այդ մէկը կը նկատէ մեծ մարտահրաւեր մը, ինչ որ կ'ենթադրէ հիմնական շեղում մը միւս երեք համայնքներէն: Շատ հաւանաբար, ասիկա պայմանաւորուած է այն իրողութեամբ, որ Ռուսմանիոյ մէջ գոյութիւն ունի միայն համայնքային մէկ կազմակերպութիւն (եկեղեցւոյ կողքին), Ռուսմանիոյ Հայերու Միութիւնը՝ պետական ֆինանսաւորութեամբ եւ պետական ճանաչում ունեցող միաւոր մը, որ կ'առաջնորդէ եւ կը ղեկավարէ համայնքին գործերը: Այս առումով Ռուսմանիան բացառութիւն է:

- **Ներգրաւել երիտասարդութիւնը**

Երիտասարդ հայ սերունդը համայնքային կեանքին մէջ ներգրաւելու փափաքն ու ճիգերը մտահոգութեան մնայուն առարկայ են սփիւռքի մէջ: Բոլոր համայնքներուն մէջ մասնակցողներուն մէկ երրորդը (34%) կը նշէ, որ «երիտասարդները հետաքրքրող իրադարձութիւններու բացակայութիւնը» մեծ մարտահրաւեր է: Ղեկավարութեան եւ երիտասարդութեան թեմաները շաղկապուած են, որովհետեւ, կարծէք մեծ բաց մը կայ համայնքին երիտասարդ անդամներուն եւ անոնց ղեկավարութեան միջեւ, ինչպէս Մոնրէալի մէջ Հայաստան ծնած արու մասնակցող մը կ'ըսէ հարցազրոյցի մը ընթացքին.

«Ես անձամբ անոնց մեծ մասը չեմ ճանչնար... ինչո՞րքայն է, որ ես երիտասարդներ չեմ տեսներ համայնքային կազմակերպութիւններու եւ ղեկավարութեան մէջ: Կը տեսնեմ նկարներ, ուր Ժասթին Թրուտոն կը հանդիպի հայ համայնքին հետ: Միջին տարիքը 80 եւ ակնաբան է: Անոնց բոլորն ալ տղամարդիկ են, եւ ծեր կամ շատ ծեր: Ես չեմ ըսեր, որ անոնք զիս անձամբ չեն ներկայացներ: Բայց ես կը կարծեմ, որ ինձի պէտք է երիտասարդներ, որոնք առաջ անցած են, անոնք այլ բաներ կ'ուզեն: Կը կարծեմ, որ համայնքը այս մարդիկը իրենք կառուցած են, որոնք երիտասարդ էին ժամանակին, եւ արժանի են ղեկավարելու, որովհետեւ իրենք ստեղծած ու կառուցած են զայն: Անոնք կը կառուցեն եկեղեցի եւ ունին դպրոց, եւ օժանդակութիւն կը ստանան կառավարութենէն»:

Հետաքրքրականօրէն, հարցախոյզը ընդգրկած չորս համայնքներու մասնակիցներուն նուազ քան 10%-ը միայն «հայկական համայնքային հաւաքավայրերու անբաւարարութեան» տագնապ կը տեսնէ, ինչ որ ենթադրել կու տայ որ բոլոր այս համայնքները լաւ կը սպասարկուին կառոյցներու եւ հանդիպման վայրերու առումով:

- **Խառն ամուսնութիւններ**

Ինչպէս սփիւռքեան բազմաթիւ համայնքներու պարագային, խառն ամուսնութիւններու հարցը կը հանդիսանայ գլխաւոր մտահոգութիւններէն մէկը, բայց ոչ այնքան հիմնական, որքան սովորաբար կը կարծուէր: Ընդհանուր առմամբ, չորս համայնքներուն մէջ մասնակցողներուն գրեթէ մէկ երրորդը (29%) խառն ամուսնութիւնները կը նկատէ մեծ մարտահրաւեր մը, քիչ մը ակնաբանի մէջ (48%)՝ դրսեւորելով օտարներու հետ ամուսնութեան այն վախը, որ կը շարունակուի սերունդէ սերունդ այս հայկական մեծ համայնքին մէջ: Մոնրէալի մէջ, ուր համայնքին մեծ մասը բաղկացած է Լիբանանէն, Մուրիայէն, Եգիպտոսէն եւ Թուրքիայէն գաղթած հայերէ, հարցախոյզին

մասնակցողներուն աւելի քան մէկ երրորդը (35%) նաեւ մտահոգուած էր խառն ամուսնութիւններու հարցով: Այս մտահոգութիւնը նուազ արտայայտութիւն կը գտնէ Ռուսմանիոյ մէջ (23%), եւ նոյնիսկ աւելի քիչ՝ Արժանթինի մէջ (11%), երկու երկրներ, ուր հայերը աւելի համարկուած են իրենց ազգային ընկերութիւններուն մէջ, եւ ուր խառն ամուսնութիւնները սովորական կը նկատուին:

Ռուսմանիոյ մէջ հարցազրոյցի մասնակիցողները կ'արտայայտեն այս թեմային աւելի նրբերանգ պատկերը: Ինչպէս կ'ըսէ 73-ամեայ հայ մարդ մը. «ոչ մէկ հարց ազգութեան հետ, եթէ զիրար լաւ կը հասկնաք»: 39-ամեայ այլ հարցազրուցատու կին մը կ'ըսէ. «կան պարագաներ, որ անոնք հայ չեն, բայց աւելի հայ կը զգան, քան կարգ մը հայերը իրենք»: Սակայն, ուրիշներ աւելի գործնական պատճառներ կու տան: 28-ամեայ տղամարդ մը կ'ըսէ. «մենք Թրանսիլվանիոյ մէջ այնքան փոքր համայնք ունինք, որ գրեթէ անկարելի է հայկական ամուսնութիւններ ունենալ»:

Խառն ամուսնութիւններ | Հայկ Կիւզալեան

Խառն ամուսնութիւնները ուշադրութեան առարկայ դարձան 2019-ի հարցախոյզը ընդգրկած չորս երկրներու համայնքներու անդամներուն հետ կատարուած խորքային հարցազրոյցներուն մէջ: Խառն ամուսնութիւնը ակնյայտօրէն կը դիտուի իբրեւ նուազ ընդունուած տարբերակ, քան հայ ամուսին (հարս, փեսայ) գտնելը: Նոյնիսկ, երբ նկատի կ'առնուի իբրեւ «անդամներու կորուստ», սակայն անիկա կը նկատուի նախընտրելի տարբերակ քան ռեւէ մէկուն հետ ամուսնանալու կամ ամուրի մնալու պարագան: Երկրէ երկիր տարբերութիւնները ակնյայտ են նաեւ որակական հարցազրոյցներուն մէջ: Արժանթինի եւ Ռուսմանիոյ մէջ, ուր հայերը աւելի համարկուած են տեղական ընկերութիւններուն մէջ, խառն ամուսնութիւնները կը դիտուին իբրեւ անխուսափելի հետեւանք, եւ իբրեւ այդպիսին, մեծ սպառնալիք չեն նկատուիր: Տարբեր համայնքներու մէջ, այլ զրուցատուներ խառն ամուսնութիւնները կը նկարագրեն նմանատիպ գիծերով՝ ոչ իբրեւ սպառնալիք, այլ իբրեւ՝ պատեհութիւն: Անոնք կը դիտուին իբրեւ առիթ իրենց համայնքները վերածելու հիւրընկալ միջավայրի՝ փորձելով հայ համայնքէն ներս առնել մարդիկ անկախ իրենց ծագումէն, եւ զանոնք մղել դէպի հայկական համայնքն ու մշակոյթը: Արժանթինի մէջ պատասխանող մը զայն կ'անուանէ «ծաւալել հայկականութիւնը»:

Քանակական հարցախոյզի արդիւնքներուն ներդաշնակ, տարեց զրուցատուները եւ առաջին սերունդի գաղթականները քիչ մը աւելի մտահոգիչ կը նկատեն խառն ամուսնութիւնները: Այսուհանդերձ, սերունդներու եւ գաղթած վայրին միջեւ եղած տարբերութիւնները յստակօրէն սահմանուած չեն: Երիտասարդ զրուցատուներէն շատեր կը նախընտրեն ամուսնանալ հայու հետ, եւ որոշ տարեցներ խառն ամուսնութիւնները սպառնալիք չեն նկատեր, այլ իբրեւ ազգակ մը, որուն պէտք է յարմարի համայնքը:

Համայնքին յարմարեցումը խառն ամուսնութիւններու իրականութեան հետ ո՛չ միայն կը վերաբերի անոր, թէ հայերը ինչպէ՞ս կը վարուին տարբեր ծագումով ոչ-հայերու, կէս-հայերու եւ տարբեր երկիրներէ եկած հայերու հետ եւ կ'ողջունեն անոնց մուտքը համայնքէն ներս, այլեւ՝ յատուկ քայլերու, որոնց կրնայ դիմել համայնքը: Մոնրեալի մէջ, զրուցատու մը կու տայ օրինակ մը, թէ ինչպէս համայնքային կազմակերպութիւնները կրնան յարմարիլ, օրինակ, ֆրանսերէնով ցուցմունքներ աւելցնելով հայկական դպրոցներուն մէջ տրուող տան պարտականութիւններուն վրայ: Այս մէկը թոյլ կը տայ ոչ-հայ ծնողներուն, որոնք հայերէն չեն խօսիր, վերահսկելու նաեւ իրենց երեխաներուն հայկական դասերուն համար տրուած տան պարտականութիւնը:


Հետաքրքրական է, որ բոլոր չորս համայնքներուն մէջ, ամենէն երիտասարդ սերունդը (19%) աւելի քիչ մտահոգուած էր խառն ամուսնութիւններով, քան ամենէն հին սերունդը (38%): Նաեւ, նայելով սերունդին ժամանման թուականին, բաղդատած երկրին մէջ ծնածներուն հետ, եւ որոնց ծնողները (31%) եւ մեծհայր-մեծմայրերը (25%) հոն բնակութիւն հաստատած են, պատասխանողները, որոնք հետագային միացած են համայնքին, խառն ամուսնութիւններու վերաբերեալ ունին մտահոգութեան ամենէն բարձր համեմատութիւնը (41%):

Խառն ամուսնութիւններու առընթեր, «ձուլման փափաքի/ճնշումի» երեւոյթը այլ մտահոգութիւն մըն էր չորս համայնքներուն մէջ հարցախոյզին մասնակցողներու քառորդին համար (24%): Այս մտահոգութիւնը նուազ չափով մարտահրաւեր կը նկատուի Ռումանիոյ (21%) եւ Արժանթինի (21%), քան միւս երկու համայնքներուն մէջ: «Հայերէն սորվելու/խօսելու առիթին բացակայութիւնը» աւելի ճնշող էր Ռումանիոյ մէջ մասնակիցներու 28% -ին համար՝ գրեթէ երկու անգամ աւելի քան հարցախոյզին մասնակցած միւս համայնքներուն համար, որովհետեւ այդ երկրին մէջ աւելի քիչ հնարաւորութիւն կայ հայերէն սորվելու:

Ի՞նչ կարիքներ ունին տեղական համայնքները

Կազմակերպուած համայնքային գործունէութիւնը սփիւռքեան կեանքին մէջ կը նկատուի վճռորոշ, ոչ միայն այն պատճառով, որ անիկա հնարաւորութիւն կու տայ ընկերային կեանքի զարգացման, համայնքներու կերտումին եւ միասնութեան յառաջացման, այլ նաեւ այն պատճառով, որ անիկա միջավայր կը ստեղծէ մշակոյթի եւ հաւաքական ինքնութեան ու պատկանելիութեան այլ երեսներու փոխանցման համար: Համայնքային կազմակերպութիւններու դիմագրաւած մարտահրաւերը այն է, որ անոնք պէտք է յարմարին իրենց համայնքի յարափոփոխ կարիքներուն եւ առաջնահերթութիւններուն քայլ պահելու եւ արդիւնաւետ ըլլալու հեռանկարով:

ՀԱՐՑՈՒՄ 11. Ձեր տեղական հայկական համայնքը ի՞նչ գործունէութեան կարիքունի: Հաճեցէք ընտրել առաւելագոյնը երեք գործունէութիւն՝ կարեւորագոյնները ըստ ձեզի:



Չորս համայնքներուն մէջ մասնակիցներուն առաջարկուած էր ընտրել այն գործունէութիւնները, որոնք, իրենց կարծիքով, աւելի կենսական են իրենց տեղական հայկական համայնքէն ներս: Հետաքրքրականօրէն, գլխաւոր ընտրութիւնը (42%) կը նկատուի «դասախօսութիւններ եւ ձեռնարկներ հայոց պատմութեան, լեզուի, արուեստի, երաժշտութեան, խոհարարութեան, պարերու մասին»: Այս կարիքին

պահանջը աւելի բարձր տոկոսով կը ներկայանայ Ռուսմանիոյ եւ Արժանթինի մէջ (երկուքն ալ 47%): Զարմանալի չէ, որ «երեխաներու մշակութային գործունէութիւնը, ամառնային ճամբարները, սկաուտութիւնը» մէկ երրորդով մասնակիցներու երկրորդ բարձրագոյն ընտրութիւնը կը հանդիսանայ (35%): Այս կարիքը աւելի մեծ է Ռուսմանիոյ (49%) եւ Արժանթինի մէջ (52%):

Վերջին տարիներուն, սփիւռքի մէջ հայկական դպրոցներու իրավիճակը դարձած է առաջնահերթ եւ բուռն բանավեճի նիւթ (տե՛ս այս տեղեկագրին «Լեզու եւ Մշակոյթ» խորագրեալ բաժինը): Գրեթէ վերջին տասնամեակին, տարբեր համայնքներու մէջ փակուած են շարք մը հայկական դպրոցներ: Սակայն, հակառակ տիրող կարծիքին, Սփիւռքի մէջ կարծէք պահանջ կայ հայկական դպրոցներու, առնուազն հարցախոյզը ընդգրկած չորս համայնքներուն մէջ: Ընդհանուր առմամբ, մասնակցողներուն շուրջ մէկ չորրորդը (28%) կը նշէ, որ հայկական դպրոցի կարիքը կը զգացուի իրենց համայնքէն ներս: Այս կարիքը աւելի հրատապ կը նկատուի Ռուսմանիոյ մէջ, ուր հայկական դպրոցներ չկան՝ մասնակցողներուն գրեթէ կէսին պահանջով (46%) եւ, զարմանալիօրէն, Արժանթինի մէջ (31%), ուր արդէն կան բազմաթիւ հայկական դպրոցներ:

Հետաքրքրական է, որ քաղաքական աշխուժութիւնը պահանջուած «անհրաժեշտ գործունէութիւններու» ցանկին վեցերորդ դիրքը կը գրաւէ: 10-ին միայն 2-ը (19%) կը կարծէ, որ օրինակ, «Ցեղասպանութեան ճանաչման կամ Հայաստանի օգնութեան համար լոպիինկի» նման աշխատանքներ անհրաժեշտ են: Այս արդիւնքը ենթադրել կու տայ, որ նման աշխատանքներ արդէն իսկ լաւ ձեւով կը կատարուին հարցախոյզը ընդգրկած համայնքներուն մաջ, կամ հաւանաբար՝ քաղաքական առաջնահերթութիւնները սկսած են փոխուիլ:

Կարիքներու առաջնահերթութիւնները կը տարբերին համայնքէ համայնք: Օրինակ, Մոնրէալի մէջ, «ամուրի անձեր զիրար ծանօթացնող ծառայութիւնները» առաջնակարգ տեղ կը գրաւեն մասնակիցներու կարիքներու ցանկին վրայ (29%), բայց այլ համայնքներու պարագային, մասնաւորաբար Ռուսմանիոյ (6%) մէջ, այդ մէկը մասնաւոր կարեւորութիւն չի ներկայացներ, թերեւս որովհետեւ համայնքը շատ փոքր է: Լիբանանի մէջ, «աշխատանքային ցանցերը» մասնակցողներուն համար աւելի առաջնահերթ են (37%), քան այլ համայնքներու պարագային, ինչ որ կը դրսեւորէ հիմնական պահանջ մը երկրի մը մէջ, որ հարցախոյզը ընդգրկած երկիրներուն մէջ ունի անգործութեան ամենէն բարձր համեմատութիւնը եւ ամենէն տկար տնտեսութիւնը:

Համայնքային քաղաքական կեանք

Հայկական սփիւռքի համայնքները տարբեր մակարդակներով կազմակերպուած եւ տիրապետուած են (եւ կարգ մը պարագաներու՝ սամանազատուած) քաղաքական երեք կուսակցութիւններու եւ անոնց յարակից միաւորներուն կողմէ՝ ընդգրկելով մշակութային եւ ընկերային կեանքի բազմաթիւ երեսները: Անոնք են Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը (Հնչակեան, հիմնուած 1887-ին), Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը (ՀԾԴ, Դաշնակցութիւն, հիմնուած 1890-ին), եւ Ռամկավար Ազատական կուսակցութիւնը (Ռամկավար, հիմնուած 1921-ին): Այս կուսակցութիւն-

ները եւ անոնց յարակից միատրները, որոշ շրջագիծի մէջ, կարելոր դեր խաղցած են հայկականութեան կերտումի, սահմանումի եւ պահպանման գործին մէջ:

Ընդհանրական հարց է այն, որ քաղաքական կուսակցութիւնները եւ անոնց ասանդական ղեկավարութիւնը զգալի մարտահրաւերներ կը դիմագրաւեն երիտասարդ սերունդներուն հասնելու իրենց ճիգերուն մէջ, յատկապէս անոնց որոնք համայնքային կեանքի լուսանցքին վրայ կը գտնուին, կամ չեն կրնար յարմարիլ կազմակերպութիւններուն առաջադրած տիպերուն, ինչպէս Մոնրէալի մէջ Քէպէք ծնած իգական սեռի հարցազրուցատու մը կ'ըսէ.

«Ես շատ անջատուած կը զգամ. Չէի կրնար նոյնիսկ ըսել, թէ որոնք են ղեկավարները: Նկատի առնելով հայկական դպրոցէն ներս ունեցած իմ փորձառութիւնս, ուր կայ մնայուն քննութիւն, թէ «որքան հայ ես», չես կրնար մտածում մը ունենալ, որ կը շեղի խմբային մտածողութենէն. ձեռով մը միշտ պէտք է հետեւիլ փաթեթին»:

Այն հարցումին, որ եթէ իրենք «գործնապէս առնչուած են հայկական որեւէ քաղաքական կուսակցութիւններու կամ շարժումներու», 10 մասնակցողներուն շուրջ 8-ն (77%) կ'ըսէ, որ «հայկական քաղաքական պատկանելութիւն չունի»: Այս տոկոսը շատ մօտ է 2018-ի փորձառական հարցախոյզի արդիւնքներուն, որոնք կատարուած էին Պոսթընի, Գահիրէի, Մարսելի եւ Փասատենայի մէջ: Ռումանիոյ մէջ, ուր գոյութիւն չունին «ասանդական» հայկական քաղաքական կուսակցութիւններ, անկուսակցականութեան ցուցանիշը կը հասնի 97%-ի, ինչ որ տարբեր ուղեգիծ ցոյց կու տայ ցարդ հարցախոյզ կատարուած միւս բոլոր համայնքներէն: Այս համեմատութիւնը միջինէն աւելի բարձր է նաեւ Արժանթինի մէջ, ուր մասնակցողներուն 87% -ը որեւէ առնչութիւն չունի հայկական քաղաքական կուսակցութիւններու հետ: Տարբեր սերունդներու առումով, ուշագրաւ է, որ 16-24 տարիքային խումբին մեծամասնութիւնը (84%) քաղաքական կուսակցութիւններու հետ կապ չունի, որուն 76%-ով միաժամանակ կը յաջորդեն 25-34 եւ 35-54 տարիքային խումբերը:

Հայկական քաղաքական երեք գլխաւոր կուսակցութիւնները, որոնք աւելի քան մէկ դար աշխուժ գործունէութիւն ծաւալած են Սփիւռքի մէջ, հաւաքականօրէն ունին շուրջ 22% գործոն անդամներ 2019-ի հարցախոյզին մասնակցողներու ծիրին մէջ (1): Այս համեմատութիւնը յարաբերաբար կրնայ բարձր նկատուիլ, երբ նկատի առնենք որ 2019-ի հարցախոյզը ընդգրկած չորս համայնքներէն երեքին՝ Արժանթինի, Լիբանանի եւ Մոնրէալի մէջ, հայկական քաղաքական կուսակցութիւնները ունին ներկայութեան եւ գործունէութեան երկար պատմութիւն: Ընդհանուր առմամբ, մասնակցողներուն 19% -ը կը նշէ իր գործօն անդամակցութիւնը Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (ՀՅԴ), 1,7%-ը Ռամկավար Ազատական կուսակցութեան (Ռամկավար) եւ 1,6%-ը Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան (Հնչակեան): Նախատեսելիօրէն, երեք կուսակցութիւններու պարագային, անդամակցութեան մեծագոյն համեմատութիւնները՝ ՀՅԴ 37%, Հնչակեան 6%, Ռամկավար 3% գոյութիւն ունին Լիբանանի մէջ, ուր կուսակցութիւնները ունին հաստատութենական եւ քաղաքական խոր արմատներ: Հետաքրքրականօրէն, բոլոր պարագաներուն, 55+ տարիքային խումբը գրեթէ կրկնակիօրէն աւելի ներգրաւուած է կուսակցական գործին մէջ, քան 16-24 տարիքային

խումբը, ինչ որ ենթադրել կու տայ, թե քաղաքական գործունեությունը կը նահանջե սերունդէ սերունդ:

Պետք է նշել, որ իբրեւ կանոն, հայերը «գործնականօրէն չեն անդամակցիր» սփիւռքի քաղաքական կուսակցութիւններուն, բայց շատ հաւանաբար, անոնք համակիրներ են կա՛մ ընտանեկան միջավայրի ժառանգութեամբ, կամ ալ նշուած կուսակցութիւններու կազմակերպուած ձեռնարկներուն մասնակցելու ճամբով: Նաեւ պետք է ի մտի ունենայ, որ կուսակցութիւններու համեմատական տարբերութիւնները կրնան նոյնը չըլլալ ուսումնասիրութեան դաշտի վրայ՝ տուեալ համայնքի մը զանազան խմբաւորումներուն՝ հարցախոյզին ընթացք տալու տարբեր չափերուն պատճառով:

Համայնքային կազմակերպութիւններ | Հայկ Կիւզալեան

Խորքային հարցազրոյցները լոյս կը սփռեն սերունդներու տարբերութեան վրայ, ինչ կը վերաբերի համայնքային կազմակերպութիւններու մասին անոնց կարծիքին: Հայկական կազմակերպութիւնները հիմնականօրէն կը դիտուին իբրեւ համայնքէն ներս արձանագրուող փոփոխութիւններուն հետ քայլ չպահողներ: Անոնք կարծէք կը ներկայացնեն տարբեր տեսակետներ, քան համայնքի անդամներուն մեծ մասը: Համայնքային կազմակերպութիւններու մէջ ներգրաւուած տարեց հարցազրուցատու մը կը խոստովանի, որ կազմակերպութիւններուն համար դժուար է ընդառաջել երիտասարդ սերունդի կարիքներուն:

Երբ խօսքը կը վերաբերի սփիւռքի համայնքներուն մէջ հայերու քաղաքական յանձնառութեան, կը թուի, որ ընդհանուր առմամբ հայկական քաղաքա-կան կուսակցութիւնները (եւ առհասարակ համայնքային կազմա-կերպութիւնները) հազուադէպօրէն կը ներկայացնեն հարցախոյզի մասնակցողներուն տեսակետներն ու արժէքները: Այս կեցուածքը կը կրկնուի բազմաթիւ հարցազրոյցներու մէջ: Քանի մը զրուցատուներ կը նշեն, որ համայնքային տարբեր կառոյցներու միջեւ հին, շարունակուող մրցակցութիւնը ընդհանուր առմամբ արգելք կը հանդիսանայ ընդհանրապէս հայ համայնքը միաւորելու եւ զարգացնելու աշխատանքներուն: Մասնակցողները նաեւ կը գիտակցին համայնքային հաստատութիւններու կարելոր դերակատարութեան: Անոնք ոչ միայն կարելոր են ինքնութեան համար եւ կ'ամրապնդեն միութեան զգացումը, այլեւ կարելոր կը նկատուին հայ համայնքի պահպանման համար:

Այսուհանդերձ, մասնակցողներուն մեծամասնութեան համար, համայնքային աւանդական կազմակերպութիւնները, ներառեալ քաղաքական կուսակցութիւնները, քայլ չեն պահեր եւ չեն զարգանար ժամանակին հետ: Անոնք ընդհանուր առմամբ չեն ներկայացներ համայնքի անդամներուն տեսակետները: Բնականօրէն, երկրի մը միջավայրը շատ կարելոր է համայնքներու միջեւ տարբերութիւնները վերլուծելու համար: Օրինակ, Ռումանիոյ մէջ, համայնքային կեանքի այս երեսը կարելի չէր քննարկել իբրեւ կարելոր հարց՝ հայկական համայնքային կուսակցութիւններու գործնական բացակայութեան պատճառով: Լիբանանի մէջ սակայն, երկրին մէջ յամեցող քաղաքական եւ ընկերային տազնապը, որ սկսած էր 2019-ի վերջը եւ զուգադիպած այս հարցախոյզին դաշտային աշխատանքներուն, կրնայ ազդած ըլլալ արտայայտուած տեսակետներուն վրայ:

Տեղական/ազգային քաղաքական կեանք



Հարցախոյզին մեջ կային երկու հարցումներ, կապուած՝ սփիւռքահայերու քաղաքական յանձնառութեան հետ, իբրեւ քաղաքացիները բնական երկիրներուն:

Մասնակցողներուն մեծամասնութիւնը (74%) կ'ըսէ, որ քուէարկած է զիրենք «հիւրընկալած երկրին» մեջ կայացած ընդհանուր ընտրութիւններուն՝ ամենէն բարձր համեմատութեամբ Արժանթինի մեջ (82%), ուր 2019-ին տեղի ունեցան քաղաքական բանավեճեր եւ ընտրութիւններ, զուգահեռ՝ այս հարցախոյզի ուսումնասիրութեան դաշտի վրայ գործնական աշխատանքներուն: Տեղի ունեցան նախագահի, Ազգային Քոնկրէսի (խորհրդարանի) եւ նահանգային կառավարիչներու ընտրութիւններ: Հարցախոյզը ընդգրկած համայնքներուն մեջ ընտրութիւններու ամենէն ցած համեմատութեամբ մասնակցութիւնը արձանագրուած է Լիբանանի մեջ (57%), ուր հարցապնդուածներուն աւելի քան քառորդը (26%) ընդհանրապէս չէ քուէարկած, ինչ որ ենթադրել կու տայ, որ հայերը, ինչպէս Լիբանանի միւս համայնքները, յուսախաբ են ընտրութիւններէն եւ կառավարման եղանակէն: Ուրիշ 17% մը կ'ըսէ, որ իրենք քուէարկելու «իրաւունք չունենին»: Այս անջատումը յատկապէս նշանակալից է, որովհետեւ լիբանանի հայկական կուսակցութիւնները գործնապէս ներգրաւուած են լիբանանեան ընդհանուր քաղաքական կեանքին մեջ եւ ներկայացուած են խորհրդարանին ու կառավարութեան մեջ: Եւ այս հիասթափութիւնը բազմաթիւ հարցազրուցատուներու պատասխաններուն մեջ՝ ներքին հայկական քաղաքական կեանքը բացայայտօրէն կ'առնչէ Լիբանանեան քաղաքական կեանքին: Արու գրուցատու մը, որ արաբերէնով եւ անգլերէնով կ'արտայատուի, կը բացատրէ.

«Լիբանանի մեջ հարց է հայ քաղաքական [կուսակցութիւններու] այն կեցուածքը, որ անոնք միշտ կառավարութեան կողքին են՝ անիկա ճիշդ ըլլայ կամ սխալ: Այս մէկը ինձի համար տրամաբանական չէ: Ահա թէ ինչու, խնդրեմ...զիս հանգիստ ձգեցէք... Լիբանանի հայերը «լիբանանցիացած» են: Այս կը նշանակէ... որ անոնք իրենց մտածելակերպով դարձած են լիբանանցի: Այնպէս որ, ամէն ինչ *ուսայթա* [ծանօթութիւններ] է, ամէն ինչ... դուն բան մը կ'ուզես իրմէ, ինք բան մը կ'ուզէ քեզմէ: ...Ես չեմ սիրեր [ասիկա]:

Ինչ կը վերաբերի քաղաքական դիրքորոշումներուն, չորս երկրներու մասնակցողներուն մեծամասնութիւնը կ'ըսէ, որ «ազատական»-ը (38%) իրենց դիրքորոշումին ամենամօտ նկարագրութիւնն է՝ շատ աւելի բարձր համեմատութեամբ, քան «պահպանողական» (17%) եւ «յառաջադիմական» (8%) պիտակաւորումները: Սոնրեալի մեջ, ուր Գանատայի Ազատական կուսակցութիւնը իշխանութեան վրայ կը գտնուի, մասնակցողներուն գրեթէ կէսը (46%), եւ Ռումանիոյ մեջ (39%) 10-ին 4-ը իրենք զիրենք «ազատական» կը համարեն, մինչ Լիբանանի մեջ՝ քառորդը, իսկ Արժանթինի մեջ՝ շուրջ մէկ երրորդը: Լիբանանի մեջ, հինգ մասնակցողներուն մէկը (21%) ինքզինք կը ներկայացնէ իբրեւ «պահպանողական»՝ ի տարբերութիւն Ռումանիոյ շուրջ 13%: «Ազատական» եւ «պահպանողական» հասկացութիւնները տարբեր իմաստ կը ստանան տարբեր վայրերու մեջ, ինչպէս՝ ոչ անսպասելիօրէն, բոլոր մասնակցողներուն շուրջ 40% -ը ընտրած է «խառնուրդ» (17%) կամ «այլ» (20%) բնորոշումները՝ իր քաղաքական հայեացքները ներկայացնելու համար:

ՉԱՐՑՈՒԽ 25. Հետեւեալներէն ո՞ր մէկը ամենէն ճիշդ կը նկարագրէ ձեր քաղաքական հայեացքները:



Մինչ այս համայնքներուն իւրաքանչիւրը ունի յստակ ազգային քաղաքական, տնտեսական եւ ընկերային տարբեր միջավայր, հարցախոյզին արդիւնքները ցոյց կու տան, որ անոնց ներքին համայնքային մտահոգութիւնները մեծ մասամբ կը համընկնին: Մասնաւորաբար ղեկավարութեան եւ երիտասարդութեան անջատուածութիւնը կ'ընդգծուի իբրեւ հրատապ հարց, ինչպէս նաեւ ղեկավարութիւնը տարբեր ձեւերով կ'ենթարկուի քննադատութեան՝ իր ոչ ներկայացուցչական ըլլալուն, ժամանակավրէպ, եւ տեսիլքի պակաս ունենալուն համար:

Դոկտ. Սօսի Գասպարեան Բաղդատական Քաղաքականութեան դասախօս է Սթիւրլինկ համալսարանին մէջ, եւ մաս կը կազմէ Հայկական Սփիրքի Հարցախոյզի (ՀՄՀ) Ակադեմական Խորհրդատու Մարմնին:

¹ Կարելոր է նշել, որ մինչ այս ցուցանիշը կը դրսեւորէ ընդհանուր պատկերը, անիկա ոչ անպայմանօրէն կու տայ համայնքէն ներս կուսակցական անդամներու ճշգրիտ հաշիւը՝ հարցախոյզին համար ածուած նմուշի ձեւաւորման բնոյթին պատճառով:

5 | Հայրենի երկիր Սփիւռք, Հայաստան Հայրենիք

Հայաստանը ինքնութեան կարելոր աղբիւր է սփիւռքին համար

Հրաչ Չիլինկիրեան

Հայաստանի Հանրապետութիւնը սփիւռքահայերուն համար տարբեր նշանակութիւններ ունի: Աւանդականօրէն, Սփիւռքեան կառոյցներու արտայայտութեանց մէջ, «հայրենիք» հասկացութիւնը, ընդհանրապէս կը վերաբերի «Հայաստանին»: Սակայն անհատ սփիւռքահայերու տեսակէտները, կարծէք աւելի մօտ են հայրենիքի բառարանային սահմանումին՝ «այն երկրին մէջ, ուր ծնած ես»:

Այն հարցումին, թէ «հետեւեալներէն ո՞ր մէկը կը նկատէք ձեր հայրենիքը», Արժանթինի, Մոնրէալի, Լիբանանի եւ Ռումանիոյ մէջ, հարցախոյզի մասնակցողներուն մեծամասնութիւնը (57%) կ'ըսէ. «այն երկիրը, ուր ծնած եմ»: Արժանթինի եւ Ռումանիոյ պարագային, ուր հայ համայնքները աւելի համարկուած են զիրենք հիւրընկալող ընկերութեան հետ, այդ համեմատութիւնը կը հասնէր երեք չորրորդի (յաջորդաբար 75% եւ 77%): Հետաքրքրական է, որ տարիքային խումբերու պարագային, աւելի բարձր համեմատութիւնը երիտասարդ սերունդին իբրեւ հայրենիք կը զգայ այն վայրը, ուր ծնած է. 59%-ը՝ 16-24 տարիքային խումբին եւ 62%-ը՝ 25-34 տարիքային խումբին:


Սակայն «հայրենիք» հասկացութիւնը միանշանակ չ'ընկալուիր, եւ ոմանք երկդիմի մօտեցում ունին այս գծով: Ուրիշներու նման, հարցազրուցատու կին մը (31-50 տարիքային խումբ) ունի «խառն զգացումներ»: Ան դժուարութիւն ունի որոշելու թէ արդեօք «Հայաստանը եւ/կամ Լիբանանը» իր հայրենիքն են: Արժանթինի մէջ, նոյն տարիքային խումբէն զրուցտու այլ կին մը, որ հինգ անգամ Հայաստան այցելած է, Հայաստանը կը նկատէ իր «հայրենիքը», նոյնիսկ եթէ «զանազան ձեւերով տարբեր» կը գտնէ զայն: Անիկա «վաւերական ազգ-պետութիւն է», կ'ըսէ ան՝ աւելացնելով, որ թէեւ ինք աւելի շատ հասարակաց ընդհանուր գիծեր ունի այլ սփիւռքահայերու, քան Հայաստանի հայերուն հետ:

Հայաստանի հայերուն եւ սփիւռքահայերուն միջեւ առկայ ընկալումներու եւ ընդհանրապէս ամէնօրեայ մշակոյթի տարբերութիւնները յաճախ ի յայտ կու գան որակական հարցազրոյցներու ժամանակ: Լիբանանի մէջ, զրուցատու կին մը (31-50 տարեկան), որ քանի մը անգամ գտնուած է Հայաստան, կ'ըսէ, որ ինք կը սիրէ Հայաստան այցելել, բայց չի մտածեր հոն տեղափոխուելու մասին՝ Հայաստանի հայերուն եւ սփիւռքահայերուն

միջև գոյություն ունեցող մշակութային տարբեր-ութիւններուն պատճառով: Մոնրէալէն երիտասարդ այլ կիւն մը (16-30 տարեկան), որ ծնած է Գանատայի մէջ եւ տակաւին կապեր ունի իր ծնողներուն՝ միջին արեւելքի ծննդավայր երկրին հետ, կ'ըսէ, որ ինք դժուարութիւն ունի մշակութային գետնի վրայ խառնուելու Հայաստանի հայերուն հետ:

Այսուհանդերձ, ասիկա չի նշանակեր, որ հասարակաց ընդհանուր գիծեր չկան: Անդրադառնալով Հայաստան կատարած իրենց այցելութիւններուն մասին՝ որակական հետազոտութեան մասնակցած բազմաթիւ հարցազրուցատուներ Հայաստանի եւ Արցախի հայերը կը գտնեն շատ սիրալիք, հիւրընկալ եւ առատաձեռն: Մոնրէալի մէջ, զրուցատու կիւն մը (50+) կ'ըսէ, որ ինք ապահով զգացած է Հայաստանի մէջ եւ սիրած անոր կեանքի կշռոյթն ու մշակոյթի հասանելիութիւնը:

ՀԱՐՑՈՒՄ 26. Գետնեալներէն ո՞ր մէկը կը նկատէք ձեր հայրենիքը: Գաճեցէք ընտրել բոլոր պատասխանները, որոնք կը յարմարինձեզի:



Շատերուն համար Հայաստանը «իտէալականացուած» է, մասնաւորապէս անոնց համար, որոնք տակաւին երկիրը չեն այցելած, կամ «երազային դարձած» ինչպէս կ'ըսէ զրուցատու կիւն մը (50+) Արժանթինի մէջ: Ան երկու անգամ այցելած է Հայաստան եւ կ'ըսէ, որ «իրական Հայաստանը» Սփիւռքի կողմէ ընկալուածը չէ, եւ կը մատնանշէ մշակութային տարբերութիւնները: Հայրենիքի ֆիզիքական իրականութենէն աւելի, ինչպէս Մոնրէալի մէջ ցազրուցտու կիւն մը (31-50) կ'ըսէ ֆրանսերէնով, իրեն համար տանդ մէջ «զգալու» վիճակն է: Ան կը վերյիշէ. «անգամ մը Արցախ էինք, գիշեր էր, մենք անհրաժեշտօրէն գրաւիչ պանդոկի մը մէջ չէինք, ապա մեր կողքին գտնուող մարդոց հետ բարեկամացանք, միասին ընթրեցինք, միասին կերանք, կենաց խմեցինք. ինծի համար այդ էր հայրենիքը»:


Հայաստանի հանդէպ «երազային» հայեացքը կարծէք գերակշռող է Ռումանիոյ հայերուն մօտ, որոնք տասնամեակներ շարունակ գտնուած են համայնավար իշխանութեան ներքեւ: Այս համայնքին մէջ, զրուցատու կիւն մը (50+) վառ կը պահէ Հայաստան այցելելու իր երազը: «Ես երբեք Հայաստան չեմ գտնուած, միշտ փափաքած եմ երթալ: Ես գայն կը տեսնեմ իբրեւ հեքիաթային երկիր մը եւ, ձեռով մը հոն կ'ուզեմ երթալ, բայց փաստօրէն երբեք չեմ ծրագրած այդ մէկը: Բայց կ'ուզեմ մտածել, որ դեռ ժամանակ ունիմ նախքան մեռնիլս»: Երիտասարդ այլ կիւն մը (16-30 տարեկան), որ կ'ուզէ նորէն այցելել Հայաստան, կ'ըսէ. «Հայաստանի ժողովուրդը արտասովոր է», հակառակ անոր

որ հոն տեղափոխուիլը կը նկատէ դժուար: Ուրիշ այր գրուցատուի (50+) մը համար՝ Ռուսանիայէն, Հայաստան իր այցելութիւնը, գոր ան «սիրած» է, «երազ մըն էր, որ իրականութիւն դարձաւ»:

Լիբանանի մէջ այր (31-50) հարցագրուցատու մը բանաստեղծական նկարագրութիւն կու տայ իր Հայաստան առաջին այցելութեան մասին. «առաջին անգամ, երբ Հայաստան գացի, արդէն սիրահարած էի Հայաստանին: Հայաստանը տեղ մը չէ որ կ'երթաս տեսնելու, թէ կը սիրէ՞ս զայն կամ ոչ, կը սիրէ՞ս հայրենիքդ կամ ոչ: Ես Հայաստան կ'երթայի, իմ հայրենիքս, գոր արդէն կը սիրէի: Կը սիրես զայն, նոյնիսկ նախքան տեսնելդ, առանց պատկերը տեսնելու, միայն պատմութիւնները լսելով»:

Հարցախոյզին մասնակցողներուն 10-ին միայն 4-ը (42%) Հայաստանի Հանրապետութիւնը կը նկատէ իր հայրենիքը, քիչ մը ավելի՝ Մոնրէալի մէջ (51%), իսկ նուազագոյնը՝ Ռուսանիոյ մէջ (22%): Պատասխանողներուն շուրջ մէկ երրորդին համար (30%), հայրենիքը այն երկիրն էր, ուր կ'ապրի ներկայիս: Քառորդը (24%) կ'ըսէ, որ հայրենիքը իր «նախնիներուն ծննդավայրն է»: Իսկապէս, «հայրենիքի» մասին այս թիւերը նման են 2018-ի փորձառական հարցախոյզին, որ կատարուեցաւ Պոսթընի, Գահիրէի, Փասատենայի եւ Մարսէլի մէջ:

ՀԱՐՑՈՒՄ 27. Ներկայիս գործուն ինչպիսի՞ կապեր ունիք Հայաստանի Հանրապետութեան կամ Արցախի հետ: Հաճեցէք ընտրել բոլոր յարմար պատասխանները:



Կապեր Հայաստանի հետ


Միւտքահայերը սերտ կապեր ունին Հայաստանի եւ Արցախի մէջ եւ, կարծէք յաճախ ու մեծ թիւերով կը ճամբորդեն հոն: Նման կապերու ցանկը կը գլխաւորեն ընկերներն ու ընկերային կեանքը: Հարցումին, թէ «ներկայիս ինչպիսի՞ կապեր ունիք Հայաստանի Հանրապետութեան կամ Արցախի մէջ», 24% -ը կը պատասխանէ «ընկերներ եւ ընկերային կեանք», բաւական ավելի Լիբանանի հայերուն (36%), եւ ավելի նուազ Արժանթինահայերուն պարագային (14%): Ասոր կը յաջորդեն «ընտանեկան» կապերը՝ ընդհանուր առմամբ չորս երկրներու մասնակցողներուն 21% -ի համար, բայց ավելի բարձր (32%)՝ գաղթական առաջին սերունդին համար: 10-ին 1-ը առնչուած է կրթական եւ մշակութային գործունեութեան կապերով (Արժանթին եւ Լիբանան՝ շուրջ 10-11%, Մոնրէալ եւ Ռուսանիա՝ 6-8%):

Սպասելիորեն, բոլոր մասնակցողներուն 4% -ը «կալուած ունի» Հայաստանի մէջ: Հետաքրքրականօրէն, աւելի մեծ թիւով Լիբանանահայեր (10%) կալուածատէր են Հայաստանի մէջ, քան հարցախոյզին մասնակցած միւս համայնքները: Այդ մէկը կարելի է վերագրել վերջին տարիներուն լիբանանահայերու Հայաստան ներհոսքին, կապուած՝ Լիբանանի մէջ առկայ տնտեսական եւ քաղաքական տագնապներուն հետ: Ի տարբերութիւն, Ռումանիոյ հայերը գրեթէ կալուած չունին Հայաստանի մէջ:

Այցելութիւններ Հայաստան կամ Արցախ

Հարցումին, թէ արդօք իրենք «երբեւիցէ այցելա՞ծ են Հայաստան կամ Արցախ», 10-ին 6-ը (61%) կ'ըսէ, որ Հայաստան այցելած է մէկ կամ աւելի առիթներով, 22%-ը՝ մէկ անգամ, 19%-ը՝ 2-3 անգամ, 20%-ը՝ աւելի քան 3 անգամ: Շուրջ մէկ երրորդը (35%), որոնք «երբեք» չեն գտնուած, «մտադիր են այցելելու». Ռումանահայերուն կէսէն աւելին մտադիր է այցելելու (52%): Հետաքրքրականօրէն, այս թիւերը նման են Պոսթընի, Գահիրէի, Փասատենայի եւ Մարսելի մէջ 2018-ին կատարուած փորձառական հարցախոյզի արդիւնքներուն:

ՀԱՐՑՈՒՄ 29. Մտածա՞ծ էք Հայաստանի Հանրապետութիւն մտայուն բնակութիւն հաստատելու մասին:



2018-ի Թաւշեայ Յեղափոխութենէն ի վեր կարծես աճած է հետաքրքրութիւնը Հայաստանի առօրեայ իրադարձութիւններուն եւ հոն ապրելու հաւանականութեան նկատմամբ: Այս վերանորոգ հետաքրքրութիւնը կ'արտայայտուի նաեւ որակական հարցազրոյցներուն մէջ: Մինչ բոլոր զրուցատուներու 10-ին 4-ը (43%) «չուզէի հոն ապրիլ» մշտականօրէն, այլ 3 մը (30%) կ'ըսէ. «կը յուսամ օր մը տեղափոխուիլ հոն, բայց յստակ ծրագիր չունիմ»: Սպասելիօրէն, Լիբանանահայութեան շուրջ կէսը (49%) կը մտածէ վերջնականապէս Հայաստան հաստատուելու մասին՝ դրսեւորելով երկրին պայմանները: Մասնակցողներուն շուրջ քառորդը (23%) կ'ըսէ, որ պիտի մտածէր Հայաստան փոխադրուելու մասին, «եթէ հանգամանքները տարբեր ըլլային»:

Ռումանիոյ մէջ հարցազրուցատու կին մը (50+) կ'ըսէ. «Հայաստանը համայն հայութեան հայրենիքն է», աւելացնելով՝ որ համայնավար տարիներուն, շատ քիչ կապեր կային իրենց համայնքին եւ Հայաստանի միջեւ՝ խորհրդային հանրապետութիւն մը այդ ժամանակ: Տարիքային նոյն խումբէն այլ կին մը, որ 50 անգամ այցելած է Հայաստան,


Հայաստանը կը նկատէ իր «մայրենի երկիրը»: Կը տեղափոխուէր հոն եթէ կարենար, բայց այդ մէկը «անձնասիրութիւն» պիտի ըլլար՝ Արժանթինի մէջ իր ունեցած ընտանեկան կապերուն պատճառով: Ուրիշներ ամուր կապեր ունին ծրագրիւններու միջոցով: Մոնրէալէն մարդ մը (31-50) կ'ըսէ, որ Հայաստանը «տեղ մըն է, ուր կ'ուզես ըլլալ», բայց ինք չ'ապրիր հոն: Ան կ'ըսէ, որ սփիւռքահայերը ստիպուած են ճիգ թափելու, որ քանի մը այցելութենէ ետք, չջարունակեն մնալ զբօսաշրջիկներու դասակարգին մէջ: «Շատեր առարկաներ կը գնեն. կ'ունենաս սառնարան մը, խոհանոց մը, որպէսզի պանդոկ չ'ունաս, եւ կ'ըլլայ այնպէս, որ դուն այնքան ալ զբօսաշրջիկ չ'ես»: Ան յաճախ կ'այցելէ հոն եւ այդ մէկը գոհունակութիւն կը պատճառէ իրեն: Պէտք չունիս հոն ապրելու, բայց «կը կարծեմ որ Հայաստանը կրնայ կեանքիդ մաս կազմել ծրագրիւններու միջոցով, կամ որեւէ բանով որ կարելի կը գտնես»: Նոյն համայնքին այլ երիտասարդ մը (16-30 տարեկան), վերջին տարիներուն նոյնիսկ աւելի մօտ կը զգայ Հայաստանի՝ սուրիահայերու ներկայութեան եւ արեւմտահայերէն խօսողներու կողմէ դեկավարուող գործերուն պատճառով: Ան կ'ըսէ, որ երիտասարդ սերունդին կողմէ կ'որդէգրուին արեւմտեան կեանքի ձեւեր, եւ կ'ողջունէ բարձր արհեստագիտութեան մարզին աճը Հայաստանի մէջ:

Երբ խօսքը կը վերաբերի «մամուլով կամ առցանց» հետեւելու Հայաստանի եւ Արցախի ամէնօրեայ իրադարձութիւններուն, Լիբանանի եւ Մոնրէալի հայերը կարծէք աւելի յաճախ կը հետեւին, քան Արժանթինի եւ Ռումանիոյ հայերը: Չորս համայնքներու մէջ, մասնակցողներուն գրեթէ մէկ երրորդը (29%) կը նշէ, որ կը հետեւի «ամէնօրեայ» դրութեամբ կամ «շաբաթը քանի մը անգամ»՝ քիչ մը աւելի Լիբանանի (39%) եւ աւելի նուազ՝ Ռումանիոյ (21%) եւ Արժանթինի մէջ (21%): Մասնակցողներուն 22% -ը Հայաստանի եւ Արցախի լուրերուն կը հետեւի «շաբաթը մէկ անգամ», 31% -ը՝ «ամիսը մէկ կամ երկու անգամ, կամ աւելի նուազ», 46%-ը Ռումանիոյ մէջ, եւ բոլոր մասնակցողներուն 18% -ը կ'ըսէ, որ «երբեք» չի հետեւիր: Անոնք, որոնք «երբեք» չեն հետեւիր, ամէնէն բարձր համեմատութիւնը կը ներկայացնեն Արժանթինի մէջ (23%), բաղդատած միւս երեք համայնքներուն հետ:

Սփիւռքի զօրակցութիւնը Հայաստանի

Հայաստանի անկախացումէն ի վեր՝ երեք տասնամեակ առաջ, սփիւռքահայերն ու կազմակերպութիւնները զգալի դեր կը խաղան Հայաստանի եւ Արցախի օգնութեան ձեռք երկարելու գործին մէջ: Մարդասիրական ու բարեգործական նախաձեռնութիւնները կեդրոնացած են ընկերային բարեկեցութեան ծրագրերու (օրինակ՝ օժանդակութիւն տրամադրուած որբերու, թոշակառուներու, ընկերութեան տնտեսապէս անապահով հատուածին), առողջապահութեան մարզին (օրինակ՝ բժշկական սարքաւորումներու եւ դեղորայքի մատակարարում, բժշկական խնամքի բարելաւում Հայաստանի մէջ), կրթութեան (օրինակ՝ համակարգիչներու, գրականութեան եւ ուսումնական նիւթերու յանձնում կրթական բարձրագոյն հաստատութիւններու), մշակութային ծրագրիւններու (օրինակ՝ օժանդակութիւն գրողներու, երաժիշտներու, արուեստագէտ խումբերու եւ դիրքիւններու ստեղծում՝ զանոնք միջազգային ծանօթացման արժանացնելու համար), եւ գիտական աջակցութիւն (օրինակ՝ փորձագիտութեան, խորհրդատուութեան եւ օժանդակ մեթոտաբանութեանց փոխանցում գիւղատնտեսութեան, ուժանիւթի, կենսոլորտի եւ արհեստագիտութեան մարզերուն մէջ):

ՀԱՐՑՈՒՄ 31. Սփիւռքեան համայնքները հետեւեալ ո՞ր մարզերուն պէտք է աջակցին Հայաստանի Հանրապետութեան մէջ: Հաճեցէք ընտրել առաւելագոյնը երեք մարզեր:



Մինչ սփիւռքահայերը կը շարունակեն Հայաստանի եւ Արցախի օժանդակել նշուած մարզերուն մէջ, 2019-ի հարցախոյզը լուսարձակի տակ կ'առնէ հիմնական երեք ոլորտներ: Հարցումին, թէ «սփիւռքի համայնքները ի՞նչ մարզերու մէջ պէտք է օժանդակեն Հայաստանի», բոլոր մասնակցողներուն ճնշող մեծամասնութիւնը (62%) կը նշէ «տնտեսական զարգացում եւ աշխատանքի ստեղծում» իբրեւ հիմնական առաջնահերթութիւն: Մոնրէալի մէջ, զրուցատու կին մը (31-50 տարեկան) կ'ըսէ. «հայրենիքը պէտք չէ Երեւանը նկատել» միայն, եւ կը մատնանշէ Հայաստանի մարզերուն տնտեսական զարգացման անհրաժեշտութիւնը: Ասոր կը հետեւի «կրթութիւնը» (46%) եւ «մարդկային իրաւունքները, ժողովրդավարութեան կառուցումը» (35%): Ոչ զարմանալիօրէն թերեւս, նկատի առնելով իրենց համապատասխան երկիրներուն մէջ տիրող իրավիճակը, «մարդկային իրաւունքները, ժողովրդավար-ութեան կառուցումը» առաջնակարգ տեղ կը զբաւէ Մոնրէալի հայերուն համար (42%), իսկ նուազ Լիբանանահայերուն պարագային՝ ընդամենը 28%:

Կարծէք որոշ փոփոխութիւն կայ իբրեւ երկիր Հայաստանի կարիքներուն մասին առկայ ընկալումներուն մէջ, առնուազն 2019-ի հարցախոյզը ընդգրկած համայնքներուն մէջ: Օրինակ՝ անցում կայ երկրին տրամադրուելիք «մարդասիրական օժանդակութենէն» դէպի երկրին «բարգաւաճումը»: Տակաւին, մարդկային իրաւունքներն ու ժողովրդավարութեան կառուցումը, որոնք ընդհանրապէս բացակայ եղած են սփիւռքի բազմաթիւ կազմակերպութիւններու օրակարգէն, այժմ կը գտնուին չորս համայնքներուն մէջ հարցախոյզին մասնակցողներու առաջին երեք առաջնահերթութիւններուն շարքին: «Օժանդակութեան» փոխարէն, որ կարիքաւորութիւն կ'ենթադրէ, կ'ըսէ Մոնրէալի մէջ այր զրուցատու մը (31-50), Սփիւռքի եւ Հայաստանի յարաբերութիւնները պէտք չէ ըլլան մէկը միւսին օգնելու ձեռով, այլ նոր մտածողութիւն մը անհրաժեշտ է: «Մենք պէտք է զիրար ամբողջացնենք: Ամէնէն կարեւորը ռազմավար-ութիւնն է: Մենք պէտք է ունենանք ռազմավարութիւն մը՝ ճշդելու մեր երկրին, կամ սփիւռքի աղբիւրները օգտագործելու եղանակները, եւ մեր աշխարհով մէկ սփռուած ըլլալու վիճակը ծառայեցնենք մեր ազգին շահերուն»:

Տնտեսական զարգացումը ճակատագրական կը նկատուի Հայաստանի բարգաւաճման համար: Արժանթինի մէջ պաշտօնեայ կին մը (50+) կ'ըսէ, որ Սփիւռքը պէտք է

«տնտեսական զորակցություն» ապահովել Հայաստանին եւ ոչ թե՛ կուսակցական քաղաքականություն: Ան կը հաւատայ, ինչպէս ուրիշներ, որ հայկական քաղաքական կուսակցությունները «պետք չէ գոյություն ունենան սփիւռքի մէջ», այլ՝ Հայաստանի մէջ, յատկապէս աւելի իբրեւ ընդդիմադիր կուսակցություններ: Նոյն համայնքին մէջ, այր զրուցատու մը (50+) կ'ըսէ, որ Սփիւռքի եւ Հայաստանի յարաբերությունները պետք է «փոխադարձաբար լիարժէք» ըլլան տնտեսական եւ մշակութային առումով:

Ընդհանուր առմամբ, սփիւռք-Հայաստան յարաբերություններու հանրային քննարկումի շրջագիծին մէջ անտեսուած հարցերէն է մէկ կողմէ՝ կառուցային կարողություններու մակարդակը, իսկ միւս կողմէ՝ Սփիւռքի տեղական համայնքներուն նիւթական կարիքներն ու աղբիւրներու սահմանափակումները: Որակական հարցազրոյցներու մէջ, շատերը կը մատնանշեն իրենց համայնքներէն ներս զանցառուած կարիքներու գոյությունը: Մոնրէալի մէջ, այր զրուցատու մը (50+) կը կարծէ, որ նախ՝ «հայկական սփիւռքը պետք է վստահ ըլլայ, որ իր համայնքները աշխատունակ են... ապա, կը կարծեն», - կը շարունակէ ան, -«Հայաստանի հետ յարաբերությունները բացառիկ պիտի ըլլան»:

Հայաստան-սփիւռք յարաբերություններուն մէջ անտեսուած այլ երես մըն է հաղորդակցութեան մակարդակն ու տարողությունը: Մոնրէալի մէջ, այր զրուցատու մը (31-50) այս «յարաբերությունը» կը նմանցնէ «երկու առանձնություններու» [sic] յարաբերութեան: Ան կ'ըսէ. «սփիւռքի եւ Հայաստանի միջեւ բացարձակապէս կապ չկայ, բացի շատ բարձ մակարդակներու վրայ»: Իրօք, պաշտօնական միջոցներէն եւ հաստատություններու կապերէն անդին, կարծէք փափաք կայ հաղորդակցելու եւ կապ հաստատելու Հայաստանեան ընկերութեան եւ սփիւռքի համայնքներուն միջեւ: Օրինակի համար, անհատ սփիւռքահայերու հետ կապուած լուրերը հազիւ թէ արձագանգ կը գտնեն Հայաստանի լրատուամիջոցներուն մէջ, բացի այն պարագա-ներէն, երբ խօսքը կը վերաբերի համբաւաւոր անձի մը կամ հանրաձանօթ դէմքի մը: Կարելի է ըսել, որ Սփիւռքը շատ աւելի բան գիտէ Հայաստանի, քան հայրենի հասարակությունը՝ Սփիւռքի մասին:

Հայաստանի աջակցությունը սփիւռքին


Հակառակ ուղղութեամբ, հարցումին, թէ «ի՞նչ ձեւերով Հայաստանը կրնայ օժանդակել» իրենց համայնքին, հետաքրքրականօրէն, մասնակցողներուն գրեթէ կէսին (47%) գլխաւոր ընտրությունը «աջակցություն եւ տեղեկություն Հայաստանի մէջ կրթութեան կամ զբօսային ծրագիրներու վերաբերեալ»: Ասոր կարիքը աւելի մեծ է Ռումանիոյ մէջ (62%) եւ, բացայայտօրէն՝ 16-24 տարեկան երիտասարդներու պարագային (52%), որուն կը յաջորդէ «մշակութային ծրագիրներ [իմ] համայնքէն ներս» (42%), նոյնպէս քիչ մը աւելի 16-24 տարեկան երիտասարդներու պարագային (47%):

Առաջնահերթութեան այլ մարզ մըն է Սփիւռքի հայկական դպրոցներու օժանդակությունը: Հարցախոյզը ընդգրկած չորս համայնքներուն մէջ, մասնակցողներուն 34% -ը կը կարծէ, որ Հայաստանը կրնայ օժանդակութեան ձեռք երկարել իրենց համայնքին՝ «օգնելով ուսուցիչներու պատրաստութեան ծրագիրներու»: Ասոր պահանջը աւելի մեծ է Արժանթինի մէջ (49%), բայց նուազ Ռումանիոյ մէջ (21%), ուր հայկական դպրոցներ գրեթէ գոյություն չունին, որուն կը յաջորդեն «աջակցություն եւ տեղեկություն

Հայաստանի մեջ կրթության կամ զբոսային ծրագիրներու վերաբերեալ» (32%) եւ «օգնութիւն դպրոցներուն հայալեզու դասագիրքերու ճամբով» (26%):

Իսկապէս, անցեալին, ներառեալ խորհրդային տարիներուն, կրթութիւնն ու մշակոյթը Սփիւռք-Հայաստան յարաբերութիւններու երկու առանցքային ուղղութիւնները կը հանդիսանային, եւ կարծէք այդպէս ալ կը շարունակեն նաեւ այսօր:

ՉԱՐՑՈՒՄ 32. Իսկ ի՞նչ միջոցներով Հայաստանի Հանրապետութիւնը կրնայ օժանդակել ձեր տեղական համայնքին:



Ինքնատիւնքեան հասկնալի է, որ Հայաստանի կարելիութիւնները սահմանափակ են Սփիւռքին հանդէպ: Հայաստանի Հանրապետութիւնը ունի իր հսկայական ելեւմտական դժուարութիւնները եւ տնտեսական կարիքները: Ինչպէս կ'ըսէ զրուցատու կին մը (31-50) Ռումանիոյ մեջ, «օգնել Սփիւռքին դժուար է Հայաստանի համար: Անոնք կրնան օգնել բարոյապէս կամ մշակութային որոշ նախաձեռնութիւններու, բայց ոչ նիւթական առումով»: Կարելի է ըսել, թէ որքան որ Հայաստանը ունի իր նիւթական կարիքները, Սփիւռքի համայնքներուն մեջ գործող հաստատութիւնները նոյնքան ունին նիւթական դժուարութիւններ եւ այլ կարիքներ, թէեւ շատեր կը պնդեն, որ Հայաստանի Հանրապետութեան՝ հայկական պետականութեան հզօրացումը պէտք է առաջնահերթ ըլլայ:

Լիբանանի մեջ երիտասարդ զրուցատուներէն մէկուն (16-30) ընկալունակ ձեւակերպումը լաւագոյնս կը պատկերացնէ Հայաստան-սփիւռք յարաբերութիւններու բարդութիւնը. «Սփիւռքը պահպանելու համար շատ կարեւոր է, որ Հայաստանը գոյութիւն ունենայ», - կ'ըսէ ան՝ աւելացնելով, որ «[Սփիւռքը այժմ] յղման հէնք ունի»:

Դոկտ. Հրաչ Զիլինկիրեան Օքսֆորտ համալսարանի արեւելագիտութեան ամպիոնի դասախօս է եւ Հայկական Սփիւռքի Հարցախոյզին տնօրէնը:

6 | Բացակայող հարցումը 2018-ի ուսումնասիրության մեջ

Համայնքային կեանքին մեջ անհրաժեշտ են համագործակցություն եւ բաց քննարկումները

Միզան Փաթի

Թի 100 հարցումը վերջինն էր 2018-ին Պոսթընի, Գահիրէի, Մարսէյի եւ Փասատենայի մեջ կատարուած Հայկական Սփիւռքի փորձառական Հարցախոյզին մեջ: Կը գնահատենք այն ազնիւ քիչերը, որոնք չմասնակցեցան հարցախոյզին, բայց պատասխանեցին ըսելով՝ «ոչինչ, շատ երկար էր» կամ «անպատասխանելի հարցում»: Փորձառական հարցախոյզին հարցարանը կազմուած էր 100 հարցումներէ: Բաց քննարկման հարցումներու վերջին բաժինը յատկապէս հետաքրքրական էր անոնց համար, որոնք շարունակեցին մինչեւ վերջ եւ հարուստ պատասխաններ տուին զանոնք կարդացող հետազոտողներուն համար:

«Բացակայող հարցումի» բաժնը կու տար լաւագոյն պատկերացումներէն մէկը մասնակցողները հետաքրքրող հարցերուն վերաբերեալ, որոնք սակայն չէին ընդգրկուած հարցախոյզին մեջ: Հարցում մը, որ յաճախ տարբեր ձեւերով կ'առաջարկուէր մասնակցողներուն կողմէ ընդգրկուելու հարցարաններուն մեջ, կը վերաբերէր Սփիւռքի մեջ առկայ «բաժանումներուն»:

«Ի՞նչ կրնանք ընել սփիւռքի միջեւ տարակարծութիւնները լուծելու համար (այլ խօսքով՝ մեր բազմաթիւ *քլիքները* իրարու քով բերելու)» գրած է մասնակցողներէն մէկը: Այս հարցը կարծէք հասարակաց կէտ է մարդոց աւելի մեծ շրջանակի մը համար: Փասատենայի մեջ, մասնակցողներէն մէկը հետեւեալ պատասխանը կ'առաջարկէ. «աջակցիլ այն բոլոր միջոցառումներուն, որոնց ճամբով հայերը կ'արտայայտեն իրենց ժառանգութիւնը, նոյնիսկ եթէ անիկա աւանդականը չէ: Չքաջալերել դատողականութիւնն ու ռիսկերը»: Այլ մասնակցող մը Մարսէյի մեջ նկատել կու տայ, որ պէտք է քննարկել «սփիւռքի միասնականութեան հետ կապուած հարցերը, անոր բաժանումները, որոնք կարելոր են»: «Ինչո՞ւ սփիւռքի հայերը չեն գիտեր միաբանելու ձեւը», կը գրէ այլ մարսէյցի մը՝ հարց տալով, որ ադէօ ք հայերու մեջ առկայ է «չափազանց անհատապաշտութիւն մը», որ «ներքին հակամարտութիւններ» կը ստեղծէ:

Համայնքային կազմակերպութիւններուն միջեւ համագործակցութեան բացակայութիւնը յաճախակի նշուող այլ հարց մըն էր բաց քննարկման բաժնի պատասխան-

ներուն մէջ: «Կը կարծեմ որ ցաւալի եւ անարդիւնաւէտ է, որ շատ մը հայկական կազմակերպութիւններ կանխորոշուած դատողութիւններ ունին այլ կազմակերպութիւններու նկատմամբ եւ սովորաբար միասին չեն աշխատիր», - կը գրէ Պոսթընէն մասնակցող մը՝ առաջարկելով, որ անոնք «պէտք է փորձեն միասին աշխատիլ եւ գործակցիլ. լաւ մարդիկ կան իրաքանչիւր կազմակերպութեան մէջ - անոնք պէտք է շփուին իրարու հետ»: Այս կապակցութեամբ, այլ Պոսթընցի մը կը գրէ, որ հարցախոյզին մէջ «եկեղեցւոյ եւ քաղաքական կուսակցութիւններու միասնականութեան մասին ոչ մէջ հարցում կայ», նիւթ մը՝ որ գերիշխող է սփիւռքի շատ մը համայնքներուն մէջ: «Պատասխանը չեմ գիտեր», - կը գրէ մասնակիցը, «Բայց մեծապէս մտահոգութիւն կը պատճառեն, երբ անոնք իրարու կը վնասեն», նշելով՝ որ հարցախոյզին մէջ պէտք է աւելցնել նաեւ այլ հարցում մը, թէ արդեօք «գոյութիւն ունեցող հայկական կազմակերպութիւնները կը կատարեն համայնքին հանդէպ ունեցած իրենց յանձնառութիւնները: Ես կ'ըսեմ՝ ՈՉ: Մեծ մասը տեղայնական է եւ տեսիլք չունի»:

Այլ մեկնաբանութիւններ կը ցուցնեն այս հիասթափութիւնը՝ համայնքային կազմակերպութիւններու եւ խմբաւորումներու ձախողութեան վերաբերեալ՝ համագործակցելու ու զիրար ընդունելու եւ տարբերութիւնները յարգելու առումով: Ոմանք կ'ակնարկեն իշխանութեան պայքարներու, իսկ ուրիշներ մտահոգուած են կողմերը իրար մօտ բերող տեսիլքի մը բացակայութեամբ: Բացի միասին աշխատելու փորձեր կատարելու առաջարկէն, այլ յատուկ առաջարկներ չկան: Նկատելի խնդրանք կայ ընդունելու համայնքներուն մէջ գոյութիւն ունեցող այլազանութիւնները, եւ ժառանգութեան արտայայտութեան համար որդեգրելու ոչ-աւանդական տարբեր ձեւեր:

Մեր նիւթին առնչուած այլ հարց մը կ'արծարծուի բազմաթիւ անձերու կողմէ, որոնք կ'առաջարկեն նաեւ, որ սեռային նախասիրութիւններու նկատմամբ վերաբերմունքը եւ հասկացողութիւնը ձեւով մը քննարկուին հարցախոյզին մէջ: Անոնք կ'ընդգրկեն. «ինչպիսի վերաբերումի կ'արժանանայ հայկական սփիւռքի միասնական (LGBT) համայնքը», կամ «ամուսնալուծում, միասնական ինքնութիւն», կամ ինչպէս մասնակցողներէն մէկը աւելի սուր կերպով կը դնէ հարցը. «ոչ մէկ հարցում սեռային կողմնորոշման մասին: 2018 թուականն է, մենք հոն ենք: Նոյնիսկ եթէ «վիճելի» է նիւթը, մենք պէտք է սկսինք հարցնելու: Եթէ մարդիկ խնդիր ունին, անոնք կրնան չպատասխանել: Ես միասնական եմ, եւ կ'ապրիմ այդ ինքնութեան անբաժանելիութիւնը իմ հայկականութենէս»:

2019-ի հարցախոյզին պարագային, հարցարանին մէջ աւելացած է հարցում մը միասնականութեան մասին (տե՛ս Հարցում 36-ը):

Այս գծով քանի մը աւելի երկար պատասխաններ յաւելեալ մտածումներ կ'ընդգրկեն ինքնութեան եւ ընդհանրապէս այն մասին, թէ ի՞նչ կը զգացուի միաժամանակ կապուած ըլլալ համայնքներու այլազան խաւերուն հետ՝ այդ մէկը տարբեր ժառանգութեամբ ծնողներ ունենալու, համայնքի հաստատութիւններուն մէջ օտարացած զգալու վիճակին, կամ վերստին՝ սեռային նախասիրութիւններու պատճառով: Պատասխանողներէն մէկը կու տայ ընկալունակ պատկերացում մը.

«Ես աւելի քան հպարտ եմ հայ ըլլալով: Պատասխաններս թերեւս այդ մէկը ցոյց չեն տար, բայց երբ ես այլ հայու մը հանդիպիմ, դէմքս կը փայլի եւ 1001 հարցումներ կու տամ մշակոյթի, ճաշի, մականունին մասին եւ այլն: Շուրջ 10 տարի առաջ, ես վճռած էի Հայաստան այցելել: Կը փնտռէի ինքնութիւնս (անտեսելով իմ միւս 1/2-ը, որ [X-Y] է), եւ երբ հայկական դրօշակ մը տեսնեմ՝ կը հրճուիմ: Ես կ'այցելեմ Ուոթըրթաունի (Մասաչուսեց) փութերը եւ ուտելիք կը բերեմ [X]-ին մէջ բնակող ընտանիքիս համար: Ես կը դիտեմ պատկերասփիւռի իւրաքանչիւր ներկայացում, վաւերագրական կամ սինեմայի ֆիլմ, որ Հայաստանի մասին ըսելիք ումի: Մայրս հպարտ է, որ հայ է, եւ ես կը կարծեմ, որ իբրեւ համայնք մենք մեծ ներուժ ունինք, բայց մեր մշակոյթը սկսած է մեռնիլ: Ես իսկապէս կ'ուզեմ այցելել երկիրը, բայց մտահոգ եմ ծախսերով, ապահովութեամբ, եւ բացայայտօրէն միասեռական տղամարդ մը ըլլալուս պատճառով»:

Ուրիշ անձ մը կը գրէ.

«Հայ ըլլալը միայն ծնունդով չէ, այլ ինքնութեամբ՝ ինչպէ՞ս անհատը ինքն իրեն կը ներկայացնէ: Ես ծնունդով հայ չեմ (մանուկ հասակին որդեգրուած է հայ ընտանիքի մը կողմէ), սակայն, ես հայերէն կը խօսիմ, կ'երգեմ երգերը, գիտեմ պատմութիւնները, կը պարեմ պարերը, ինչպէս գիտեն եւ կ'ընեն նաեւ իմ զաւակներս: Մենք պէտք է ողջունենք բոլոր անոնք, որոնք Կ'ԸՆՏՐԵՆ հայ ըլլալը. անոնք որոնք ոչ անպայման ֆիզիքապէս ունին հայու մը ծինային յատկութիւնները, այլ անոնք, որոնք իրենք զիրենք կը ներկայացնեն իբրեւ հայ, ներառեալ՝ նորածին որդեգիրներէն մինչեւ անոնք, որոնք կ'ընտրեն պսակուիլ մշակոյթին հետ: Եկէք ընդլայնենք մեր բնորոշումը եւ ընդունինք անոնք, որոնք ոչ անպայմանօրէն կը համապատասխանեն կաղապարին (իսլամ, շիկահեր/կապուտաչեայ, միասեռական եւ այլն)»:

Բնականաբար, սփիւռքի վերաբերեալ հարցախոյզի շրջագիծին մէջ, այս «բացակայող հարցումներուն» մեծ մասը այս կամ այն ձեւով կ'առնչուի ինքնութեան: Ինքնաքննարկող մասնակիցներ հարց կու տան. «հայ մշակոյթը ինչպէ՞ս ազդած է վրաս իբրեւ անհատ: Արդե՞ք միշտ դրական»: Սակայն ուրիշներ կ'արժարծեն հարցեր, որոնք ինքնութենէն անդին կը վերաբերին վարքի եւ վարմունքի, ինչպէս օրինակ, Փասատենայի մէջ մասնակիցի մը տուած հետեւեալ հարցը. «հայ տղամարդիկ ինչպէ՞ս կը վարուին հայ կիներուն հետ: Արդե՞ք հայ տղամարդիկ կը զգան, որ իրենք պէտք է իշխող, թունաւոր առնականութիւն արտաթորեն՝ տղամարդ զգալու համար: Ինչպիսի՞ վերաբերումի կ'արժանանայ հայկական սփիւռքի միասեռական համայնքը: Արդե՞ք հայ կիները ֆեմինիստ են: Արդո՞ք հայ տղամարդիկ ֆեմինիստ են»: Իսկապէս, 21-րդ դարուն, հարցարանէն անկախ, այս հարցերը լուրջ ուշադրութեան պէտք է արժանանան եւ հրապարակաւ քննարկուին համայնքներներուն մէջ:

Դոկտ. Միւզան Փաթին Հայկական Հիմնարկի հիմնադիր տնօրէնն է, դեկավարած է ՀՄՀ 2018-ի փորձառական հարցախոյզը եւ անդամ է ՀՄՀ-ի ակադեմական խորհրդատու յանձնախումբին:



7 | Մեթոտարանությունը

Հայկ Կիլոպետան

Հարցախոյզին տարածքը

2019-ի հարցախոյզը կազմակերպուած էր չորս երկիրներու հայկական համայնքներուն մէջ՝ Արժանթին (Պուէնոս Այրէսի, Ռոզարիոյի եւ Գորտոպայի մէջ); Լիբանան (Մեծն Պէյրութ, Ժիպէյլ, Չահլէ, Այնճար), Մոնրէալ, Գանատա (Մեծն Մոնրէալ, ներառեալ՝ Լաւալ եւ Սաութ Շոր), Ռումանիա (Պուխարեսթ, Քոնսթանցա, Պաքէու, Պոթոշանի, Եասսի, Կերլա, Քլուժ Նափոքա):

Հարցախոյզը կ'ընդգրկէր բոլոր անոնք, որոնք սովորաբար կը բնակին այս չորս համայնքներուն մէջ, եւ որոնք իրենք զիրենք հայ կը նկատեն, առանց «հայր» բնութագրող յաւելեալ սահմանափակումներու, ինչպէս՝ ծագում, ազգային պատկանելիութիւն, ինքնատրոյեգրում կամ ընտրութիւն: Հարցախոյզը բաց էր 16 տարեկան եւ անկէ վեր բոլոր մասնակցիլ փափաքողներուն:

Նմուշի ձեւաւորումը

Սփիւռքի համայնքներուն մէջ հարցախոյզերու իրականացման դիմաց առանձնայատուկ մարտահրաւեր մը կը նկատուի համապարփակ նմուշառման շրջագիծի մը բացակայութիւնը: Իերնց ապրած երկիրներու ընդհանուր բնակչութեան հետ բաղդատած սփիւռքիայերու փոքր տոկոսի առկայութիւնը կը դժուարացնէ նմուշի ձեւաւորման աւանդական շրջագիծերու օգտագործումը: Հայկական սփիւռքի համայնքներուն պարագային, նոյնիսկ զգալի հայ բնակչութիւն ունեցող քաղաքներուն եւ թաղամասերուն մէջ, հայերու տոկոսային համեմատութիւնը հազուադէպօրէն կ'անցնի 5%-ը: Այս ցած համեմատութիւնը անգործնական կը դարձնէ ընդհանուր բնակչութեան նմուշառման մօտեցումներու օգտագործումը՝ մասնակցողներ եւ հարցազրուցատուներ ապահովելու համար, օրինակ՝ տուներ այցելել կազմակերպելով պատահական շրջագայութիւններ:

Թղթեայ հարցաթերթիկը ցրուելու եւ հարցախոյզին առցանց բաժինը առաւելագոյն չափով ամոռջացնելու նպատակով, հետազօտական խումբերու անդամները կապ հաստատեցին տուեալ համայնքին հետ՝ եկեղեցիներուն, համայնքային կեդրոններու, հայկական ակումբներու, ձեռնարկներու, համայնքին բնաւի անդամներու, փառատօներու, դպրոցներու ճամբով եւ այլ ձեւերով: Հետազօտական խումբերու անդամները ճիշտ չխնայեցին ներգրաւելու հայկական սփիւռքի համայնքներու լայն ներկայացուցչութիւն մը՝ մերձենալով տարբեր տարիքի, տարբեր տնտեսական եւ աշխարհագրական ենթահող ունեցողներու եւ հայկական համայնքին հետ տարբեր մակարդակի կապեր ունեցող անձերու: Յատուկ ուշադրութիւն դարձուեցաւ ներգրաւելու համայնքի այն անդամները, որոնց ընտանիքները տուեալ երկիրը

ժամանած են իբրև ընտանիքի առաջին գաղթականները՝ հարցախոյզին մասնակցողները իրենք, անոնց ծնողները, մեծհայրն ու մայրը կամ առաջին սերունդները: Փորձեր կատարուեցան ներգրավելու նաև մարդիկ, որոնք կրնան գործունեայ չըլլալ համայնքին ներս: Համայնքային աւանդական եւ ընկերային ցանցերու լրատուամիջոցները օգտագործուեցան տեղական հետազօտական խումբերու կողմէ՝ հարցաթերթիկներու ամողջացացումը դիրացնելու համար:

Հարցարանի տարբերակներ

Հիմնական հարցարանը բաղկացած էր 50 հարցումէ: Երեք հարցումներու պարագային, պատասխաններու ընտրութեան տարբերակները յարմարցուած էին երկրին յատուկ պայմաններուն: Նաև, տեղական Խորհրդատու Մարմինները հարցարանին վերջաւորութեան աւելցուցած էին սահմանափակ թիւով հարցումներ՝ իրենց համայնքներուն ներքին հարցերը արտայայտելու համար: Գանատայի համար աւելացուած էր 5 հարցում (M51-M55), Արժանթինի համար՝ 2 (G51 եւ G52), Լիբանանի համար՝ 5 (L51-L55) եւ Ռումանիոյ համար՝ 2 (R51 եւ R52):

Թարգմանութիւն

Հարցարանը մշակուած, քննարկուած եւ վերջնական ձեւ ստացած էր անգլերէնով՝ իբրև սկզբնաղբիւր: Հիմնական հարցարանը ամբողջացնելէ ետք, անիկա պատշաճեցուած էր իւրաքանչիւր համայնքին՝ տեղական քաղաքական իրավիճակին եւ ընտրութիւններուն վերաբերող հարցումներուն պարագային: Իւրաքանչիւր համայնքի համար վերջնականացուած հարցարանը սկզբնաղբիւրէն թարգմանուած էր դաշտային աշխատանքներու լեզուներուն՝ արեւմտահայերէն, արեւելահայերէն, եւ համապատասխան հայկական համայնքներուն մէջ ամենէն աւելի օգտագործուող լեզուներուն՝ Ֆրանսերէն՝ Մեծն Մոնրէալի համար, արաբերէն եւ ֆրանսերէն՝ Լիբանանի, սպաներէն՝ Արժանթինի եւ ռումաներէն՝ Ռումանիոյ համար: Դաշտային աշխատանքները սկսելէ ետք, Մեծն Մոնրէալի մէջ կարիքը զգացուեցաւ արաբերէն հարցարաններու, եւ արաբերէն թարգմանութիւնը յարմարցուեցաւ ու աւելցաւ իբրև դաշտային աշխատանքի լեզու:

Թարգմանութիւնը կատարուեցաւ TRAPD ձեւի կիրարկումով՝ թարգմանութիւն, վերանայում, եզրայանգում, նախնական փորձարկում եւ փաստագրութիւն: Երեք հոգիէ բաղկացած խմբակ մը աշխատեցաւ սկզբնաղբիւրէն իւրաքանչիւր որոշուած լեզուի թարգմանութեան վրայ: Երկու թարգմանիչներ կատարեցին անկախ թարգմանութիւններ, որոնք հետագային ստուգուեցան իւրաքանչիւր երկրի հարցախոյզի ղեկավարին կողմէ: Թարգմանուած տարբերակներուն միջեւ անհամապատասխանութիւնները արձանագրուեցան առանձին թղթածրարի մը մէջ, եւ հարցախոյզին ղեկավարը, իբրև վճռող հեղինակութիւն, որոշեց օգտագործել թիւ 1 կամ թիւ 2 թարգմանութիւնը, կամ օգտագործել այլ ձեւակերպում մը: Թարգմանուած տարբերակները փորձարկուեցան նախքան դաշտային աշխատանքներու սկսիլը, նաև փոքր վերջնական սրբագրութիւնները կատարուեցան դաշտային աշխատանքները սկսելէ առաջ: Դաշտային այլ աշխատանքներու նիւթեր թարգմանուեցան օգտագործելով ուղղակի մէկ թարգմանութեան ձեւը:

Կառավարման եղանակը

Ամբողջացման համար հարցարանը հասանելի էր երկու միջոցներով՝ թղթեայ եւ առցանց: Թղթեայ հարցարանները տպուեցան եւ ցրուեցան հետազոտական խումբերուն կողմէ՝ դաշտային աշխատանքներուն համար ճշդուած չորս վայրերէն իւրաքանչիւրին մէջ: Անոնք հիմնականօրէն ցրուեցան հետազոտական խումբերուն կողմէ եւ նախատեսուած էին ամողջացուելու մասնակցողներուն կողմէ: Հետազոտական խումբին յանձնարարուած էր հարցարաններու ամբողջացման ընթացքին երաշխաւորելու գաղտնիութեան որոշ չափանիշներ՝ խուսափելու համար պատասխաններուն վրայ այլ մարդոց ազդեցութենէն: Այսուհանդերձ, հետազոտական խումբի անդամներուն յանձնարարուած էր օգնել երբ հարցարաններու ամողջացման եւ ղեկավարման ընթացքին հարցումներ ուղուէին: Գործնական գետնի վրայ, հարցարաններու ամբողջացման ընթացքին կարելի չէր ամբողջութեամբ խուսափիլ այլ մարդոց ազդեցութենէն, հետեւաբար, հարցարաններուն մէջ աւելցուած էր յատուկ հարցում մը՝ նշելու համար, թէ արդեօք հարցարանը ամբողջացուած է ռեւէ այլ անձի մը օժանդակութեամբ: Այս տեղեկութիւնը ներառնուած է տուեալներու արխիւին մէջ եւ կրնայ օգտագործուիլ՝ վերլուծելու համար այլ մարդոց ներկայութեան հաւանական ազդեցութիւնը հարցախոյզի տարբեր հարցումներու պատասխաններուն վրայ:

Առցանց դաշտային աշխատանք՝ համակարգչային յատուկ ծրագիրներու օգտագործում, տարբերակներ

Առցանց հարցումներուն համար օգտագործուեցաւ SurveyMonkey ծրագիրը: Նկատի առնելով որ հարցարանները կը տարբերէին երկրէ երկիր, իւրաքանչիւր երկրի եւ իւրաքանչիւր լեզուի համար ստեղծուեցաւ հարցարանի անջատ յղում մը: Ընդհանուր առմամբ ստեղծուեցան 17 առցանց հարցարաններ՝ 3 Ռումանիոյ համար (ռումաներէն, արեւելահայերէն եւ արեւմտահայերէն), 3 Արժանթինի համար (սպաներէն, արեւելահայերէն եւ արեւմտահայերէն), 5 Գանատայի համար (ֆրանսերէն, անգլերէն, արեւելահայերէն, արեւմտահայերէն, արաբերէն) եւ 4 Լիբանանի համար (անգլերէն, արեւմտահայերէն, արաբերէն, ֆրանսերէն):

Դաշտային աշխատանքներու թուականները

Սկզբնական ծրագիրը կը նախատեսէր դաշտային աշխատանքները սկսիլ 2019 Մեպտեմբերին եւ զանոնք աւարտել մինչեւ Նոյեմբերի կէտերը: Մեծն Մոնրէալի եւ Լիբանանի դաշտային աշխատանքները սկսան ինչպէս որ ծրագրուած էր 2019 Մեպտեմբերին: Սակայն, տեղական Խորհրդատու մարմիններուն հետ խորհրդակցելէ ետք, որոշուեցաւ Արժանթինի մէջ դաշտային աշխատանքը յետաձգել եւ խուսափիլ ազգային պետական տօներէն եւ սկսիլ 27 Հոկտեմբերին 2019-ին կայանալիք Ազգային ընտրութիւններէն առաջ, իսկ Ռումանիոյ պարագային, դաշտային աշխատանքները յառաջաձգուեցան համընկնելու դէպի Ս.Հաճկատար (Սուչավայի մէջ) ամէնամեայ կրօնական ուխտագնացութեան հետ, որ տեղի ունեցաւ 14 Օգոստոս 2019-ին:

Լիբանանի մէջ, զանգուածային ցոյցերու եւ քաղաքական անկայունութեան պատճառով, Հոկտեմբեր-Նոյեմբեր ամիսներուն դաշտային աշխատանքը ժամանակաւորապէս առկախուեցաւ երեք շաբաթով: Անոնք նաեւ ազդեցութիւն ունեցան Պէյրութէն դուրս

գտնուող վայրերու մէջ դաշտային աշխատանքներու կազմակերպման վրայ փոխադրութեան սահմանափակումներու պատճառով, որուն հետեւանքով Լիբանանի մէջ դաշտային աշխատանքը աւարտեցաւ շատ աւելի ուշ, եւ վերջին հարցարանները հաւաքուեցան 22 Դեկտեմբեր 2019-ին: Լիբանանի մէջ ուշացման պատճառով որոշուեցաւ առցանց հարցախոյզը՝ բոլոր լեզուներու եւ վայրերու տարբերակներով մատչելի պահել մինչեւ Լիբանանի մէջ դաշտային աշխատանքներու աւարտը:

Աղիւսակ 1. Դաշտային ուսումնասիրութեան թուականները

	սկիզբ	վերջ
Ռումանիա	14 օգոստոս 2019	19 նոյեմբեր 2019
Արժանթին	31 օգոստոս 2019	26 նոյեմբեր 2019
Մոնթրէալ	15 սեպտեմբեր 2019	30 նոյեմբեր 2019
Լիբանան	30 սեպտեմբեր 2019	22 դեկտեմբեր 2019

Նմուշին չափը

Բոլոր չորս վայրերուն մէջ, ընդհանուր 2,862 հարցարան հաւաքուեցաւ՝ ինքնալրացման եւ առցանց ամբողջացումներու միջոցով: Ասոնցմէ 165 հարցարաններ չեղեալ նկատուեցան եւ դուրս հանուեցան տուեալներու արխիւէն՝ տուեալներու մաքրութեան վերջնական հանգրուանին, եւ ներառնուած չեն տեղեկագրութեան եւ վերլուծումներուն մէջ՝ քանի մը պատճառներով:

• Մաս չեն կազմեր հարցախոյզին համար նկատի առնուած բնակչութեան

Կարգ մը ամբողջացուած հարցարաններու տէրերը մաս չէին կազմեր հարցախոյզին կողմէ սահմանուած բնակչութեան, մասնաւորաբար, հետեւեալներ պարագաները.

1. Գտնուիլ այն երկրին եւ վայրին մէջ, ուր տեղի կ'ունենար հարցախոյզը: Դաշտային աշխատանքներուն ընթացքին, մասնակցողներու ճշգրիտ բնակութեան վայրին վերաբերեալ խիստ պահանջներ չկային, բայց հարցախոյզին հետապնդած նպատակներէն մէկն էր ներկայացնել համայնքին պատկերը տուեալ պահու մը: Այն հարցարանները, որոնք ամբողջացած էին երկրէն դուրս բնակող անձերու կողմէ, ուսումնասիրութեան շրջագիծէն դուրս նկատուեցան եւ դուրս հանուեցան տուեալներու արխիւէն:

ա. Առցանց հարցարաններ. IP-ի վայրը: Ամբողջացած հարցարաններու IP-ի վայրը կը ճշդուի եւ կը պահուի SurveyMonkey- ին կողմէ: Տարբեր միջոցներով փորձեր կատարուեցան (Info by IP եւ Geo IP) ստուգելու համար գործածուող համակարգիչներու IP-ներուն վայրը, երկիրը: Անոնք, որոնք բացայայտօրէն ստուգուեցան իբրեւ ուսումնասիրուող երկրէն դուրս, նկատի չառնուեցան: Քիչ դէպքերու, IP-ի ստուգման տարբեր միջոցներ տարբեր պատասխաններ կու տային գտնուած երկրին վերաբերեալ, այդ պարագային, հարցազրոյցները պահուեցան տուեալներու արխիւին մէջ: Ընդհանուր առմամբ, 139 հարցազրոյցներ չեղեալ նկատուեցան, որովհետեւ IP-ները չէին համապատասխաներ հարցախոյզի երկիրներուն:

բ. Բոլոր հարցարանները: Հիմնուելով այժմու բնակութեան երկրին վերաբերեալ հարցումի պատասխաններուն վրայ, 17 հարցարաններ ցոյց կու տային, որ բնակութեան երկիրը տարբեր է այն երկրէն, ուր տեղի ունեցած էր հարցախոյզը, եւ առ այդ վերցուեցան տուեալներու արխիւէն:

2. Հարցախոյզը ընդգրկէր 16 եւ վեր բոլոր մասնակցողները: Տարիքի վերաբերող հարցումին հիմամբ, եօթը հարցարաններ ծննդեան թուական ճշդած էին 2004 (հինգ պարագայ) եւ 2005 (երկու պարագայ), եւ հետեւեալը՝ դուրս հանուեցան տուեալներու արխիւէն:

Աղիւսակ 2. Լրացուած հարցարաններու թիւը ըստ լեզուի եւ լրացման եղանակի

	Արեւմտա-հայերէն	Արեւելա-հայերէն	Անգլերէն	Ֆրանսերէն	Արաբերէն	Սպաներէն	Ռումաներէն	Քանակ
Արժանթին								
Առցանց	1	3				758		762
Առձեռն	0	14				109		123
Քանակ	1	17				867		885
Մոնթրեալ								
Առցանց	67	34	576	106	8			791
Առձեռն	118	12	64	28	9			231
Քանակ	185	46	640	134	17			1022
Լիբանան								
Առցանց	97		192	11	12			312
Առձեռն	133		53	7	41			234
Քանակ	230		245	18	53			546
Ռումանիա								
Առցանց	1	8					60	69
Առձեռն	0	10					165	175
Քանակ	1	18					225	244
Ընդհանուր	417	81	885	152	70	867	225	2697

Կրկնօրինակ հարցարաններ

Քիչ պարագաներու, պատասխանողներու IP-ները կրկնուած էին, ինչ որ ցոյց կու տար, որ առցանց հարցազրոյցները ամբողջացած էին նոյն վայրը: Կրկնուած IP-ներով բոլոր հարցազրոյցները աւելի մանրակրկիտ ստուգուելէ ետք, երկու հարցազրոյցներ դուրս հանուեցան տուեալներու արխիւէն, որովհետեւ ժողովրդագրական տուեալներու վերաբերեալ հարցարանի պատասխանները նոյնանման էին, ինչ որ ենթադրել կու տար, որ հաւանաբար, պատասխանողներ հարցարանը սխալմամբ երկու անգամ ամբողջացուցած են: Մնացեալ կրկնուած IP-ներու բոլոր պարագաներուն, երբ ժողովրդագրական պատասխանները տարբեր էին, հարցազրոյցները պահուեցան՝ ենթադրելով, որ անոնք կրնան ամբողջացուած ըլլալ տան տարբեր անդամներու կամ համացանցի նոյն աղբիւրը օգտագործող այլ անձերու կողմէ:

Ամբողջացած հարցարաններ ըստ վայրի եւ գործածուած լեզուի

Ընդհանուր 2697 ամբողջացած հարցարաններ վաւեր նկատուեցան եւ օգտագործուեցան վերլուծումի եւ տեղեկագրութեան համար: Ստորեւ տրուած ցուցակները կը նշեն

հարցարաններու թիւը ըստ ամբողջացման եղանակի եւ գործածուած լեզուի՝ հարցախոյզը ընդգրկած իւրաքանչիւր վայրի մէջ:

Տուեալներու արձանագրութիւն եւ մշակում

Թղթեայ եւ առցանց հարցարաններուն համար ստեղծուեցաւ տուեալներու միացեալ մէկ թղթածրար: Առցանց տուեալները՝ բոլոր լեզուներով եւ համայնքի վերաբերող հարցարաններու տարբերակներով, SurveyMonkey-էն փոխադրուեցան եւ մէկտեղուեցան մէկ թղթածրարի մէջ: Ամբողջացած թղթեայ հարցարանները լուսագրուեցան (scanned) տարբեր վայրերու մէջ, մինչ տուեալներու արձանագրութիւնը կը կազմակերպուէր կենդրոնացած դրութեամբ: Տուեալներու միացեալ շտեմարանը ստեղծուեցաւ SPSS-ի թուային ծրագրով:

Բացատրական ենթակայական պատասխանները ամբողջացման լեզուէն թարգմանուեցան անգլերէնի: Հիմնուելով անգլերէն պատասխաններուն վրայ, մշակուեցաւ համապատասխան թուային ծածկագրութիւն մը եւ պատասխանները ծածկագրուեցան ըստ այնմ: Տուեալներու վերջնական շտեմարանը կը պարունակէ երեք փոփոխականներ իւրաքանչիւր բացատրական ենթակայական հարցումի համար՝ բուն պատասխանը, անգլերէն թարգմանութիւնը եւ թուային ծածկագիր պատասխանը:

Տուեալներու կշռում (Weighting)՝ համապատասխանեցում

Տուեալներու կշռումը կամ ճշգրտութեան բարելաւումը կատարուեցաւ իւրաքանչիւր երկրի ծանօթ ընկերաժողովրդագրական տուեալներուն համաձայն՝ օգտագործելով համապատասխանեցումի *նիւ թեքնիքք*: Տուեալներու համապատասխանեցումը չկատարուեցաւ ըստ իւրաքանչիւր երկրի բնակչութեան կամ հայկական համայնքի թիւին:

• *Համապատասխանեցումի համար տեղեկութեան աղբիւրներ*

Հաւաստի տեղեկութիւն գոյութիւն չունի հարցախոյզի իւրաքանչիւր երկրին մէջ հայերու ընկերաժողովրդագրական տուեալներուն մասին, մասնաւորաբար տարիքի եւ սեռի բաժանումներուն վերաբերեալ: Համապատասխանեցումի գործընթացին համար որոշուեցաւ օգտագործել տարիքի եւ սեռի վերաբերող երկրին ընդհանուր տուեալները:

- Արժանթին**՝ Արժանթինի մարդահամար, 2010
- Գանատա**՝ Գանատայի մարդահամար, 2016
- Լիբանան**՝ Սի. Այ. Էյ-ի Համաշխարհային Փաստագիրք (Յուլիս 2020)
- Ռումանիա**՝ Ռումանիոյ մարդահամար, 2011

Նկատի առնելով որ իւրաքանչիւր երկիր իր մարդահամարը կը կատարէ տարիքային տարբեր խմբաւորումներով, եւ նկատի առնելով որ հարցարաններուն տարիքային բաժանումը միշտ չէ, որ կը համընկնէր մարդահամարի տուեալներուն մէջ նշուած տարիքին, անհրաժեշտ եղաւ տարիքային խումբերը համամասնօրէն գնահատել: Նաեւ տուեալները համապատասխանեցումի ենթարկուեցան իւրաքանչիւր շրջանի հայերու բնակչութեան հետ՝ հատուցելու համար հարցախոյզին անխուսափելի կեդրոնացումը

Խրաքանչիւր երկրի գլխաւոր քաղաքներուն վրայ: Այս մէկը չէր վերաբերեր Մոնրէալի մէջ կատարուած հարցախոյզին, որովհետեւ անիկա կ'ընդգրկէր միայն Մեծն Մոնրէալը, եւ ոչ ամբողջ Գանատան: Իւրաքանչիւր շրջանի հայերու բնակչութեան համապատասխանեցումը հիմնուեցաւ հայկական համայնքին ունեցած թիւի գնահատականներուն վրայ:

Աղիւսակ 3. Իւրաքանչիւր բաղադրիչի կշռուած եւ չկշռուած պատկերը

Տարիքային խումբ	Չկշռուած				Կշռուած			
	16-24	25-34	35-54	55+	16-24	25-34	35-54	55+
Արժանթին	8.4%	13.6%	44.0%	34.1%	18.9%	20.5%	33.2%	27.5%
Մոնթրէալ	9.1%	14.1%	33.3%	43.5%	13.3%	16.4%	34.4%	35.9%
Լիբանան	36.1%	18.7%	29.1%	16.1%	17.4%	20.0%	40.1%	22.5%
Ռումանիա	7.4%	11.5%	22.5%	58.6%	13.5%	16.8%	34.0%	35.7%
Ընդհանուր	14.2%	14.6%	35.0%	36.3%	16.0%	18.5%	35.1%	30.4%
	Չկշռուած							
Սեռ	Արական		Իգական		Արական		Իգական	
Արժանթին	49.8%		50.2%		49.0%		51.0%	
Մոնթրէալ	44.1%		55.9%		48.8%		51.2%	
Լիբանան	41.0%		59.0%		50.0%		50.0%	
Ռումանիա	46.7%		53.3%		48.8%		51.2%	
Ընդհանուր	45.6%		54.4%		49.1%		50.9%	

Համապատասխանեցումի գործօններ

Տուեալները համապատասխանեցումի ենթարկուեցան ըստ տարիքի, սեռի եւ շրջանի: Տարիքային փոփոխականը բաժանուեցաւ չորս խումբի՝ 16-24 տարեկան, 25-34, 35-54 եւ 55+: Սեռի համար օգտագործուեցան երկու խումբեր: Շրջանի գործօնի համար՝ հետեւեալը.

Արժանթին՝ Պուէնոս Այրէս Քաղաք, Պուէնոս Այրէսի Նահանգ, Ռոզարիա, Գորտոպա Քաղաք, եւ այլ քաղաքներ.

Գանատա՝ նկատի առնելով որ հարցախոյզը կենդոնացած էր Մոնրէալի մէջ, ոչ մէկ պատշաճեցում կատարուեցաւ Գանատայի շրջաններուն համար:

Լիբանան՝ Պէյրութ (քաղաք), Պուրճ Համուտ (եւ շրջակայք), Լեոնալիբանան, Այնճար եւ Զահլէ, Ժպէյլ եւ Պաթրուն, Թրիփոլի եւ այլ

Ռումանիա՝ Մոլտովա, Թրանսիլվանիա, Մունթենիա, Տոպրոկէա

Պատշաճեցումներու կրճատում

Որպէսզի սահմանափակուի քիչ թիւով բայց շատ մեծ համապատասխանեցումի վնասակար ազդեցութիւնը հարցախոյզի գնահատումներու տարբերակներուն վրայ, իւրաքանչիւր երկրին մէջ պատշաճեցումները սահմանափակուեցան առաւելագոյն 4-ով:

Աղյուսակ 4. Ձեռքբերում ռուսումնական մակարդակի կշռում և չկշռում պատկերը

Չկշռում							
Ձեռքբերում ռուսում							
Երկիր	Անաւարտ/նուազ քան երկրորդական ուսում	Երկրորդական կամ աւելի բարձր վկայական	Մասնագիտական կամ արհեստաւորի վկայական	Անաւարտ բարձրագոյն կամ անաւարտ համալսարանական ուսում	Պսակաւոր տիտղոս կամ անոր հաւասար	Մագիստրոսի տիտղոս	Դոկտորական կամ մասնագիտական տիտղոս (բժշկական, իրաւաբանական)
Արժանթին	1.7%	18.9%	15.3%	17.4%	34.0%	8.7%	4.0%
Մոնթրէալ	4.8%	12.4%	9.3%	14.8%	35.7%	17.1%	6.0%
Լիբանան	11.2%	17.2%	4.7%	12.9%	30.3%	18.9%	4.9%
Ռումանիա	0.8%	18.8%	4.2%	12.1%	35.6%	18.4%	10.0%
Ընդհանուր	4.7%	16.1%	9.9%	15.0%	34.0%	14.8%	5.5%
Կշռում							
Ձեռքբերում ռուսում							
Երկիր	Անաւարտ/նուազ քան երկրորդական ուսում	Երկրորդական կամ աւելի բարձր վկայական	Մասնագիտական կամ արհեստաւորի վկայական	Անաւարտ բարձրագոյն կամ անաւարտ համալսարանական ուսում	Պսակաւոր տիտղոս կամ անոր հաւասար	Մագիստրոսի տիտղոս	Դոկտորական կամ մասնագիտական տիտղոս (բժշկական, իրաւաբանական)
Արժանթին	1.4%	24.7%	20.1%	16.1%	25.3%	10.3%	2.1%
Մոնթրէալ	4.2%	11.6%	9.1%	16.1%	35.9%	17.2%	6.0%
Լիբանան	15.0%	13.7%	3.0%	10.3%	31.0%	20.8%	6.1%
Ռումանիա	0.4%	19.7%	3.4%	10.1%	33.6%	22.7%	10.1%
Ընդհանուր	5.1%	17.1%	11.0%	14.4%	31.2%	16.1%	5.1%

Համապատասխանեցումի շրջագիծերը

Ինչպէս վերը նշուեցաւ, գոյութիւն չունին վիճակագրական հաւաստի տեղեկութիւններ հայկական համայնքներու ընկերաժողովրդագրական կազմութեան վերաբերեալ: Որոշ պարագաներու, երկրին ազգային ընդհանուր մարդահամարի հրապարակած տեղեկութիւնները որոշ չափով լոյս կը սփռեն անոնց վրայ, որոնք վերջին մարդահամարին ժամանակ իրենք զիրենք կը ներկայացուցած են իբրեւ հայ, բայց այդ տեղեկութիւնը հազուադիւր է եւ հիմնուած է բնակիչներու ծագումի ներկայացման վրայ իբրեւ հայ, եւ ճշգրիտ թուային ծածկագրութիւն վրայ:

Երբ նկատի առնենք հարցախոյզը ամբողջացուցած մասնակցողներու դիմագիծը, հետաքրքրական է տեսնել, թէ ինչ առումով հայ համայնքի ներկայացուցիչները կը տարբերին հիւրընկալ երկրի ընդհանուր հանրային դիմագիծէն, եւ կը տարբերին երկրէ երկիր: Մասնակցողներուն աւելի քան 55% -ը (համապատասխանեցումով՝ 52% -ը) բարձրագոյն կրթութիւն ունի բոլոր չորս երկիրներուն մէջ՝ հաստատօրէն աւելի բարձր իւրաքանչիւր երկրի միջինէն: Մասնակցողներուն աւելի քան քառորդը (28% առանց

համապատասխանեցումի, 25% համապատասխանեցում) գործատեր կամ իրենց հաշույն աշխատողներ են, իսկ 53% -ը աշխատավարձով պաշտօնեայ (նոյնը համապատասխանեցումով), 5% -ը տան ծառայող ծնողներ կամ խնամատարներ, եւ 13 %-ը՝ լիաժամ զբաղած են ուսումով (16% համապատասխանեցում): Աշխատանքի տեսակետին (1), մասնակցողներուն մեծ մասը պաշտօնեաներ են (49% առանց համապատասխանեցումի, 46% համապատասխանեցում), 14% արհեստագետներ են եւ գիտարուեստի մասնագետներ (նոյնը համապատասխանեցում), 12% -ը կը զբաղի ծառայութիւններով եւ վաճառքով (13% համապատասխանեցում), 8% արհեստաւորներ են, եւ նոյն համեմատութեամբ՝ վարիչ-տնօրէններ, եւ 7% հոգեւոր պաշտօնեաներ (8% համապատասխանեցում): Գիւղատնտեսութեան, անտառային տնտեսութեան եւ ձկնորսութեան մարզերուն մէջ աշխատողները, գործարաններու եւ մեքենաներու վարպետները, եւ զինուորական ասպարէզի մէջ զտնուողները, իւրաքանչիւրը կը ներկայացնէ 0,5%-էն նուազ համեմատութիւն մը:

(1) Հիմնուած ենթակայական երկար պատասխաններու ծածկագրումին վրայ՝ ISCO դասակարգումով: Ծածկագրումի համար օգտագործելի էին աշխատանքի վերաբերող միայն 1986 ենթակայական բացատրական պատասխանները:

Աղիւսակ 5. Որակական հարցազրոյցներու չափանիշներն ու սահմանուած քանակը

Չափանիշ	Հարցազրոյցներու նպատակային նուազագոյն քանակը	Կատարուած հարցազրոյցներու թիւը			
		Արժանթին	Մոնթրէալ	Լիբանան	Ռումանիա
Տարիք / սեռ					
16-30 արական	4	5	2	5	5
16-30 իգական	4	3	2	6	4
31-50 արական	4	7	7	6	4
31-50 իգական	4	7	9	5	4
51+ արական	4	5	2	6	6
51+ իգական	4	3	2	4	7
Սերունդներ					
1 ^{ին} սերունդ	4	12	14	10	2
2 ^{րդ} սերունդ	4	5	10	13	4
3 ^{րդ} և աւելի վաղ սերունդ	4	12	0	9	24
Համայնքային ներգրաւածութիւն (ինքնասահմանուած անձին կողմէ)					
Ներգրաւուած	13	21	12	15	22
Չներգրաւուած	13	9	12	17	8
Կուսակցական պատկանելիութիւն					
Ոչ կուսակցական	չճշրուած	23	19	20	30
Դաշնակցական		6	5	10	0
Ռամկավար		1	-	1	0
Հնչակեան		-	-	1	0
Ասպարէզ					
Աշխատաւոր	չճշրուած	1	1	2	3
Արհեստաւոր		2	1	3	7
Մասնագետ		1	8	4	1
Վարիչ/ Արհեստավարժ		26	14	15	19

Անգործ/թոշակառու/ աշակետ/տանտիկին		-	-	8	-
Ուսում					
Բարձրագոյն	չճշդուած	23	21	21	25
Նուազագոյն		7	3	11	5
Կրօն					
Հայ Առաքելական	չճշդուած	17	22	23	21
Կաթողիկէ		3	2	4	3
Այլ Քրիստոնէայ		-	-	5	5
Ոչ Քրիստոնէայ		10	-	-	-
Հայերէնի իմացութիւն					
Սահուն	չճշդուած	13	19	25	4
Միջին մակարդակ		12	5	4	7
Ոչ հայախօս		5	-	3	19

Մասնակցողներու դիմագիծին կազմութիւնը կրնայ ըլլալ արդիւնքը նմուշառման մօտեցումին, եւ պայման չէ, որ ամբողջովին ներկայացնէ հայ համայնքին նկարագիրը:

Հարցախոյզին զուգահեռ կազմակերպուած էր որակական դաշտային աշխատանք մը: Խորքային հարցազրոյցներու ուղեցոյցը քննարկուեցաւ ՀՄՀ-ի Ակադեմական Խորհրդատու Մարմնին հետ եւ վերջնական ձեւի բերուեցաւ ՀՄՀ-ի անձնակազմին կողմէ (տե՛ս էջ ...): Իւրաքանչիւր երկրի մէջ, հետագօտող մը խորքային հարցազրոյցներ ունեցաւ հայ համայնքի անդամներուն հետ: Իւրաքանչիւր համայնքէն ներս նախատեսուած էր 25-էն 30 հարցազրոյց: Թեկնածուները ճշդուեցան եւ հարցազրոյցները կազմակերպուեցան հետեւեալ բաժանումներով, որոնք անհրաժեշտ նկատուեցան հետագօտութեան հիմնական տեղեւորութիւններու հաւաքման համար՝ տարիք, սեռ, գաղթական սերունդի բնորոշում, եւ յանձնառութիւնը (կամ անոր բացակայութիւնը) համայնքային կեանքի նկատմամբ: Քանի մը այլ գործօններ նոյնպէս նկատուած էին կարեւոր, բայց թիրախներ չէին ճշդուած անոնց համար՝ քաղաքական կուսակցութիւններու պատկանելութիւնը, աշխատանք/աշխատանքի տեսակը, կրթութեան մակարդակը, դաւանանքը եւ հայերէնի օգտագործումը: Թիրախները ճշդուած էին իւրաքանչիւր չափանիշի համար ապահովելու գրուցատուներու նուազագոյն թիւ մը, եւ ոչ թէ իւրաքանչիւր խմբաւորումի բնակչութեան համեմատ համամասնական ներկայացուցչութիւն մը:

Բաժինները ճշդուած էին իբրեւ ցանկալի եւ ճիգ թափուեցաւ նախատեսուած բաժինները իրականացնելու համար, սակայն, չորս սեղմ բաժիններու առկայութիւնը՝ թեկնածուներ գտնելու սահմանափակ կարելիութիւններով, գործնական չէր: Կարգ մը երկիրներու մէջ որոշ թիրախներ չիրականացան՝ համայնքէն ներս չափանիշներուն համապատասխանող շատ քիչ թիւով մարդոց գոյութեան պատճառով, միացած՝ կարեւոր այլ ճակատագրական չափանիշներու, ինչպէս յանձնառութիւնը համայնքային կեանքի նկատմամբ, օրինակ՝ Արժանքին գաղթած առաջին սերունդը:

Հարցազրոյցները ձայնագրուեցան գրուցատուներուն հաւանութեամբ:

Դոկտ. Հայկ Կիլգայեան հետագօտութեան մեթոդներու ՀՄՀ-ի խորհրդատուն է եւ մաս կը կազմէ ՀՄՀ ակադեմական խորհրդատու յանձնախումբին:

8 | Հարցախոյզի արդիւնքները

*Ժողովրդագրական տեղեկութիւնները աղիւսակներու վերնագիրներուն մէջ տրուած են. 50-րդ հարցումին բաց պատասխանները յաջորդող էջերուն մէջ տրուած չեն («Ի՞նչ հարցում կը բացակայի այս հարցարանէն: Եւ ի՞նչ կը պատասխանէիք անոր»): Չետեաբար՝ հարցերու թիւերու յաջորդականութեան մէջ որոշ բացեր կան:



armenian
Diaspora
survey

Միևնույն Հետազոտական Ծրագիր
studiu privind Diaspora Armeană

armenian
diaspora
survey

Միևնույն Հետազոտական Ծրագիր

Studiu privind diaspora armeană

...colecta informații în scopul...
...este de a strânge informații despre...
...dvs. vor fi utile cercetătorilor, profesorilor și organizațiilor armenii și/sau de origine armeană, ne-ar face plăcere să...
...participarea la Studiul privind Diaspora Armeană.

...sunt și vor rămâne anonime.
...surși corecte sau greșite la niciuna dintre întrebări.
...continuauți până la sfârșitul sondajului. Puteți trece peste întrebările la care nu doriți să...
...chestionarele completeate vor fi puse la dispoziție pe un site dedicat Studiului, pentru profesori și...
...ri în formă agregată și anonimă. Nu va fi posibil să identificați respondenții individuali.
...este de a ne asigura că o mare varietate de armeni participă la studiu în fiecare or...
...div femei și bărbați, tineri și bătrâni, activiști și lideri, precum și pe cei care se pot sir...

...rite țări și care s-au răspândit dintr-un centru im...
...turi familiale, instituționale sau comerciale.
...ca fiind apartinători, unde există...
...um ar fi biserică, școli și club...

gândurile despre identitate, cul


ni

Diaspora armeniană

Միևնույն Հետազոտական Ծրագիր

Studiu privind diaspora armeană


ՀԱՐՏՈՒՄ 1. Հետեւեալներէն ո՞ր մէկը լաւագոյնս կը նկարագրէ ինչպէս կը բնութագրէք դուք ձեզ: Հաճեցէք միայն մէկ պատասխան ընտրել:



ՀԱՐՏՈՒՄ (single code)	Ընդհանուր	ՀԱՄԱՅՆՔ				ՏԱՐԻՔ			
		ԱՐԺԱՆԱՅԻՆ	ԳԱՆԱՏԱԿ	ԼԻԲԱՆԱՆՑ	ՌՈՒՄԱՆԱԿ	16-24	25-34	35-54	55+
ՀԱՐՏՈՒՄ 1. Հետեւեալներէն ո՞ր մէկը լաւագոյնս կը նկարագրէ ինչպէս կը բնութագրէք դուք ձեզ: Հաճեցէք միայն մէկ պատասխան ընտրել::	BASE=2674								
BASE	NOT VALID=23	877	1015	541	241	427	495	941	811
	%	%	%	%	%	%	%	%	%
1. Հայ	29	15	45	18	32	20	25	32	31
2. Արժանաւարտ/ Գանատացի/ Լիբանանցի/ Ռումանացի	3	7	1	1	4	5	4	2	3
3. Հայ-արժանաւարտ/գանատացի/ -լիբանանցի/-ռումանացի	24	12	28	40	13	19	24	23	27
4. Արժանաւարտ/ Գանատացի/ Լիբանանցի/ Ռումանացի-Հայ	14	13	9	22	20	18	13	15	11
5. Հայ ծագումով Արժանաւարտ/ Գանատացի/ Լիբանանցի/ Ռումանացի	23	45	12	13	16	26	29	20	22
6. Կես հայ կամ մասամբ հայ	2	2	3	1	6	3	3	3	1
7. Ընտրութեամբ հայ	2	5	0	0	3	8	1	1	1
8. Այլ []	3	1	4	5	6	2	2	4	4
Ընդհանուր	100	100	100	100	100	100	100	100	100

ՀԱՐՏՈՒՄ (single code)	Ընդհանուր	ՍԵՌ		ԵՂԱՆԿ		ՍԵՐՈՒՆԴ		
		Արական	Իգական	Աղջակ	Առձեռն	Դուռ	Ծնող մը	Մեծ ծնող/ Լախորդ սերունդ
ՀԱՐՏՈՒՄ 1. Հետեւեալներէն ո՞ր մէկը լաւագոյնս կը նկարագրէ ինչպէս կը բնութագրէք դուք ձեզ: Հաճեցէք միայն մէկ պատասխան ընտրել::	BASE=2674							
BASE	NOT VALID=23	1316	1358	1962	712	533	577	1430
	%	%	%	%	%	%	%	%
1. Հայ	29	28	29	26	35	54	33	17
2. Արժանաւարտ/ Գանատացի/ Լիբանանցի/ Ռումանացի	3	3	3	3	5	1	3	3
3. Հայ-արժանաւարտ/գանատացի/ -լիբանանցի/-ռումանացի	24	21	27	22	28	24	33	21
4. Արժանաւարտ/ Գանատացի/ Լիբանանցի/ Ռումանացի-հայ	14	14	13	15	12	6	12	18
5. Հայ ծագումով Արժանաւարտ/ Գանատացի/ Լիբանանցի/ Ռումանացի	23	24	23	27	13	7	16	33
6. Կես հայ կամ մասամբ հայ	2	3	2	3	0	2	2	3
7. Ընտրութեամբ հայ	2	3	1	2	1	0	0	3
8. Այլ []	3	4	3	2	6	6	1	3
Ընդհանուր	100	100	100	100	100	100	100	100



ՀԱՐՑՈՒՄ 2. Ի՞նչ միջոցներով կը սահմանեք ձեր հայկական ինքնությունը: Հաճեցե՞ք ընտրել առաւելագոյնը երեք միջոց՝ կարեւորագոյնները ըստ ձեզի:



ՀԱՐՑՈՒՄ - (multiple code) ՀԱՐՑՈՒՄ 2. Ի՞նչ միջոցներով կը սահմանեք ձեր հայկական ինքնութիւնը: Հաճեցե՞ք ընտրել առաւելագոյնը երեք միջոց՝ կարեւորագոյնները ըստ ձեզի:	Ընդհանուր BASE=2697	ՀԱՄԱՅՆՔ				ՏԱՐԻՔ			
		ԱՐԺԱՆԹԻՆ	ԳԱՆԱՏԱ	ԼԻՔԱՆԱՆ	ՌՈՒՄԱՆԻԱ	16-24	25-34	35-54	55+
BASE	NOT VALID=29	885	1022	546	244	430	499	947	821
	%	%	%	%	%	%	%	%	%
1. Ընտանիք	68	73	63	77	74	59	71	71	69
2. Հայլեզու	59	33	80	21	26	60	56	63	56
3. Հայ մշակոյթ (ուսելիք, պար, երաժշտութիւն, եւայլն)	46	51	47	44	35	56	57	47	33
4. Համայնքային գործունէութիւն	27	27	26	24	42	32	31	22	28
5. Յեղասպանութիւն	25	32	24	22	10	34	20	23	25
6. DNA/արիւն/ ծինային կերտուածք	24	36	18	0	29	27	31	24	19
7. Հպարտութիւն հայոց պատմութեամբ	23	23	26	20	19	22	20	24	24
8. Քրիստոնէական ժառանգութիւն եւ հաւատք	23	14	26	15	33	13	18	26	27
9. Սերտ ընտանեկան կապեր,տոհմ	10	11	13	6	6	8	12	9	11
10. Հայաստանի Հնրպ. գործուն յարաբերութիւն երկրի ու ժողովուրդի հետ	9	7	11	8	7	14	8	8	7
11. Կապ պատմական Հայաստանի հետ	7	7	8	6	2	5	8	7	7

ՀԱՐՑՈՒՄ - (multiple code) ՀԱՐՑՈՒՄ 2. Ի՞նչ միջոցներով կը սահմանեք ձեր հայկական ինքնութիւնը: Հաճեցե՞ք ընտրել առաւելագոյնը երեք միջոց՝ կարեւորագոյնները ըստ ձեզի:	Ընդհանուր BASE=2697	ՍԵՌ		ԵՂԱՆԱԿ		ՍԵՐՈՒՆԴ		
		Արական	Իգական	Աղանց	Առձեռն	Դուռն	Շնող մը	Մեծ ծնող/ Լախորդ սերունդ
BASE	NOT VALID=29	1325	1372	1979	718	538	580	1437
	%	%	%	%	%	%	%	%
1. Ընտանիք	68	67	69	68	68	63	64	74
2. Հայլեզու	59	57	61	60	57	78	70	49
3. Հայ մշակոյթ (ուսելիք, պար, երաժշտութիւն, եւայլն)	46	45	48	54	26	35	46	52
4. Համայնքային գործունէութիւն	27	32	23	28	24	21	27	29
5. Յեղասպանութիւն	25	26	24	28	15	25	23	26
6. DNA/արիւն/ ծինային կերտուածք	24	25	23	28	13	17	26	28
7. Հպարտութիւն հայոց պատմութեամբ	23	23	23	24	20	22	27	20
8. Քրիստոնէական ժառանգութիւն եւ հաւատք	23	19	25	19	31	30	25	19
9. Սերտ ընտանեկան կապեր, տոհմ	10	10	10	11	8	13	12	8
10. Հայաստանի Հնրպ. գործուն յարաբերութիւն երկրի ու ժողովուրդի հետ	9	11	6	9	7	13	8	8
11. Կապ պատմական Հայաստանի հետ	7	9	5	8	3	6	9	6



ՀԱՐՑՈՒՄ 3. Ձեր ընկերներուն մտաւորապէս ո՞ր համեմատութիւնը հայ է:



ՀԱՐՑՈՒՄ - (single code)	Ընդհանուր	ՀԱՄԱՅՆՔ				ՏԱՐԻՔ			
ՀԱՐՑՈՒՄ 3. Ձեր ընկերներուն մտաւորապէս ո՞ր համեմատութիւնը հայ է:	BASE=2679	ԱՐԺԱՆՈՒՆ	ԳԱՆԱՏԱ	ԼԻԲԱՆԱ	ՌՈՒՄԱՆԱ	16-24	25-34	35-54	55+
BASE	NOT VALID=18	881	1013	542	243	430	497	941	811
	%	%	%	%	%	%	%	%	%
1. Ոչ մէկը	6	15	1	0	4	10	7	5	3
2. Քիչեր	23	32	16	9	56	23	27	22	23
3. Շուրջ կէսը	20	23	18	17	22	24	21	20	16
4. Մեծամասնութիւնը	44	29	55	62	15	35	39	45	50
5. Բոլորը	8	2	11	13	3	8	6	7	9
Ընդհանուր	100	100	100	100	100	100	100	100	100

ՀԱՐՑՈՒՄ - (single code)	Ընդհանուր	ՍԵՌ		ԵՂԱՆԱԿ		ՍԵՐՈՒՆԴ		
ՀԱՐՑՈՒՄ 3. Ձեր ընկերներուն մտաւորապէս ո՞ր համեմատութիւնը հայ է:	BASE=2679	Արական	Իգական	Աղցանց	Առձեռն	Դուռ	Ծնող մը	Մեծ ծնող/Նախորդ սերունդ
BASE	NOT VALID=18	1317	1363	1964	715	534	577	1432
	%	%	%	%	%	%	%	%
1. Ոչ մէկը	6	6	5	7	2	0	3	9
2. Քիչեր	23	20	26	24	23	11	19	29
3. Շուրջ կէսը	20	22	18	23	12	11	23	22
4. Մեծամասնութիւնը	44	46	42	42	50	63	47	35
5. Բոլորը	8	6	9	5	14	15	8	5
Ընդհանուր	100	100	100	100	100	100	100	100

ՀԱՐՑՈՒՄ 4. Գալով ձեր հայ ընկերներուն, անոնց ո՞ր համեմատութիւնը արմատներով ձեր շրջանէն է:





ՀԱՐՑՈՒՄ - (single code) ՀԱՐՑՈՒՄ 4. Գալով ձեր հայ ընկերներուն, անոնց ո՞ր համեմատութիւնը արմատներով ձեր շրջանէն է:	Ընդհանուր BASE=2654	ՀԱՄԱՅՆՔ				ՏԱՐԻՔ			
		ԱՐԺԱՆԹԻՆ	ԳԱՆԱՏԱ	ԼԻԲԱՆԱՆ	ՌՈՒՄԱՆԻԱ	16-24	25-34	35-54	55+
BASE	NOT VALID=43	873	1004	535	242	428	495	936	794
	%	%	%	%	%	%	%	%	%
1. Ոչ մէկը	14	25	6	9	12	19	15	12	11
2. Քիչեր	25	29	20	21	33	24	29	22	24
3. Շուրջ կէսը	14	9	19	13	16	9	14	14	18
4. Մեծամասնութիւնը	32	17	40	42	32	29	25	33	37
5. Բոլորը	7	3	9	10	4	6	5	9	6
6. Կիրարկելի չէ իմ պարագայիս/ Կարեւոր չէ	9	17	5	5	4	12	12	10	4
Ընդհանուր	100	100	100	100	100	100	100	100	100

ՀԱՐՑՈՒՄ - (single code) ՀԱՐՑՈՒՄ 4. Գալով ձեր հայ ընկերներուն, անոնց ո՞ր համեմատութիւնը արմատներով ձեր շրջանէն է:	Ընդհանուր BASE=2654	ՍԵՐ		ԵՂԱՆԱԿ		ՄԵՐՈՒՆԴ		
